

Ե, ԱՍԼԱՆՅԱՆ ԵՎ Մ. ՍԵՂՈՎԱՆՅԱՆ

ԳԻՆԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ
ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Հ Ա Պ Ե Տ Հ Ր Ա Տ

663-2

8564

U-73

Угундундун т.

Үзүткөрдүнүн кр.

Синтүтүтүт.

512.

17/11

13/11

137

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՐ ՀՈՂԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅՈՒՆ
ԱՅԳԵԳՈՐԾԱԿԱՆ ՊՏՂԱԲՈՒԾԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

663.2
Ա - 73

ԱՍԼԱՆՅԱՆ Ե. ԵՎ, ՍԵՂՐԱԿՅԱՆ Մ.

ՍՏՈՒԿՎԱԾ Է 1957 Ք.

ԳԻՆԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

~~8564~~



II
1980
A

Министерство Земледелия Арм. ССР Управление
Виноградарства и плодоводства

АСЛАНЯН Е. и СЕДРАКЯН М.

ОСНОВЫ ВИНОДЕЛИЯ

(На армянском языке)

Ереван, Армгиз, 1946

ԱՌՍՋԱԲԱՆ

ՍՍՌ Միության ժողովուրդների և Համ Կ (բ) Պ Կենտրոնական Կոմիտեի՝ «Հայկական ՍՍՌ-ում պտղաբուծությունը, խաղողաբուծությունը և տեխնիկական կուլտուրաները զարգացնելու ձեռնարկումների մասին» 1940 թ. սեպտեմբերի 6-ի որոշման և ՀԿ(բ) Պ Կենտկոմի ամենօրյա դեկավարման շնորհիվ Սովետական Հայաստանի կոլխոզնիկները և ստալտանովայանները իրենց հերոսական պայքարով ոչ միայն ավելացնում են խաղողի ալգոներին տարածությունը, այլև բարձրացնում են նրանց բերքատվությունը: Խաղողագործության անշեղ զարգացումը խաշոր չափով գարկ է տալիս նաև գինեգործությանը:

Սովետական Հայաստանի կլիմայական պայմաններում աճում և բարձր որակի բերք են տալիս խաղողի ոչ միայն տեղական, այլ և եվրոպական սորտերը: Այդ սորտերից կարելի է պատրաստել առաջնակարգ բունդ, դեսերտ և սեղանի գինիներ:

Հայկական ՍՍՌ-ի Հողագործության Մինիստրության Այգեգործական-պտղաբուծական վարչության համանախարհային ձեռնամուխ լինելով սույն աշխատությանը, հեղինակներն իրենց առաջ խնդիր են դրել մատչելի ձևով տալ հերթական սերիայով ռացիոնալ գինեգործության հիմունքները և դրանով օժանդակել մեր կոլխոզներին ու սովխոզներին՝ տիրապետելու ընտիր գինիներ պատրաստելու արվեստին:

Սույն աշխատությունն ընդգրկում է խաղողի վերամշակման և հաղցուի խմորման նետ կապված հարցերը:

Սույն աշխատությունը գրելիս հեղինակները լայն չափով օգտվել են պրոֆեսոր Մ. Գերասիմովի վերջերս Մոսկվայում հրատարակված «Ինեգործություն» գրքից:

Աշխատանքը եղինակներին միջև բաշխված է եղել հետևյալ կերպ.

«Գինիների գառակարգումը», «Սպիրտային խմորումը»,

«Սեղանի կարմիր գինու պատրաստելը», «Սեղանի սպիտակ գինու
պատրաստելը» գլուխները գրել է Ն. Ստյանյանը:

«Խաղողի բաղադրությունը և բաղադրիչ նյութերի ազդե-
ցությունը գինու որակի վրա», «Խաղողի բերահավաքը», «Գի-
նեգործական շենքերը և նրանց կահավորումը», «Գինեգործական
ամաններն ու նրանց խնամքն ու նախապատրաստումը», «Ծծրմ-
բային գազի կիրառումը գինեգործության մեջ» գլուխները
գրել է Մ. Սեգրակյանը:

1. ԳԻՆԻՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

Նաղդղի գինիի ասելով հասկացվում է այն խմիչքը, որը ստացվում է սպիրտային խմորման միջոցով թարմ կամ թափաժած խաղողի հյութից (բայց ոչ չամչից): Արտադրվում են զանազան տեսակի գինիներ, որոնք տարբերվում են իրարից գույնով, համով, արոմատով, բուսականությամբ, սպիրտի, շաքարի և ածխածնի քանակով և մի շարք այլ հատկանիշներով: Գույնը, սպիրտի, շաքարի և ածխածնի քանակը գինիների դասակարգման գլխավոր հատկանիշներն են հանդիսանում: Ըստ գույնի գինիները հիմնականում լինում են՝ սպիտակ, վարդագույն և կարմիր: Սպիտակ գինիները պատրաստվում են սովորաբար խաղողի սպիտակ սորտերից, երբեմն նաև կարմիր սորտերից: Երիտասարդ սպիտակ գինիները բաց գույնի են, հնացման ընթացքում՝ նրանք ընդունում են ավելի մուգ գույն: Վարդագույն և կարմիր գինիները պատրաստում են սև խաղողից, ինչպես նաև սև ու սպիտակ խաղողների խառնուրդից: Կարմիր գինիներն ունեն ուռբինի գույն, երիտասարդ հասակում մանիշակագույն երանգավորումով, հին գինիների գույնը աստիճանաբար փոփոխություն ենթարկվելով, դառնում է աղյուսակարմիր գույնի:

Սպիրտի և շաքարի պարունակություն տեսակետից գինիներն ընդունված է ստորաբաժանել հետևյալ խմբերի՝

- ա) սեղանի գինիներ.
- բ) թունդ գինիներ.
- գ) դեսերտ կամ քաղցր գինիներ:

Սեղանի գինիներն—ստացվում են քաղցուղի լրիվ խմորման ենթարկելու միջոցով և ունենում են մինչև 14 աստիճան: Թնդություն: Այս գինիները համարյա շաքար չեն պարունակում, կամ պարունակում են շատ աննշան քանակությամբ: Սեղանի այն գինիները, որոնց թնդությունը կազմում է 8⁰-ից մինչև 11⁰, կոչվում են սեղանի թույլ գինիներ:

ՍՍՌՄ-ում բարձր որակի սեղանի գինիներ ստացվում են Հյուսիսային Կովկասում, Վրաստանում: Հայկական ՍՍՌ-ում սեղանի համեմատաբար թույլ գինիներ ստացվում են Միկոյանի, Կոտայքի, Նոյեմբերյանի շրջաններում:

Թունդ գինիներ — ունենում են 18—20⁰ թնդություն և որոշ քանակությամբ նաև շաքար: Այն թունդ գինիները, որոնց քաղցրությունը հասնում է մինչև 3⁰/₀-ի, կոչվում են թունդ, չոր գինիներ, բարձր քաղցրության դեպքում գինիներն անվանում են թունդ կիսաքաղցր, թունդ քաղցր, նայած շաքարի քանակին: Թունդ գինիների շարքին են պատկանում՝ խերեսը, մագերան, պորտոլեյնը և այլն: Մեզ մոտ, Հայկական ՍՍՌ-ում բարձրորակ գինիներ՝ արտադրվում են Աշտարակի, ~~Բերկաշի~~ Էջմիածնի, Հոկտեմբերյանի, Արտաշատի շրջաններում: Լավ թունդ գինիներ ստացվում են նաև Արիմում:

Դեպքս գինիներ—կոչվում են այն գինիները, որոնց մեջ շաքարի քանակը հասնում է մինչև 20—30⁰/₀-ի, օրինակ, մուսկատ գինին: Ընդհանրապես, դեպքս գինիների քաղցրությունը 16⁰/₀-ից ցածր չի լինում: Շատ քաղցր գինիներն անվանում են լիկյորային: Դեպքս գինիները լինում են տարբեր թնդության, սակայն նրանց թնդությունը սովորաբար 16⁰-ից բարձր չի լինում: Ընտիր դեպքս գինիներ արտադրում են Արիմում և Հայաստանում:

Փրփրուն գինիներ—կոչվում են այն գինիները, որոնք 4-6 աթմոսփեր ճնշման տակ պարունակում են իրենց մեջ մեծ քանակությամբ լուծված ածխածին գազ, որի շնորհիվ գինին փրփրում է: Տիպիկ փրփրուն գինի է շամպայնի գինին: Փրփրուն գինիներն ունենում են մինչև 12⁰ թնդություն. նրանց քաղցրությունը տարբեր է լինում և կախված է գինու մարկայից: Մեզ մոտ, Սովետական Միությունում, բարձրորակ շամպայնի գինիներ արտադրում են Աբրաու-Դյուրսում¹, Ռոստովում, Վրաստանում:

Դինու տիպը բնորոշվում է խաղողի սորտով, կլիմայական և հողային պայմաններով, տեղի բարձրությունով ու նրա ռելյեֆով, գինու պատրաստման տեխնոլոգիայով և մի շարք այլ պայմաններով:

¹ Աբրաու-Դյուրսոն գտնվում է Սև ծովի արևելյան ափին, Նովորոսիյի քաղաքից մոտ 23 կմ հեռու:

Աբրաու-Դյուրսոն արևազերեն նշանակում է—բրաու—«անդունդ», դյուրսո—գորգ սու բառից է, որ նշանակում է «չորս աղբյուր»:

Ընդհանրապես, այգեգործական հյուսիսային շրջաններում, որտեղ քիմիական համեմատաբար քիչ շաքար է պարունակում, արտադրում են սեղանի թե՛ սպիտակ և թե՛ կարմիր գինիներ, ընդհանրապես կլիմայի, հարավային շրջաններում, որտեղ խաղողը բարձր քաղցրությամբ չունի է ունենում, արտադրում են գլխավորապես թանաք և գեսերյա գինիներ:

II. ԽԱՂՈՂԻ ԲԱՂԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԲԱՂԱԴՐԻՉ ՆՅՈՒԹԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԳԻՆՈՒ ՈՐԱԿԻ ՎՐԱ

Սաղարից ասյն հիմնական նյութն է, որից պատրաստվում է գինիներ: Չինոսը տիպն ու որակը մեծ չափով կախված է խաղողի որակից ու նրա հատկություններից: Այդ պատճառով, յուրաքանչյուր գինեգործից պահանջվում է, որպեսզի նա լավ և մանրազնիին կերպով առևտրականորեն ու ծանոթ լինի խաղողի ողկույզի տարբեր մասերի մեխանիկական ու քիմիական կազմին և դրա հիմնական կարողանա խաղողը նպատակահարմար ձևով վերամշակել և բարձր որակով գինի պատրաստի:

Ողկույզ.—Սաղողի ողկույզը լինում է տարբեր ձևով՝ գլանաձև, կոնաձև, գլանակոնաձև, ճյուղավորված և այլն: Ողկույզի ձևը հիմնականում կախված է խաղողի սորտից: Տարբեր սորտերը ողկույզի տարբեր ձև ունեն: Օրինակ, խարջու ողկույզը կարճ գլանաձև է մեկ կամ երկու թևով, շաֆեինը՝ հիմնականում ճյուղավորված է. ողկույզներն ունենում են տարբեր մեծություն, որը առաջանում է լայն սահմաններում: Կան ողկույզներ, որոնց քաշը միջին թվով կազմում է 80—100 գրամ, բայց պատահում են և ողկույզներ, որոնք կշռում են 2—3 կիլոգրամ և ավելին: Ստվարաբույր միջին մեծություն ունեցող ողկույզի քաշը հավասար է 200—250 գրամի: Ըստ խտության ողկույզը լինում է՝ շատ խիտ, խիտ, ցանցառ և շատ ցանցառ: Ստույթունը կախված է գլխավորապես խաղողի սորտից: Օրինակ, խարջին, շերշիրան շատ խիտ ողկույզ ունեն, իսկ շաֆեին՝ շատ ցանցառ: Ողկույզը բաղկացած է պտուղներից (գիւաններից) և շանչից:

Չանչ.—Ողկույզի ասյն մասը, որի վրա տարբեր ձևով դասավորված են պտուղները, կոչվում է շանչ: Տերեվների և արմատների մեջ պատրաստված սննդանյութերը շանչի միջով են անցնում պտուղների մեջ:

Չանչի տոկոսը ողկույզի մեջ տարբեր է և կախված է մեջ-
շարք պայմաններից՝ սորտից, կլիմայական ու հողային պայ-
մաններից, բերքահավաքի ժամանակից և այլն: Միջին հաշվով
չանչը կազմում է սմբողջ ողկույզի քաշի $2-4\%$ -ը:

Չանչը բաղկացած է ջրից և չոր նյութերից: Չուրը կազ-
մում է չանչի ընդհանուր քաշի միջին թվով $65-80\%$: Խակ, լավ
չհասունացած խաղողի չանչը ջուր շատ է պարունակում, ընդ-
հակառակը, լրիվ հասունացած, մանավանդ գերհասունացած
խաղողի չանչի մեջ ջրի տոկոսը համեմատաբար ցածր է լինում:
Չոր նյութերից՝ չանչի մեջ ամենից շատ թագանթանյութն է
գտնվում: Բայի այդ, չանչը պարունակում է նաև քիչ քանա-
կույթյամբ այլ նյութեր, որոնցից կարևոր նշանակություն ու-
նեն տանինը ($1-3\%$) և օրգանական թթուները ($2-10\%$): Թե-
պետ այդ նյութերը չանչի մեջ վտրբ քանակություն են
կազմում, սակայն որոշ դեպքերում դրանք գինու որակի վրա
խոշոր ազդեցություն են թողնում: Չանչի ազդեցությունը գինու
վրա այնքան ուժեղ է արտահայտվում, որքան նա երկար ժա-
մանակով քաղցուղի հետ շփում է ունենում: Օրինակ, եթե պտուղ-
ները չանչի հետ միասին մամլում են, կամ եթե քաղցուղի չան-
չի մասնակցություն են խմորում, ապա չանչի ազդեցությունը
լինում է ուժեղ: Այս դեպքում գինին տոխ, կոպիտ, բայց համե-
մատաբար դիմացկուն, կայուն է լինում: Կանաչ չանչը մեծ
քանակությամբ ջուր պարունակելու շնորհիվ քաղցուն նաբուր-
նում է, որի հետեվանքով գինին $0,5-1\%$ -ով պակաս թնշություն
է պարունակում: Բացի այդ, գինին չանչի համ է ունենում:
Բերքահավաքի ժամանակ, ցանկալի է, որ չանչը հասունացած
լինի:

Ընդհանրապես, սացիոնալ հիմքերի վրա դրած գինեգար-
ծարաններում, որպես կանոն, պտուղները չանչերից հոտուակ
չանչազտիչ մեքենաներով զատում են և խաղողը վերամշակում ու-
սանց չանչի:

Պտուղ.— Պտուղները ողկույզի ամենակարելի մասն են
հանդիսանում, քանի որ նրանց մեջ է պարունակվում հյութը, որից
գինի և այլ պրոդուկտներ են պատրաստում: Պտուղները կազմում
են ողկույզի ընդհանուր քաշի $95-98\%$ -ը: Խաղողի պտուղները
լինում են տարբեր ձևի՝ գնդաձև, ձվաձև, երկարավուն և այլն: Ըստ

գունի պտուղը լինում է՝ սպիտակ, վարդագուն, սև, մոխրագուն։ Տարբեր սորտեր ունենում են տարբեր մեծության պտուղներ։ Գինու սորտերի պտուղներն ընդհանրապես լինում են շատ հյութալի։ Խաղողի պտուղը կազմված է մաշկից, մսահյութից և կորիզներից։ Իրանցից յուրաքանչյուրը, նայած իր կազմին, պատրաստվող գինու վրա թողնում է նշանակալից ազդեցություն։

Մաշկ.—Մաշկը պտղի պաշտպանող մասն է հանդիսանում։ Միջին թվով մաշկը կազմում է ամբողջ պտղի քաշի 5—10 տոկոսը։ Մաշկը բաղկացած է ջրից և չոր նյութերից։ Զուրը կազմում է մոտ 60—80 տոկ։ Չոր նյութերից կարևոր նշանակություն ունեն՝ դաբադանյութերը, ներկանյութերը, արոմատիկ նյութերը, օրգանական թթուները։ Տարբեր սորտերի մոտ այդ նյութերի քանակը տարբեր է լինում։

Ներկանյութերը հանդես են գալիս մաշկի մեջ խաղողի հասունացման ընթացքում։ Սովորական ջերմության պայմաններում այդ նյութերը դժվար են լուծվում, սակայն բարձր ջերմաստիճանը զգալիորեն նպաստում է դրանց լուծվելուն։ Ներկանյութերը լավ են լուծվում սպիրտի մեջ, հենց դրանով է բացատրվում այն, որ լամորման ընթացքում այդ նյութերը մաշկից քաղցուրի մեջ հեշտություն մը են անցնում։ Ներկանյութերը օդում օքսիդանում են, որից հետո դառնում են անլուծելի։ Իրանով է բացատրվում, որ չորացած սև խաղողից հնարավոր չէ լավ գունավոր գինիներ պատրաստել։ Սեվ սորտերից մի քանիսը ներկանյութեր են պարունակում նաև մսահյութի մեջ։ Օրինակ, ֆրանսիական տենայուրի սորտը։ Այդ սորտերի հյութը ներկված է, այդ պատճառով դրանց «ներկարար» են անվանում։ Իրանցից սպիտակ գինի չի կարելի ստանալ։ Մաշկը գինուն հաղորդում է խաղողի սորտի հատուկ արոմատը։ Մաշկը վճռական դեր է խաղում կարմիր և որոշ չափով թունդ ու գեւերա գինիներ պատրաստելու ժամանակ, մնացած դեպքերում մաշկի դերն այնքան էլ մեծ չէ։

Մսահյութ.—Մսահյութը պտղի ամենակարևոր մասն է։ Նա կազմում է պտղի քաշի 85—98⁰/₁₀₀-ը։ Մսահյութի բաղադրությունը շատ բարդ է, կախված է սորտից և մի շարք ուրիշ պայմաններից։ Բացի ջրից, որի քանակը հասնում է 70—80⁰/₁₀₀-ի, մսահյութը պարունակում է շաքար (գլյուկոզա, ֆրուկտոզա), օրգանական թթուներ (գինեթթու, խնձորաթթու, սաթաթթու և

այլն), ազոտային նյութեր, հանքային աղեր, եթերային յուղեր, ճարպային նյութեր և այլն: Այդ նյութերից ամենակարեւորներն են՝ շաքարը և թթուները: Թված նյութերի քանակը մասնյուծի մեջ կախված է հողից, կլիմայական պայմաններից, սորտից, ազոտեխնիկայից, բերքահավաքի ժամանակից և այլ պայմաններից: Շաքարը մասնյուծի մեջ սկզբում քիչ է լինում, հետո աստիճանաբար ոկսում է ավելանալ: Պտղի զարգացման սկզբնական շրջանում գլյուկոզան գերակշռում է, պտղի լրիվ ֆիզիոլոգիական հասունացման ժամանակ գլյուկոզայի և ֆրուկտոզայի քանակը հավասարվում է, իսկ դերհասունացած խաղողի մեջ ֆրուկտոզան գլյուկոզայից շատ է: Արտադրական նպատակների համար գործածվող խաղողի մասնյուծը պարունակում է 18—40 $\frac{0}{100}$ շաքար, 4—12 $\frac{0}{100}$ թթուներ: Մասնյուծը տանին չի պարունակում և քաղցուն այդ նյութը ստանում է մաշկից, կորիզներից և չանչից:

Կորիզ. — Գինեգործութան մեջ կորիզներն ընդհանրապես չնչին դեր են խաղում: Կորիզները կազմում են պտղի քաշի 2—4 $\frac{0}{100}$ -ը: Բացի ջրից և թաղանթանյութից, կորիզները պարունակում են յուղ (10—20 $\frac{0}{100}$), տանին (5—8 $\frac{0}{100}$), քիչ քանակութեամբ ցնդող ճարպաթթուներ և այլ նյութեր: Կորիզը, շնորհիվ իր ամուր կառուցվածքի, խաղողի վերամշակման ժամանակ ընդհանրապես չի ջարդվում, ուստի և անգուրեկան համ չի հաղորդում քաղցուին: Գինու վրա կորիզներն ուժեղ ազդեցություն են թողնում, երբ դրանք քաղցուի մեջ են մտնում և խմորման պրոցեսին մասնակցում: Այս դեպքում կորիզի արտաքին մասում գտնված տանինը լուծվում և անցնում է խմորվող հեղուկի մեջ, որի պատճառով վերջինս հարստանում է տանինով: Դրա պատճառով տախլ, կոպիտ և համեմատաբար դառը գինի է ստացվում: Այս նկատառումներով է, որ յուրաքանչյուր գինեգործ շատ զգուշ պետք է լինի, որպեսզի սպիտակ նուրբ գինիներ պատրաստելիս կորիզները քաղցուի մեջ չանցնեն և չհաղորդեն նրան տախլություն և գառնություն:

III. ԽԱՂՈՂԻ ԲԵՐՔԱՅԱՎԱՔԸ

1. ԽԱՂՈՂԻ ՀԱՍՈՒՆԱՅՈՒՄԸ

Գինեգործական աշխատանքները սկսվում են խաղողի բերքահավաքով: Ստացվելիք գինու քանակն ու որակը կախված

է խաղողի հասունացման աստիճանից: Խաղողի պտղի հասունացումն ունի երեք շրջան: Առաջին շրջանը՝ խաղողի պտղի աճեցողութեան շրջանը, որը սկսվում է ծաղկի բեղմնավորումից և տևում է մինչև պտղալիցքը. երկրորդ՝ խաղողի պտղի հասունացման շրջանը, որը սկսվում է պտղալիցքից և տևում է մինչև խաղողի ֆիզիոլոգիական լրիվ հասունացումը. երրորդ՝ պտղի գերհասունացման շրջանը, որը սկսվում է ֆիզիոլոգիական լրիվ հասունացումից և տևում է մինչև բերքահավաքի ավարտվելը:

Պտղի աճեցողութեան շրջանում շվերի աճեցողութունն աստիճանաբար սկսում է թուլանալ, դրա փոխարեն սկսում են ուժեղ աճել ու մեծանալ պտուղները: Առաջին շրջանում պտուղը կանաչ է և վաղի մյուս կանաչ ծրգանների պես ասիմիլացիա է կատարում: Նա արագորեն հարստանում է տարբեր նյութերով և առաջին հերթին օրգանական թթուներով, հատկապես խնձորաթթվով և ապա գինեթթվով: Ավելանում է նաև դարադանյութերի քանակը: Շաքարը պտղի մեջ չնչին քանակութուն է կազմում (1⁰/₁₀): Այս շրջանում պտուղը շատ թթու և խիստ տոխլ համ ունի:

Պտղի հասունացման շրջանում շվերի աճեցողութունը համարյա կանգ է առնում և սննդանյութերի մեծ մասն ուղղվում է դեպի հասունացող պտուղները: Ողիւլայն սկսվում է ավելի լցվել ու պարզորոշվել, պտուղը իր ամուր և կանաչ դրութունից աստիճանաբար փոխվում է և վերջիվերջո փափուկ ու հյութալի դառնում և սորտին համապատասխան գույն ընդունում: Հասունացման ընթացքում աստիճանաբար ավելանում է շաքարի քանակը, մինչդեռ օրգանական թթուներն ու դարադանյութերը պակասում են:

Խաղողը պարունակում է երկու տեսակ շաքար՝ գլյուկոզա և ֆրուկտոզա: Սկզբում դերակշռում է գլյուկոզան, ապա խաղողի հասունանալուց սկսած աստիճանաբար ավելանում է ֆրուկտոզան. պտղի լրիվ հասունացման ժամանակ այդ երկու շաքարների քանակը համարյա հավասարվում է:

Ամերիկյան մի քանի սորտեր, բացի գլյուկոզայից և ֆրուկտոզայից, պարունակում են նաև որոշ քանակով կոֆեինաշաքար:

Խաղողի հասունացումը, շաքարի և թթուների առաջացման պրոցեսները շատ բարդ են: Խաղողի հասունացման սկզբին

ԹԹՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ աստիճանաբար սկսում է պակասել, իսկ քաղցրուժեթյունն ավելանալ: Այս երեւոյթը տեղի է ավել մարդկանց կենթադրելու, որ շաքարն առաջանում է օրգանական թթուների քայքայումից (Լիբրին): Սակայն պարզված է, որ այս կարծիքը սխալ է. ընդհակառակը, տեղի է ունենում համարյա հակառակ պրոցես: Շաքարն առաջանում է վաղի կանաչ մասերում, գըլ-խափորապես տերեւների մեջ, ասիմիլացիայի շնորհիվ: Նախ առաջանում է օսլա, իսկ օսլան որոշ ֆերմենտների ազդեցութեան տակ դառնում է շաքար, որը և տեղափոխվում է պտղի մեջ: Խաղողի հասունացման ընթացքը կախված է հողային և կլիմայական պայմաններից, ինչպես նաև լույսից, ջերմութեանից, խոնավութեանից և մի շարք այլ ազդակներով: Դրա համար պահանջվում է սկզբից հոգ տանել, որ այդ պայմանները դրական կերպով ազդեն խաղողի հասունացման վրա:

Խաղողի հասունացումը գործնականում որոշելու համար առաջնորդվում են նրա մեջ եղած թթուների և շաքարի քանակի որոշմամբ: Թթուների և շաքարի քանակի որոշ հարաբերական դրութեան ստեղծելուց հետո, խաղողը համարվում է հասունացած:

Խաղողի հասունացումը ընտրողում են երկու կերպ. առաջին՝ խաղողի ֆիզիոլոգիական հասունացում, երբ պտղի մեջ գտնվող շաքարն աստիճանաբար ավիլանալով հասնում է մաքսիմումի և այլևս չի ավելանում, կորիզը հասունացած է և ընդունակ է ծլելու: Երկրորդ՝ տեխնիկական (արդյունաբերական) հասունացում, երբ խաղողն իր շաքարի և թթվութեան պարունակութեամբ միանգամայն համապատասխանում է այս կամ այն առաջադրված պրոդուկտը պատրաստելու պահանջներին: Ֆիզիոլոգիական հասունացումը հաճախ համընկնում է տեխնիկական հասունացման հետ, սակայն երբեմն կարող է նրանից առաջ կամ հետ ընկնել: Խաղողի վերամշակողներին հատկապես հետաքրքրում է խաղողի տեխնիկական հասունացումը: Եթե խաղողի լրիվ ֆիզիոլոգիական հասունացման ժամանակ խաղողը չեն քաղում և թողնում են որոշ ժամանակ վաղի վրա, նա գերհասունանում է: Այդ շրջանում պտուղը վաղից ջուր չի ըստանում, սակայն շարունակում է իր մեջ եղած ջուրն աստիճանաբար գործընթացից, որի շնորհիվ նրա հյութը խտանում է,

շաքարի և ազոտանյութերի հարարերական քանակն ավելանում է, սակայն բացարձակ քանակը պակասում է: Շաքարի որոշ մասը ծախսվում է պտուղների շնչառութեան և այլ պրոցեսների վրա: Գերհասունացած խաղողից ընտիր դեսերտ գինիներ են պատրաստում: Պաղողի բերքահավաքը պետք է կատարել ժամանակին, այլապես շուտ կամ ուշ հավաքելու դեպքում, շաքարի կորուստ ենք ունենում և համեմատաբար ցածր որակի գինի ենք ստանում: Բերքահավաքի ժամանակը որոշելիս հաշվի են առնում գինու տիպը:

Բերքահավաքը ժամանակին և կանոնավոր սկսելու համար անհրաժեշտ է նախ և առաջ որոշել խաղողի հասունացման աստիճանը: Պաղողի հասունացումը որոշում են երկու եղանակով, առաջին՝ արտաքին տեսքով և երկրորդ՝ արեոմետրիկ ու քիմիական եղանակով: Արտաքին տեսքով խաղողի հասունացումը որոշելն ամենից տարածված եղանակն է: Փորձված այգեգործն առանց սխալվելու կարող է խաղողի հասունացումը որոշել նրա արտաքին տեսքով:

Հասունացած խաղողի արտաքին նշաններն են՝

1. Պտուղը կորցնում է քլորոֆիլի հատիկները, սպիտակ սորտերի պտուղները դառնում են թափանցիկ, նրանց մաշկը լինում է կանաչ-դեղնագույն կամ դեղնաոսկեգույն, կարմիր սորտերի պտուղներն ընդունում են բնութագրվող մուգ կարմիր շողշողուն գույն:

2. Պտղի մաշկը բարակում է և հեշտ է անջատվում մասնաթից. պտուղը ձեռքով սեղմելիս հյութը պտղից հեշտութեամբ դուրս է հոսում և հյութի քաղցրութեան շնորհիվ, ձեռքի մատներն իրար են կպչում:

3. Պտուղները պտղակոթունից շատ հեշտ են անջատվում, իսկ մասնաթիվը՝ կորիզից:

4. Չանհն ամբողջութեամբ կամ մասամբ փայտանում է և դառնում շագանակագույն, գորշ դեղնագույն կամ կարմրագույն երանգավորումով:


5. Պտուղը կամ նրանից ստացված քաղցուն ունենում է սորտի յուրահատուկ համը և արոմատը:

2. ԽԱՂՈՂԻ ՇԱՔԱՐԻ ՔԱՆԱԿԸ ՈՐՈՇԵԼԸ

Բերքահավաքի ժամկետը որոշելու գլխավոր ցուցանիշը խաղողի հասունացման աստիճանն է: Պաղողի հասունա-

ցումը և այդեքադի սկիզբը ճիշտ որոշելու համար, անհրաժեշտ է որոշել խաղողի մեջ ներառված շաքարի և թթուների քանակը: Շաքարը սովորաբար որոշում են տարբեր շաքարաչափերի (արեոմետրերի) միջոցով, իսկ թթուները՝ տիտրացիայի միջոցով, այսինքն հյուսթը հիմքով չեղոքացնելու միջոցով: Խաղողի հաստունությունը որոշելու համար որոշ ժամանակում սխտեմատիկ կերպով 2—3 օրը մեկ անգամ, պետք է առանձին հողամասերից պահանջված ձևով խաղողի նմուշ վերցնել: Այդուց խաղողի նմուշ վերցնելը և այդ խաղողի հասունացման մասին ճիշտ կարծիք տալը բավական բարդ ու լուրջ խնդիր է, որովհետև անգամ միևնույն վազի վրա, հասունացման նույն ֆազայում, տարբեր ողկույզներ տարբեր քաղցրություն և թթվություն են ունենում: Օրինակ, մեծ ողկույզներն ավելի պակաս քաղցրություն ունեն, քան նույն պայմաններում եղած միջակ ու փոքր ողկույզները: Նույնը կարելի է ասել նաև հողի մոտ և արելահար ողկույզների մասին: Հողի մոտ գտնված նորմալ արևոտ ողկույզներն ավելի շաքար են պարունակում, քան արևահարվածները: Այդ պատճառով նմուշ վերցնելիս պետք է լինել վերին աստիճանի զգույշ, աշխատանքը կատարել հմտորեն, մաքուր և խնամքով:

Վերցված խաղողի միջին նմուշը պետք է արտահայտի այս գու խաղողի ճիշտ պատկերը: Դրա համար անհրաժեշտ է այգիին աչքով բաժանել մի քանի տերիտորիալ մասերի, քաշելով երկվազայական խաչաձև գծեր, ապա մի շարք վազերից վերցնել նմուշը և որոշել նրա շաքարի ու թթուների քանակը: Վերցված խաղողը ձեռքով, կամ հատուկ ձեռքի մամուլով ջարդում են (տարում են): Ավելի նպատակահարմար է ձեռքի մամուլով արորելը, որովհետև այս դեպքում խաղողի հյուսթը դուրս է հոսում ոչ թէ միայն պտուղների արտաքին շերտերից, այլ նաև ներսի շերտերից: Պտղի մասնաթի արաքին և ներսի՝ մասերում քաղցուն միատեսակ բաղադրությունն չունի: Արտաքին մասում շաքարն ավելի շատ է լինում, քան պտղի կենտրոնական մասում, իսկ թթուների քանակն, ընդհակառակը՝ կենտրոնական



Նկ. 1. Փորձատկան պտուտակավոր մամուլ

մասում ավելի բարձր է, քան պտղի արտաքին մասերում: Մամլելուց ստացված քաղցուն լինում է պղտոր, նրա մեջ կախված վիճակում գտնվում են կարծր մասնիկներ, որոնց ներկայութունը խանգարում է քաղցուի շաքարը ճիշտ որոշելուն: Քաղցուն այդ նյութերից անջատելու համար, անհրաժեշտ է քամել ֆիլտրի թղթով կամ հասարակ մաուլայով և ապա նոր անալիզ կատարել:

Քաղցրութունը որոշելու համար հետազոտվող քաղցուն լցնում են ապակյա գլանի մեջ, այնպես որ փրփուր չառաջանա: Դրա համար պետք է քաղցուն լցնել գլանի պատերով, իսկ եթե փրփուր է առաջանում, ապա անհրաժեշտ է այն հեռացնել ֆիլտրի թղթով, այլապես նա կխանգարի արեոմետրի ցուցմունքները ճիշտ կերպով որոշելուն: Գլանն իր հերթին պետք է լինի մաքուր: Գլանը պետք է դնել հարթ ու անշարժ պատվանդանի վրա: Այս բոլորը կատարելուց հետո շաքարաչափը կամ արեոմետրը շատ զգուշությամբ իջեցնում են քաղցուի մեջ և արձանագրում նրա ցուցմունքը: Արեոմետրերը լինում են տարբեր տեսակի և տարբեր սխեմաներով: Ամենից տարածվածը և նպատակահարմարը Դյուեթարդեն-Մալերոնի շաքարաչափն է: Սա ապակյա մի գործիք է, վերևում ունի նեղ պարանոց (շկալա), որի վրա նշանակված են հեղուկի խտութունը ցույց տվող 1035—1170 թվանշանները, իսկ ներքեվի լայն մասի մեջ տեղավորված է մի ցերմաչափ: Շաքարաչափի ներքեվի լայն մասը վերջանում է ապակյա գնդիկով, որի մեջ լցված է սնդիկ՝ արեոմետրին հավասարակշռութուն տալու համար:

Արեոմետրը գործածելիս պետք է կիրառել հետևյալ հիմնական կանոնները.

1. Շաքարաչափն ու գլանը շատ մաքուր պետք է լինեն:
2. Գլանը գործածելուց առաջ պետք է ողողել հետազոտվող քաղցրով:
3. Հետազոտվող քաղցուն պետք է լինի վերին աստիճանի վճիտ ու ղերժ խմորման հետքերից, եթե նկատվում են անխաթթու գազի հետքեր, ապա այն հեռացնելու համար պետք է քաղցուն տաքացնել 70—90° C-ի:
4. Շաքարաչափը քաղցուի մեջ սուզել շատ զգուշությամբ և զանգաղ, որպեսզի նա չկպչի գլանի պատերին և նրա պարա-

նոցի հեղուկի մակերեսից գտնված մասը չթրջվի, այլապես ցուցմունքները կարող են սխալ լինել:

5. Քաղցուով լցված գլանը դնել հարթ, ամուր և լուսավոր տեղ:

6. Հետազոտվող քաղցուն գլանի մեջ չպետք է փրփուր առաջացնի, վերջինս նկատվելու դեպքում պետք է հեռացնել ֆիլտրի թղթով:

7. Շաքարաչափի ցուցմունքների հետ պետք է գիտել նաև հետազոտվող քաղցուի ջերմությունը և համապատասխան ուղղումներ կատարել համաձայն երկրորդ աղյուսակի:


Առաջնորդվելով վերոհիշյալ կանոններով՝ քաղցուի շաքարանյութը պիտի որոշել հետևյալ ձևով՝ հետազոտվող քաղցուն լցնում են լավ մաքրած ասպակյա գլանի մեջ մինչև նրա ամբողջ տարողության $\frac{1}{5}$ մասը, ասպա նրա մեջ զգուշութամբ սուղում են շաքարաչափը և գիտում նրա խտությունը ցույց տվող թվանշանները: Շաքարաչափը քաղցուի մեջ սուզելուց հետո, աչքը պետք է պահել հեղուկի ճիշտ մակերեսին հավասար բարձրության վրա, որտեղ հեղուկը կպչելով շաքարաչափի պարանոցին, կաղմում է մի կիսալուսնաձև պատկեր, որը մենիսկ է կոչվում (նկ. 3) Քաղցուի շաքարի



Նկ. 2. Արեոմետր քանակը որոշում են նրա խտությունով և գլան:

համաձայն առաջին աղյուսակի: Հայտնի է, որ մեկ լիտր մաքուր ջուրը կշռում է միջին թվով 1000 գրամ, իսկ 96° սպիրտը՝ 794 գրամ, 17 $\frac{0}{10}$ շաքար պարունակող քաղցուն՝ 1075 գրամ և այլն:

Սաղողի հյութի մեջ գլխավոր նյութը շաքարն է, որը խաղողի հասունանալու ընթացքում աստիճանաբար ավելանում է,



Նկ. 3 Մենիսկ: Ինչպես գիտել շաքարաչափի ցուցմունքը:


հետևապես բարձրանում է քաղցուի խտությունը: Որքան ավելի թանձր է քաղցուն, այնքան շատ է նրա միջի շաքարը, դրա համար էլ շաքարաչափը քաղցուի մեջ ավելի քիչ է ընկղմվում, քան մաքուր ջրի մեջ: Շաքարաչափի միջոցով հնարավոր է տարբեր քաղցրություն ունեցող լուծույթներ պատրաստել ($1\frac{0}{10}$, $2\frac{0}{10}$ և այլն): Գյուժարդեն-Սալերոնի շաքարաչափի պարանոցի վրա եղած թվանշանները ցույց են տալիս քաղցուի խտությունը (մեկ լիտր հեղուկի կշիռը արտահայտված գրամներով): Խտությունն իմանալով, առաջին աղյուսակի օգնությամբ հնարավոր է գտնել շաքարի $\frac{0}{10}$ -ը: Քանի որ խաղողի քաղցուն, բացի շաքարից, պարունակում է նաև ուրիշ նյութեր, ուստի շաքարաչափեր պատրաստելիս այդ հանգամանքը հաշվի են առնում:

Հեղուկի խտությունը որոշելիս չպետք է հաշվել կիսալուսնաձև մենիսկի վերեվում եղած երկու սուր ծայրերից, այլ պետք է հաշվել հեղուկի մակերեսին հավասար մենիսկի տակից:

Հեղուկի խտությունը որոշելուց հետո պետք է գտնել նաև նրա ջերմաստիճանը: Շաքարաչափն այնպես է պատրաստված, որ նա ճիշտ է ցույց տալիս միայն 15° C-ի պայմաններում: Հայտնի է, որ միեվնույն հեղուկի ծավալը բարձր ջերմաստիճանում մեծանում է, իսկ խտությունը փոքրանում և ընդհակառակը: Հենց դրա համար էլ, եթե հետազոտվող հեղուկի ջերմությունը $+15^{\circ}$ -ից ավելի է, ապա զիտվող ջերմությանը համապատասխան թիվն ավելացնում են շաքարաչափի ցույց տված թվին, իսկ $+15^{\circ}$ C-ի ցածր լինելու դեպքում, նույն ձևով պակասեցնում են: Այդ ուղղումները կատարելու համար օգտվում են երկրորդ աղյուսակից:

Առաջին աղյուսակը ոչ միայն ցույց է տալիս քաղցուի խտությունն ու շաքարի $\frac{0}{10}$ -ը, այլ նաև այդ քաղցուից ստացվելիք գինու թնդության աստիճանը (ծավալային $\frac{0}{10}$ -ներով):

8558
50865
A 19805



Դյուժարդեն-Սալիբոնի արեւմտեի համար

Արեւմտեի գուցմունքը (մեկ վարդ բաղրուի կէիւր դրամներով 150 Շ-ի)	Շաբաթի քանակը տոկոսներով	Շաբաթի քանակը դր/լիտր	Աղալազ քինու Քնդու- Քյունը (աստիճանը)	Արեւմտեի գուցմունքը (մեկ վարդ բաղրուի կէի- ւր դրամներով 150 Շ-ի)	Շաբաթի քանակը տո- կոսներով	Շաբաթի քանակը դր/լիտր	Ապագա քինու Քնդու- դու Քյունը (աստիճանը)
1035	6,3	63	3,7	1070	15,6	156	9,2
1036	6,6	66	3,9	1071	15,9	159	9,3
1037	6,9	69	4,0	1072	16,2	162	9,5
1038	7,2	72	4,2	1073	16,4	164	9,6
1039	7,4	74	4,4	1074	16,7	167	9,8
1040	7,6	76	4,5	1075	17,0	170	10,0
1041	7,9	79	4,7	1076	17,2	172	10,1
1042	8,2	82	4,8	1077	17,5	175	10,3
1043	8,4	84	5,0	1078	17,8	178	10,5
1044	8,7	87	5,1	1079	18,0	180	10,6
1045	9,1	91	5,3	1080	18,3	183	10,8
1046	9,2	92	5,4	1081	18,6	186	10,9
1047	9,5	95	5,6	1082	18,8	188	11,0
1048	9,8	98	5,7	1083	19,1	191	11,2
1049	10,0	100	5,9	1084	19,4	194	11,4
1050	10,3	103	6,0	1085	19,6	196	11,5
1051	10,6	106	6,2	1086	19,9	199	11,7
1052	10,8	108	6,3	1087	20,2	202	11,9
1053	11,1	111	6,5	1088	20,4	204	12,0
1054	11,4	114	6,7	1089	20,7	207	12,2
1055	11,6	116	6,8	1090	21,0	210	12,3
1056	11,9	119	7,0	1091	21,2	212	12,5
1057	12,2	122	7,2	1092	21,5	215	12,6
1058	12,4	124	7,3	1093	21,8	218	12,8
1059	12,7	127	7,5	1094	22,0	220	13,0
1060	13,0	130	7,6	1095	22,3	223	13,1
1061	13,2	132	7,8	1096	22,6	226	13,3
1062	13,5	135	7,9	1097	22,8	228	13,4
1063	13,8	138	8,1	1098	23,1	231	13,6
1064	14,0	140	8,2	1099	23,4	234	13,8
1065	14,3	143	8,4	1100	23,6	236	13,9
1066	14,6	146	8,6	1101	23,9	239	14,1
1067	14,8	148	8,7	1102	24,2	242	14,3
1068	15,1	151	8,9	1103	24,4	244	14,4
1069	15,4	154	9,0	1104	24,7	247	14,6

Արեւմտեանի ցուցումներ հերթ (ձեռք վրայ բացողի կշիռը գրամներով 15°C -ի)	Շաքարի քանակը տարածանքով	Շաքարի քանակը գրամներով	Ազոտային գինու թնդու- թյունը (առախճանը)	Արեւմտեանի ցուցումներ ըր (ձեռք վրայ բացողի կշի- ռի գրամներով 150 C-ի)	Շաքարի քանակը տարածանքով	Շաքարի քանակը գրամներով	Ազոտային գինու թնդու- թյունը (առախճանը)
1105	25,0	250	14,7	1140	34,3	343	20,2
1106	25,2	252	14,9	1141	34,0	340	20,4
1107	25,5	255	15,0	1142	34,6	346	20,5
1108	25,8	258	15,2	1.43	35,3	353	20,7
1109	26,0	260	15,3	1.44	35,0	350	20,9
1110	26,3	263	15,5	1145	35,6	356	21,1
1111	26,6	266	15,7	1146	35,3	353	21,2
1112	26,8	268	15,9	1147	36,2	362	21,3
1113	27,1	271	16,0	1148	36,6	366	21,5
1114	27,4	274	16,2	1149	36,3	363	21,7
1115	27,6	276	16,3	1150	37,0	370	21,8
1116	27,9	279	16,4	1151	37,6	376	22,0
1117	28,2	282	16,6	1152	37,3	373	22,2
1118	28,4	284	16,7	1153	37,0	370	22,3
1119	28,7	287	16,9	1154	38,6	386	22,4
11.0	29,0	290	17,1	1155	38,3	383	22,6
1121	29,6	296	17,3	1156	38,0	380	22,8
1122	29,3	293	17,4	1157	38,6	386	23,0
1123	29,0	290	17,6	1158	39,3	399	23,1
1124	30,6	306	17,7	1159	39,9	399	23,2
1125	30,3	303	17,9	1160	39,9	397	23,4
1126	30,9	309	18,0	1161	39,7	397	23,5
1127	30,6	306	18,2	1162	40,5	405	23,6
1128	31,2	312	18,3	1163	40,2	402	23,8
1129	31,9	319	18,5	1164	40,0	400	24,1
1130	31,5	315	18,7	1165	40,7	407	24,2
1131	31,2	312	18,8	1166	41,4	414	24,3
1132	32,3	323	19,0	1167	41,1	411	24,5
1133	32,9	326	19,1	1168	41,9	419	24,6
1134	32,2	322	19,3	1169	42,6	426	24,8
1135	32,9	329	19,5	1170	42,3	428	25,0
1136	33,6	336	19,6				
1137	33,3	333	19,8				
1138	33,9	339	19,9				
1139	34,6	346	20,1				

Չերմուքան ուղղումները Գյումարդեն-Սալերոնի շահառչափի համար

Քաղցուի ջերմաստիճանը	Մացվելիք ուղղումը						
10°	-0,6	18°	+0,5	26°	+2,3	34°	+4,6
11°	-0,5	19°	+0,7	27°	+2,6	35°	+5,0
12°	-0,4	20°	+0,9	28°	+3,8	36°	+5,3
13°	-0,3	21°	+1,1	29°	+3,1	37°	+5,7
14°	-0,2	22°	+1,3	30°	+3,4	38°	+6,0
15°	0,0	23°	+1,6	31°	+3,7	39°	+6,4
16°	+0,1	24°	+1,8	32°	+4,0	40°	+6,8
17°	+0,3	25°	+2,0	33°	+4,3		

Թե ինչպես օգտվել այդ աղյուսակներից, բերենք մի քանի օրինակ: Դիցուե՛ք, շաքարաչափը քաղցուի մեջ կանդ առավ 1093-ի վրա, իսկ հեղուկի դիտելի ջերմությունը 22° է: Որովհետև +22° ջերմության դեպքում քաղցուի ծավալը մեծացել է և խտությունը փոքրացել, դրա համար էլ երկրորդ աղյուսակի միջոցով դիտում ենք +22-ի դիտաց գրված 1,3 (այն թիվը, որը պետք է ավելացնել արեոմետրի ցուցմունքին՝ ուղղում կատարելու համար), ուրեմն շաքարաչափի ցույց տված խտությունը, որը 1093 է, պետք է գումարել 1,3 (1093+1,3=1094-ի): Առաջին աղյուսակում 1094-ին համապատասխանում է 22 0/10 շաքար: Մի ուրիշ օրինակ. դիցուե՛ք, շաքարաչափը հեղուկի մեջ կանդ առավ 1080 թվանշանի վրա, իսկ ջերմությունը 10 է: Երկրորդ աղյուսակին նայելով, տեսնում ենք, որ մացվելիք ուղղումը հավասար է -0,6-ի (մինուս նշանակում է պակասեցնել) (1080-0,6=1079-ի): 0,6-ի փոխարեն հանում ենք մեկ միավոր՝ թիվը կլորացնելու նպատակով: Առաջին աղյուսակից պարզվում է, որ 1079-ի դեպքում շաքարը կազմում է 18 0/10: Ընդհանրապես հաշվումները կատարելիս երկրորդ աղյուսակում ցույց տված թվերը, վեր են անվում ամբողջ թվերի հետևյալ ձևով՝ եթե թիվը 0,5-ից մեծ է, ապա այն ընդունում են մեկ ամբողջի

տեղ, իսկ եթե 0,5 է, կամ նրանից պակաս, ապա տասնորդական մասերը հաշվի չեն առնում, ինչպես այդ արված է վերև, մեր բերած օրինակները լուծելու ժամանակ: Բացի Գյուժարդեն-Սալեքոնի արեոմետրից կան նաև այլ արեոմետրեր (շաքարաչափեր), օրինակ՝ Բարոի, Բալինդի, Բոմեի, Էքսլեի և այլն: Թված արեոմետրերից ամենից գործածականն է Բարոի արեոմետրը (շաքարաչափը), որը ցույց է տալիս քաղցուի շաքարի կշռային⁰ 0-ը, օրինակ, ենթադրենք, որ շաքարաչափը ցույց տվեց 22⁰ 0, դա նշանակում է, որ տվյալ քաղցուի 100 գրամից 22 գրամը շաքար է, իսկ մնացածը ջուր և այլ նյութեր: Գործնականում հաճախ անհրաժեշտ է լինում մի արեոմետրի ցուցմունքը արտահայտել մի ուրիշ արեոմետրի աստիճաններով, ապա այդ դեպքում օգտվում ենք տարբեր արեոմետրերի համեմատական աղյուսակից (տես աղյուսակ III)

ԱՂՅՈՒՍԱԿ III

Տարբեր արեոմետրի համեմատությունը

Էքսլեի արեոմետրի աստիճանները	Գյուժարդեն-Սալեքոնի ցուցմունքները	Բալինդի արեոմետրի աստիճանները	Բարոի արեոմետրի աստիճանները	Բոմեի արեոմետրի աստիճանները	Էքսլեի արեոմետրի աստիճանները	Գյուժարդեն-Սալեքոնի ցուցմունքները	Բալինդի արեոմետրի աստիճանները	Բարոի արեոմետրի աստիճանները	Բոմեի արեոմետրի աստիճանները
51	1051	12,52	10,64	7,0	65	1065	15,83	13,47	8,8
52	1052	12,76	10,85	7,1	66	1066	16,07	13,66	8,9
53	1053	13,00	11,05	7,3	67	1067	16,30	13,91	9,0
54	1054	13,24	11,25	7,4	68	1068	16,53	14,05	9,1
55	1055	13,47	11,45	7,5	69	1069	16,76	14,25	9,25
56	1056	13,71	11,66	7,6	70	1070	17,00	14,45	9,4
57	1057	13,95	11,86	7,7	71	1071	17,23	14,64	9,5
58	1058	14,19	12,06	7,9	72	1072	17,45	14,83	9,6
59	1059	14,43	12,26	8,0	73	1073	17,68	15,03	9,75
60	1060	14,66	12,47	8,15	74	1074	17,91	15,22	9,9
61	1061	14,90	12,67	8,3	75	1075	18,13	15,41	10,0
62	1062	15,14	12,87	8,4	76	1076	18,36	15,60	10,2
63	1063	15,37	13,06	8,5	77	1077	18,59	15,80	10,3
64	1064	15,60	13,26	8,65	78	1078	18,81	15,99	10,4

Էջակի արեւոտա- րի աստիճանները	Դյուժարդին-Սա- ւերոնի ցուց- մունքները	Բալինգի արեւոտա- րի աստիճանները	Բարոի արեւոտա- րի աստիճանները	Բոմեի արեւոտա- րի աստիճանները	Էքսելի արեւոտա- րի աստիճանները	Դյուժարդին-Սաի- րոնի ցուցմունք- ները	Բալինգի արեւոտա- րի աստիճանները	Բարոի արեւոտա- րի աստիճանները	Բոմեի արեւոտա- րի աստիճանները
79	1079	19,04	16,18	10,5	105	1105	24,81	21,09	13,7
80	1080	19,27	16,38	10,6	106	1106	25,02	21,26	13,8
81	1081	19,50	16,57	10,8	107	1107	25,23	21,45	13,9
82	1082	19,73	16,76	10,9	108	1108	25,44	21,63	14,0
83	1083	19,95	16,96	11,1	109	1109	25,66	21,81	14,1
84	1084	20,18	17,15	11,2	110	1110	25,87	21,99	14,3
85	1085	20,40	17,34	11,3	111	1111	26,08	22,17	14,4
86	1086	20,62	17,53	11,4	112	1112	26,29	22,35	14,5
87	1087	20,84	17,72	11,5	113	1113	26,51	22,53	14,6
88	1088	21,06	17,91	11,7	114	1114	26,72	22,71	14,7
89	1089	21,29	18,09	11,8	115	1115	26,93	22,89	14,8
90	1090	21,51	18,28	11,9	116	1116	27,15	23,07	14,9
91	1091	21,73	18,47	12,0	117	1117	27,35	23,26	15,1
92	1092	21,95	18,65	12,1	118	1118	27,57	23,44	15,2
93	1093	22,18	18,85	12,3	119	1119	27,79	23,62	15,3
94	1094	22,40	19,04	12,4	120	1120	28,00	23,80	15,4
95	1095	22,62	19,23	12,5	121	1121	28,21	23,97	15,6
96	1096	22,84	19,42	12,6	122	1122	28,43	24,16	15,7
97	1097	23,06	19,60	12,7	123	1123	28,64	24,34	15,8
98	1098	23,28	19,79	12,8	124	1124	28,85	24,52	15,9
99	1099	23,50	19,97	13,0	125	1125	29,06	24,70	16,0
100	1100	23,72	20,17	13,1	126	1126	29,21	24,82	16,1
101	1101	23,94	20,35	13,2	127	1127	29,42	25,00	16,2
102	1102	24,15	20,53	13,3	128	1128	29,63	25,18	16,4
103	1103	24,37	20,71	13,4	129	1129	29,84	25,36	16,5
104	1104	24,58	20,89	13,5	130	1130	30,04	25,53	16,6

Բարոյի արեւմտեան ցուցմունքներ շեմուքայան ուղղումներ

Բարոյի արեւմտեան ցուցմունքները

Ըստ Յեթսիուսի (C-ի) աստիճանների

10	11	12,5	12,75	15	16	17,5	18,7	20	21	22,5	23,7	25
----	----	------	-------	----	----	------	------	----	----	------	------	----

Շաբաթի խտական տոկոսները

10	9,7	9,8	9,8	9,9	9,9	10,0	10,0	10,1	10,2	10,2	10,3	10,4	10,5
11	10,7	10,8	10,8	10,9	10,9	11,0	11,0	11,1	11,2	11,2	11,3	11,4	11,5
12	11,7	11,8	11,8	11,9	11,9	12,0	12,0	12,1	12,2	12,2	12,3	12,4	12,5
13	12,7	12,8	12,8	12,8	12,9	13,0	13,0	13,1	13,2	13,2	13,3	13,4	13,5
14	13,7	13,8	13,8	13,8	13,9	14,0	14,0	14,1	14,2	14,2	14,3	14,4	14,5
15	14,7	14,8	14,8	14,8	14,9	15,0	15,0	15,1	15,2	15,2	15,3	15,4	15,5
16	15,6	15,7	15,8	15,8	15,9	16,0	16,0	16,1	16,2	16,2	16,3	16,4	16,5
17	16,6	16,7	16,8	16,8	16,9	17,0	17,0	17,1	17,2	17,2	17,3	17,4	17,5
18	17,6	17,7	17,8	17,8	17,9	18,0	18,0	18,1	18,2	18,2	18,3	18,4	18,5
19	18,6	18,7	18,8	18,8	18,9	18,9	19,0	19,1	19,2	19,2	19,3	19,4	19,5
20	19,6	19,7	19,8	19,8	19,9	19,9	20,0	20,1	20,2	20,2	20,3	20,4	20,5
21	20,6	20,7	20,8	20,8	20,9	20,9	21,0	21,1	21,2	21,2	21,3	21,4	21,5
22	21,6	21,7	21,8	21,8	21,9	21,9	22,0	22,1	22,2	22,2	22,3	22,4	22,5
23	22,6	22,7	22,8	22,8	22,9	22,9	23,0	23,1	23,2	23,2	23,3	23,4	23,5
24	23,6	23,7	23,8	23,8	23,9	23,9	24,0	24,1	24,2	24,2	24,3	24,4	24,5
25	24,6	24,7	24,7	24,8	24,9	24,9	25,0	25,1	25,2	25,2	25,3	25,4	25,5
26	25,6	25,7	25,7	25,8	25,9	25,9	26,0	26,1	26,2	26,2	26,3	26,4	26,5
27	26,6	26,7	26,7	26,8	26,9	26,9	27,0	27,1	27,2	27,2	27,3	27,4	27,5
28	27,6	27,7	27,7	27,8	27,9	27,9	28,0	28,1	28,2	28,2	28,3	28,4	28,5
29	28,6	28,7	28,7	28,8	28,9	28,9	29,0	29,1	29,2	29,2	29,3	29,4	29,5
30	29,6	29,7	29,7	29,8	29,9	29,9	30,0	30,1	30,2	30,2	30,3	30,4	30,5

Օրինակ, եթե անհրաժեշտ է շաբաթի տոկոսն արտահայտել Բարոյի շաբաթաշափով, ապա այդ դեպքում մենք քաղցրությունը որոշում ենք ձեռքի տակ ունեցած շաբաթաշափով և ապա համեմատական ալյուսակի միջոցով շաբաթի քանակը արտահայտում ենք ըստ Բարոյի արեւմտեան:

3. ՔԱՂՅՈՒՍԻ ԹԹՎՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՆԵԼԸ

Շաբաթից հետո քաղցրուի երկրորդ կարևոր մասն են կազմում թթուները: Ճիշտ է, չնայած քաղցրուի մեջ կան մի շարք թթուներ՝ խնձորաթթու, գինեթթու, սաթթվաթթու, թրթնջա-

ԹԹԹԹ և այլն, բայց գործն ավելի հեշտ կատարելու համար արտադրութեան մեջ որոշում են ոչ թե առանձին ԹԹԹԹները, այլ բոլոր ԹԹԹԹների քանակը միասին: ԹԹԹԹների քանակն ընդունված է արտահայտել գինեթիվով, երբեմն նաև ձմբական թիվով (Ֆրանսիա):

Քաղցուի թիվությունը սովորաբար արտահայտում են պրոմիլներով ($0/00$): Օրինակ, եթե առում են տվյալ քաղցուն կամ գինին ունի $7/00$ թիվներ, ապա դա նշանակում է, որ 1000 խ.սմ. հեղուկը պարունակում է 7 գրամ թիվներ:

Թիվությունը և քաղցրությունը խոշոր նշանակութուն ունեն քաղցուի և նրանից պատրաստված գինիների համար: Գինու տիպը և որակը հիմնականում կախված է խաղողի շաքարի և թիվների քանակից: Թիվութեան աննորմալ քանակը բացասաբար է ազդում ոչ միայն գինու որակի, նրա կայունութեան, թարմութեան վրա, այլ նաև խմորման պրոցեսի վրա: Տարբեր սորտեր, տարբեր շրջաններում խաղողի ֆիզիոլոգիական լիքի հասունացած ժամանակ տարբեր քանակութեամբ թիվներ և շաքար են պարունակում:

Խաղողի շաքարի և թիվների քանակի վրա խոշոր չափով ազդում են սորտը, շրջանի հողային և կլիմայական պայմանները, տարվա եղանակները, մշակութեան ձևը և մի շարք այլ պայմաններ: Հայաստանի Արարատյան դաշտի հիմնական այգեգործական շրջաններում խաղողը համեմատաբար բարձր քաղցրություն ունի. շաքարի առկոսը շատ հաճախ հասնում է 25-26 $0/0$ -ի և ավելին: Թիվությունը, ընդհակառակը, պակաս է լինում և միջին թիվ կազմում է 5 $0/00$:

Թե ինչպես է փոփոխութեան ենթարկվում շաքարի և թիվների քանակը ըստ առանձին սորտերի և շրջանների, պարզ երեվում է ստորև բերված աղյուսակից (տես աղյուսակ V):

Տվյալ սորտի մի տարվա շաքարի և թիվների քանակը, այնուամենայնիվ, մյուս տարիների համար չափանիշ հանդիսանալ չի կարող, որովհետև այդ քանակը կախված է տարվա եղանակներից և մի շարք այլ պայմաններից:


Խաղողի քաղցուն հարուստ լինելով օրգանական տարբեր թիվներով, ունի թիվ ունակցիա:

Թիվների քանակը որոշելու համար գործածում են

Շաբարի և Թիֆուսների բանակը ըստ առանձին սորաերի և շրջանների

№	Խաղողի սորաը	Շրջանը և գյուղը	Շաբարի բանակը 0/0 ⁰ /0-նե-րով	Թիֆուս-ների քանա-կը պրո-միլներ-ով
1	Խարջի	Բերիայի շրջան՝ Թայիրովի ան-վան սովխոզ	25,2	4,8
		Էջմիածին	24,6	5,6
		Աշտարակ	22,2	5,8
		Արտաշատ	24,2	6,6
		Կոտայք	20,8	6,5
		Միկոյանի շրջան—Մալիշկա գ.	21,2	5,8
		» » Այնաձոր գ.	20,0	7,0
		» » Գետափ գ.	20,6	6,3
		» » Արփա գ.	22,5	5,9
		» » Շատին գ.	20,8	6,5
		» » Շատին գ.	20,8	6,5
2	Մայանի	Միկոյանի շրջան—Մալիշկա	18,6	6,0
		» » Այնաձոր	18,1	7,6
		» » Գետափ	17,9	8,0
		» » Արփա	22,2	5,2
		» » Շատին	18,2	6,8
		Արտաշատի շրջան	19,5	5,8
		Բերիայի շրջան Թայիրովի անվան սովխոզ	25,1	5,6
		Էջմիածին	24,3	5,7
		Բերիայի շրջան Թայիրովի անվան սովխոզ	24,8	5,3
		Բերիա-	24,6	5,1
		Կոտայք	19,7	6,4
3	Շիրշիրա	Բերիայի շրջան Թայիրովի անվան սովխոզ	24,8	5,3
		Բերիա-	24,6	5,1
4	Ճիլար	Կոտայք	19,7	6,4
		Բերիայի շրջան Թայիրովի անվան սովխոզ	20,1	4,2
5	Մսիալի	Կոտայք	17,2	5,1

Թթվությունը չեզոքացնող մի նյութ, որը կոչվում է հիմք (ալկալի): Եթե ճիշտ հաշանի է հիմքային լուծույթի խտությունը և Թթվությունը չեզոքացնելու համար դորժածվող նրա քանակը, ապա այն ժամանակ շատ հեշտ կերպով կարող ենք որոշել քաղցուռի Թթվությունը: Քաղցուռի Թթվությունը որոշելու համար գործ են անում նախօրոք պատրաստված $\frac{1}{3}$ (մեկ երրորդական) նորմալանոց հիմքային լուծույթ, որի յուրաքանչյուր խորանարդ սանտիմետրը չեզոքացնում է 25 միլիգրամ գինեթթու: Թթվությունը որոշելու համար ավյալ քաղցուռից պիպետկայով վերցնում են 25 խ. սմ., լցնում ապակյա բաժակի մեջ, վրան ավելացնում 2-3 կաթիլ ֆենոլ-ֆտալեյնի մի տոկոսանոց սպիրտային լու-



Նկ. 4 Բյուրետի և պիպետի

ծույթ, և ապա քաղցուռի մեջ բյուրետկայից կաթիլ առ կաթիլ ավելացնում են հիմքային լուծույթ: Բյուրետկան իրենից ներկայացնում է մի ապակյա խողովակ, բաժանված խորանարդ սանտիմետրերի և տասնորդական մասերի: Բյուրետկան ծորակ ունի, որից դուրսը յամբ ավելացնում են քաղցուռին հիմքային լուծույթ (նկ. 4):

Հիմքային լուծույթի յուրաքանչյուր կաթիլը -ընկնելով՝ բաժակի մեջ, առաջացնում է վարդագույն ամպիլ, որը սակայն բաժակը շարժելուց կամ ապակյա ձողով խառնելուց սկզբից շուտ անհետանում է. հետևյալ կաթիլների գույնը նմանապես անհետանում է, և վերջում հիմքային լուծույթի մի կաթիլն ամբողջ քաղցուռն ներկում է բաց վարդագույն գույնով: Բաց վարդի գույն ստանալը նշան է, որ քաղցուռի ամբողջ Թթուները արդեն չեզոքացված են հիմքային լուծույթով և հեղուկի մեջ ստացված է

չեղողք սեակցիս (զբուժյուն): Այս կատարելուց հետո պետք է պարզել, թէ բյուրեակայից ինչքան հիմքային լուծույթ է գործածվել չեղողքացման համար: Դիցուկ՝ գործածվել է 7,4 խ. սմ. հիմքային լուծույթ, այս դեպքում քաղցուի թթվությունը կլինի 7,4 ⁰/₁₀₀: այսինքն քաղցուի յուրաքանչյուր լիտր (1000 խ. սմ) պարունակում է 7,4 գրամ թթուներ:

Բյուրեակայից հիմքային լուծույթը կաթեցնելիս պետք է շատ զգուշ լինել, աշխատես կարող է մի քանի կաթիլ ավելի ընկնել քաղցուի մեջ և փոխանակ բաց վարդագույնի դրուժյուն ստանալու, կատայվի մուգ մորու գույն, որը նշանակում է, որ հիմքային լուծույթ շատ է ավելացված, արդյունքը ճիշտ չի ստացվի:

Մյուս կարևոր խնդիրը, որ նույնպես պահանջում է ըզգուշութեթյուն, դա սև խաղողից ստացված քաղցուի թթվության որոշելն է: Այստեղ ևս բոլոր գործողությունները կատարում են այն հաշվով, ինչպես ստացինք վերելում, միայն այն տարբերությամբ, որ կարմիր գույնը թուլացնելու համար (որը խանդարում է ճիշտ որոշմանը), նախքան հիմքային լուծույթ ավելացնելը, քաղցուն ջրով 3—4 անգամ նոսրացնում են, ապա ավելացնում ֆենոլ-ֆտալեյնի լուծույթ և հիմքով չեղողքացնում (տեսում): Կարմիր քաղցուն հիմքային լուծույթով չեղողքացնելիս նրա գույնն աստիճանաբար խավարում է, հետո փոխվում է մանիշակագույնի, դառնում է սև մանիշակագույն և վերջապես կանաչ գույն ստանում: Հիմքի ավելացնելը պետք է դադարեցնել, երբ քաղցուի գույնը փոխվում է սև մանիշակագույնի:

Այն սորտերը, որոնց հյութը խիտ ներկված է, ինչպես օրինակ, ֆրանսիական Տհնտուրե սորտն է, թթվությունը որոշելու համար նախ քաղցուն գունաթափ են անում կենդանական ածխով, և ապա սովորական ձևով որոշում թթվությունը:

Թաղողի շաքարի և թթուների քանակը որոշելու համար անհրաժեշտ է ձևոքի տակ ունենալ հետեվյալ իրերը և նյութերը՝

1. Բյուրեակա ալակյա ծորակով՝ 50 խ.սմ. տարողությամբ, ¹/₁₀ (մեկ տասնորդական) բաժանմունքներով:

2. Մետաղյա կամ փայտյա պատվանդան (շտատիվ):

3. Պիպետակա 5, 17. և 25 խ. սմ. տարրողությամբ:
4. Կոլբա կամ ապակյա բաժակ 200—300 խ. սմ. տարրողությամբ:
5. Ապակյա գլան 100~250 խ. սմ. տարրողությամբ:
6. Ապակյա մեծ և լիտքը ձագարներ հիմքային լուծույթի բյուրեղային մեջ լցնելու և քաղցուեն քամելու համար:
7. Հիմքային լուծույթի սրվակ 1—2 լիտր տարրողությամբ որն ունի ապակյա խցան:
8. Կաթիլանոց ֆենոլ-ֆտալեյնի համար:
9. $\frac{1}{3}$ (մեկ երրորդ) նորմալանոց հիմքի լուծույթ:
10. Ֆիլտրի թուղթ, մաքուր մարլա կամ բամբակ, քաղցուեն քամելու համար:
11. Դյուժարդեն-Սալերոնի շաքարաչափ կամ մի այլ արեոմետր:
12. Ապակյա ձող քաղցուեն խառնելու համար:
13. Սովորական սպիրտայրոց՝ հարկ եղած դեպքում քաղցուեն տաքացնելու համար:

4. ԽԱՂՈՂԻ ԲԵՐՔԱՀԱՎԱՔԸ

Երբ վերցված խաղողի նմուշի անալիզը ցույց է տալիս որ շաքարի և թթուների քանակը համապատասխանում է արտադրության պահանջներին և ղինուռ տիպին, պետք է առանց ժամանակ կորցնելու սկսել բերքահավաքը: Բերքահավաքն ամենակարեվոր աշխատանքներից մեկն է և նրանով հիմք է դրվում սվյակ տարվա ղինեգործական աշխատանքներին: Այգեգործական յուրաքանչյուր սովխոզ և կոլխոզ մինչև բերքահավաքը բոլոր աշխատանքները պետք է նախապատրաստեն և կազմակերպված սկսեն այգեքաղը: Բերքահավաքի հաջող նախապատրաստումը շատ լուրջ և կարևոր խնդիր է, մանավանդ ներկայումս, երբ բերքի հաջող և առանց կորուստի հավաքելը մեր յուրաքանչյուր կազմակերպություն հիմնական աշխատանքներից մեկն է հանդիսանում: Բերքահավաքի աշխատանքների հաջող կազմակերպումը մանավանդ կոլխոզներում և սովխոզներում այնպես պետք է կատարել, որ նա իրոք համապատասխանի վերամշակող և հանձնող կազմակերպությունների տեխնիկական հնարավորություններին, այլապես աշխատանքները անհաջող

կանցնեն և հնարավոր չի լինի օրվա հավաքած բերքը նույն օրը վերամշակել:

Այգեքահն սկսելուց դեռ շատ առաջ վերամշակող կազմակերպութիւնը պետք է հայտնի հանձնող կազմակերպութեանը, թե որքան է նրա օրվա խաղողը վերամշակելու միջին պլանը, որպեսզի ըստ այն էլ հանձնող կազմակերպութիւնը բերքահավաքի աշխատանքները դասավորի: Այս գործը մեր պայմաններում բավական հեշտ է, որովհետև մենք հիմնականում զործունենք սովխոզների և կոլխոզների հետ:

Բերքահավաքը փորձված և վարժ բանվորներով դիմավորելու համար, անհրաժեշտ է 15—20 օր առաջ բաց անել խաղող քաղելու հատուկ դասընթացներ, բանվորներին սովորեցնելու բերքահավաքի հիմնական կանոնները, ողկույզներ բռնելու և կտրելու ձևը, խաղողի տեսակավորումը և այլն:

Այգեքահը խաղողի ֆիզիոլոգիական հասունացումից կաշտոյ է ուշ կամ շուտ լինել: Այգեքահը կատարում են երկու կերպ՝ մասնայական, երբ տվյալ այգու ամբողջ բերքը հավաքվում է մեկ անգամից, և ընտրովի, երբ բերքը հավաքում են 2—3 փամկետում: Խաղողի անալիզի տվյալները և բերքահավաքը ժամանակին կատարելը գինեգործին հնարավորութիւն են պալիս օգտագործել տվյալ խաղողը՝ բարձր որակի գինիներ պատրաստելու համար: Եթե անհրաժեշտ է պատրաստել թուլլ սեղանի գինի կամ խաղողի հյութ, այգեքահը համեմատաբար շուտ են կատարում, իսկ թուլդ և դեսերտ գինիներ պատրաստելիս այգեքահը կատարում են ուշ: Այժմ տարածված է մասնայական այգեքահը: Եթե տվյալ սորտի խաղողի հասունացումը այգում միաժամանակ չի կատարվում, կիրառում են ընտրովի այգեքահ՝ սկզբում հավաքում են լավ հասունացած ողկույզները, վերամշակում և մի 10—15 օրից հետո նույն այգուց հավաքում են մնացած, արգեն հասունացած խաղողը: Հարկ եղած դեպքում բերքը հավաքում են նաև երրորդ անգամ: Խաղողը քաղելու համար գործածում են զանազան զանակներ, մկրատներ, սեկատորներ և այլն: Ամենից լավը մկրատն է կամ բուլթ ծայր և կեռ բերան ունեցող զանակը: Խաղողը քաղելիս պետք է զգուշ լինել, որպեսզի մկրատի կամ զանակի ծայրը պտուղներին չհպի և չվերավորի: Զգուշ պետք է լինել, որ պտուղները

հողի վրա չթափվեն: Ինքընդամենը ժամանակ պետք է կատարել խաղողի տեսակավորում՝ հիվանդ, բորբոսնած, չորացած պտուղները առողջներէց անջատել: Թե ինչ նշանակութիւն ունի խաղողի տեսակավորելը, հիվանդ և առողջ ողկույղներն պտուղներն իրարէց անջատելը, դրա մասին չարժի խոսել, որովհետեւ քաղահան է մի հիվանդ ողկույղ առողջ ողկույղները հետ մշակել, որպեսզի մի ամբողջ տակաւ կամ չան առողջ գինի վարակվի և անպիտքանա: Դրա համար խաղողը քաղելու ժամանակ յուրաքանչյուր բանվոր պետք է իր հետ ունենա երկու աման (ղամբջուղ, դուլ, քաղալակ և այլն), որոնցից մեկը առողջ խաղողի համար, իսկ մյուսը վատ և հիվանդ խաղողի համար: Առողջ և հիվանդ ողկույղները, պտուղները իրարից զատելուց բացի խաղողաքաղի ժամանակ սե և սպիտակ խաղողները պետք է առանձին հավաքել և ոչ մի դեպքում իրար չըխառնել: Բացի քաղող բանվորի մոտ գտնվող երկու ամանից, յուրաքանչյուր բրիգադան ունենում է մեկ-երկու ընդհանուր աման, որոնցով քաղված խաղողն այդուց տեղափոխուած են ավտոյի կամ սայլի վրա: Մեծ նշանակութիւն ունի քաղված խաղողի արագ տեղափոխելը գինեգործարան: Դրանից շատ բան է կախված. խաղողը արագ, մաքուր և ժամանակին տեղափոխելը լավ գինիներ ստանալու գրավականն է: Պետք է խիստ հետեւել, որ քաղված խաղողը առանց ջարդվելու, առողջ դրութեամբ փոխադրվի վերամշակվող պուճակուր: Բացի այդ, պետք է վերջ տալ այն պրակտիկային, երբ մեր կոլխոզներում և սովխոզներում խաղողը քաղում են և թողնում այդուհողի վրա և մեկ-երկու օրից հետո նոր տեղափոխուած գինեգործարան: Նըման ձեւով հավաքված խաղողից ոչ մի դեպքում որակավոր պըրդուկա չի ստացվի, այլ ստացվում է ցածրորակ, դեֆեկտավոր և վաղ գույնի գինի: Խաղողաքաղը պետք է կազմակերպել այնպես, որ շուտ վերջանա, որպեսզի անձրևները և ընդհանրապես խոնավ ու ցուրտ եղանակները վրա չհասնեն: Խաղողաքաղը պետք է սկսել առավոտյան, երբ այգու ցողն արդեն վերացվել է:

IV. ԳԻՆԵԿՈՐԾԱԿԱՆ ՇԵՆՔԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՅ ԿԱՀԱՎՈՐՈՒՄԸ

Գինեգործական արդյունաբերութիւնը պատկանում է այն արդյունաբերութիւնների շարքին, որտեղ չենք՝ մտաւոր (նկու-

ղը) ունի շատ խոշոր և վճռական նշանակութիւն: Հինց դրա համար էլ գինեգործական այն շրջանները, որտեղ կան լավ մասնակներ, դրան որպես արգելուք կան և լավ գինիներ: Գինի պատրաստելու և պահելու համար լինում են երկու տիպի շենքեր:

1. Այնպիսի շենքեր, որտեղ շեշաը հիմնականում դրվում է խաղողի ընդունման, նախնական վերամշակման աշխատանքների վրա:

2. Այնպիսի շենքեր, որոնք հարմարեցված են պատրաստ երիտասարդ գինին ընդունելու, հնացնելու, պահելու համար:

Ուռացի տիպի շենքերը մեր հասկացողութեամբ համարվում են խաղողն ընդունելու և նրա նախնական վերամշակման աշխատանքները կատարելու պունկտերը: Սրանցից մեզ մոտ հայտնի են՝ Ոսկեվազի, Օշականի, Ազավնատան, Իվինի և այլ պունկտերը:

Ուղղորդի նախնական վերամշակման պունկտերը պետք է ունենան հետեւյալ հարմարութիւնները՝ 1. խաղողը կշռելու և ընդունելու հարմարութիւն, 2. մեքենաները դասավորելու տեղ, որտեղ խաղողը ջարդում են, չանչերը հանում և ջարդած խաղողը մամլում, 3. քաղցուն պարզեցնելու տեղ, 4. քաղցուն խմորելու շենք, 5. երիտասարդ գինիները տեղավորելու և պահելու մասանները: Թված շենքերի խոշորագույն մասը պետք է կառուցված լինի գետնի երեսին կամ կիսով չափ գետնի տակ: Բոլոր շենքերն էլ պետք է լինեն լուսավոր, հասակը պատրաստված լինի ցեմենտից կամ ասֆալտից, նրանց պատերը ներքեվից հաշված մեկ ու կես մետր բարձրութեան վրա կաֆելապատած կամ ցեմենտած լինի: Պատերի մնացած մասը սվաղած կրովազով և սպիտակացրած լինի: Բոլոր շենքերն էլ պետք է ունենան ջրի առատ հոսանք՝ տակտոնները, գինեգործական այլ ամանները, մեքենաները մաքրելու համար:

Ուղղորդի նախնական վերամշակման պունկտերն իրենց բոլոր հարմարութիւններով վերցրած թե կարմիր և և թե սպիտակ գինիների համար, համարյա միատեսակ են, այն տարբերութեամբ միայն, որ խմորատնում սպիտակ գինիներն զեպքում դասավորում են տակտոններ, իսկ կարմիրն զեպքում՝ չաներ: Թե չաները և թե տակտոնները խմորատնում պետք է դասավորված լին-

նեն հատուկ պատվանդանների վրա, գետնից 30—40 սանտիմետր բարձրութեամբ: Բացի նշված անհրաժեշտ հարմարութիւններից, բոլոր շենքերը պետք է ունենան լավ վենտիլացիա՝ ամխաթթու գազը խմորատնից հեռացնելու համար:

Երկրորդ՝ գինի ընդունելու, հեացնելու և պահելու շենքեր: Նման շենքեր մեծ մասամբ կառուցում են գետնի տակ կամ արձև կամ ուղիղ քառանկյունի առաստաղով, երկաթ-բետոնից կամ սովորական աղյուսից: Ընդհանրապես, այժմ ընդունված է մատանները կառուցել երկաթ-բետոնից, քանի որ, այս դեպքում մատաններն ամուր են և էժան ու հարմար բոլոր աշխատանքները կատարելու համար: Մատանները լինում են 1—4 հարկանի: Մատանի ջերմութիւնը միջին հաշիւով պետք է լինի 10—12° C: Բոլոր շենքերը պետք է ունենան հաջող վենտիլացիա, օդը մաքուր պահելու համար: Մատանի հատակը լավ է պատ-բաստել ասֆալտից կամ ցեմենտից: Պատերը մեկ և կես մետր բարձրութեան վրա կափելապատել կամ յուղաներկով ներկել, իսկ մնացած մասը կրարետոնով սվաղել և սպիտակացնել: Մատանը պետք է ունենա ջրի լավ հոսանք: Տակառները մատաններում դասավորելու համար պետք է ունենալ պատվանդաններ:— Գինու մատանը այնպես պետք է կառուցել, որ ջերմութիւնը մատանում տարվա ընթացքում ուժեղ տատանում չունենա, քանի որ ջերմութեան խիստ տատանումը բացասաբար է ազդում գինու նորմալ հասունացման պրոցեսի վրա: Բացի այդ, մատանը միշտ մաքուր պետք է պահել: Առողջ և լավ գինի ըստանալու համար մատանի մաքրութիւնը վճռական նշանակութիւն ունի:

V. ԳԻՆԵԳՈՐԾԱԿԱՆ ԱՄԱՆԵՐԸ. ՆՐԱՆՑ ԽՆԱՍՔՆ ՈՒ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵԼԸ

Գինեգործական արդյունաբերութեան մեջ օդաազոծում են կադնու տակառներ: Գինու որակը մեծ չափով կախված է լավորակ և մշակված տակառներից: Սակայն, ցավոք սրտի, արտադրութեան մեջ այդ կարևոր հանգամանքի վրա քիչ ուշադրութիւն են դարձնում, որի պատճառով էլ արտադրութիւնը բավականին տուժում է: Ահա դրա համար է, որ յուրա-

քանչյուր կողմող կամ սովորող լավ գինի ստանալու համար
պետք է ամանների որակի ու մաքրութեան վրա լուրջ ուշա-
գրութիւն դարձնի: Առանց պահանջված քանակի և կանոնավոր
նախապատրաստված գինեգործական ամանների, երբեք հնարա-
վոր չէ բարձրորակ գինի պատրաստել: Այդեքաղից դեռ մեկ ա-
միս առաջ պետք է հոգ տանել հին և թե նոր տակառների
մաքրման մասին: Նոր կամ հին ամանները միեւնույն խնամքը
չեն պահանջում, ուստի նրանց նկատմամբ տարբեր մոտեցում
պետք է ունենալ:

1. ՆՈՐ ՏԱԿԱՌՆԵՐԻ ԽՆԱՄՔԻ ՈՒ ՄԱՔԻՆԵԼԸ

Գինեգործութեան մեջ գործածվում են, ինչպես ասացինք,
փայտյա տակառներ, որոնք բացառապես պատրաստվում են կաղ-
նու տախտակից (կլոպկայից): Այդ տախտակներից պատրաստ-
ված նոր տակառները հարուստ են էկստրակտիվ նյութերով,
հատկապես դարադային նյութերով, որոնք տակառից կարող են
անցնել գինու մեջ և հաղորդել նրան անդուրեկան համ ու դառ-
նութիւն: Անդուրեկան այդ համը հետագայում դժվար է հե-
ռացնել, անգամ գինին երկար ժամանակով հնացնելու դեպ-
քում: Այդ պատճառով նոր տակառների վերամշակման վրա
շատ լուրջ ուշադրութիւն պետք է դարձնել:

Նոր տակառի վերամշակումը կատարվում է հետեւյալ
կերպ. գործածելուց առաջ տակառը լցնում են սովորական մա-
քուր սառը ջրով և ջուրը չհոտելու համար՝ այն 2—3 օրը մեկ անգամ
փոխում են: Այդպես ջրով լի տակառը պահում են մինչև որ տա-
կառի ջուրը այլևս չունենա ուժեղ դեղնավուն գույն: Ջրի
հետ տակառից դուրս են գալիս այն նյութերը, որոնք բացասա-
բար են ազդում գինու որակի վրա: Միջին հաշիվով տակառնե-
րի ջուրը փոխում են 4—5 անգամ: Դրանից հետո շոգեկաթսա
և տակառները մաքրելու համար հատուկ տեղ ունեցող տնտե-
սութիւններում տակառները մաքրում են 2—3 անգամ սոդայի
տաք ջրային լուծույթով, ապա երկու անգամ եռացրած ջրով,
հետո սառը ջրով, որից հետո տակառը պատրաստ է օգտագործ-
ման համար:

Շոգեկաթսա չունենալու դեպքում, ջուրը եռացնում են սո-

վորական կաթսաներում օջախի վրա, ապա այդ ջրից վերցնում մի քանի դուլը, լցնում տակառի մեջ և ջրին ավելացնում սովորական սոդա այն հաշվով, որ յուրաքանչյուր լիտր ջրին ընկնի 20—25 գրամ սոդա ($2-2\frac{1}{2}$ տոկոս), դրանից հետո տակառի անցքը փակում են փայտյա խցանով և տակառը հարում են 20—25 րոպե, որից հետո ջուրը թափում են, նորից երկու անգամ եռացրած ջրով մաքրում և վերջին անգամ մաքուր սառը ջրով տակառը ողողում:

Ռացիոնալ գինեգործության մեջ նոր տակառները սոդայի լուծույթով մաքրելու հետ զուգընթաց մաքրում են նաև թթվով՝ տակառից հեռացնելու համար հիմքային ռեակցիա ունեցող նյութերը, ինչպես և այն նյութերը, որոնք հեշտությամբ լուծվում են թթուների մեջ: Այս դեպքում մեկ լիտր ջրի համար վերցնում են նույնպես 20—25 գրամ տեխնիկական թթու. ընդհանրապես գործածում են ծծմբական թթու: Թթուները գործածելիս պետք է լինել վերին աստիճանի զգույշ, որպեսզի թթուն չթափվի հագուստի և ձեռքերի վրա, այլապես նա կարող է այրել և ֆլասել աշխատողին: Թթուների համար չպետք է գործածել պղնձյա կամ երկաթյա ամաններ, որովհետև այդ ամանները թթուներից քայքայվում են և փչանում: Նոր չաները, բուտերը և կաղնու մյուս նոր ամանները մաքրում են նույն ձեղով, ինչպես և նոր տակառները:

2. ՀԻՆ ՏԱԿԱՌՆԵՐԻ ԽՆԱՄՔՆ ՈՒ ՄԱՔՐԵԼԸ

Իերքահավաքին նախապատրաստվելու համար անհրաժեշտ է ժամանակին ստուգել բոլոր տակառները, չաները, բուտերը և մյուս մանր ամանները, փոխել անպետք, փչացած տակառները, գոծիները (օղերը), վերացնել ամբողջ դեֆեկտները՝ փոխել ջարդված տախտակները, խիստ ուռած հատակը և այլն: Այդ կատարելուց հետո, պետք է հոգ տանել տակառները մաքրելու մասին, որի համար նախ պետք է հոտ քաշել բոլոր տակառներից և սկզբից առանձնացնել «հիվանդ» տակառը առողջներից, որից հետո առանձին-առանձին մշակել: Փորձված բանվորը շատ հեշտությամբ կարող է տարբերել հիվանդ տակառը առողջից: Առողջ տակառը մաքրելու համար, պետք է սկզբից ողողել սառը ջրով, ապա պետք է լցնել մաքուր սառը ջուր և այն չհոտելու

համար 3—4 օրը մեկ անգամ փոխել ջուրը: Այդպես շարունակել մինչև այն ժամանակ, երբ տակառից այլևս ջուր չի կաթի, դրանից հետո տակառն սկսում են մաքրել: Տակառը մաքրելու համար վարվում են հետևյալ կերպ. նախ մաքրում են եռացրած ջրով, հետո երկու անգամ սոդայի լուծույթով, ապա նորից տաք ջրով և վերջում մաքուր սառը ջրով 1—2 անգամ լավ ողողում, դրանից հետո տակառը պատրաստ է օգտագործման համար: Ընդհանուր առմամբ պետք է ասել, որ տակառների մաքրման հիմնական գրավականը հանդիսանում է այն կանոնավոր և պահանջված ձևով հարելը: Եթե տակառը մաքրելու ժամանակ կանոնավոր չհարել, ապա երբեք հնարավոր չէ տակառը լավ մաքրել: Սոդայի լուծույթով տակառները մաքրելու ամենալավ և սովորական ձևն է, սոդա չլինելու դեպքում, տակառը մաքրելու համար ամենաազատակահարմար և էֆան ձևը, որը համարյա ոչ մի ծախս չի պահանջում, դա մոխրաջրի գործածելն է: Այս նպատակի համար անհրաժեշտ է վերցնել 40—60 լիտր տարողությամբ սովորական կաթաս, մեջը լցնել 15—25 սանտիմ հաստությամբ շերտով սովորական մաքուր մոխիր (լավ է արքադի մոխիր), ապա վրան ավելացնել եռացրած ջուր, խառնել և թողնել մի քանի ժամ, մինչև որ հեղուկը պարզվի: Պարզվելուց հետո պետք է մոխրաջրի երեսից գոռշությամբ վերցնել պարզ լուծույթը և գործածել այնպես, ինչպես սողան: Այս վճիտ, պարզ մոխրաջուրն ունի նույնպես հիմքային հատկություն և խաղում է նույն դերը, ինչ սողան: Մոխրաջուրն ամենից նպատակահարմար է գործածել տաք եռման վիճակում, որն ավելի էֆեկտավոր է, քան սառը վիճակում գործածելը:

Սոդայի փոխարեն, բացի մոխրաջրից, կարելի է գործածել նաև կիր: Կիրը գործածելիս հնարավոր է վերցնել հետևյալ գոգաները՝ 500—700 լիտր տարողությամբ տակառի համար 25—30 լիտր տաք ջուր և 4—5 կիլոգրամ չհանգած կիր, իսկ մեծ ամանների համար յուրաքանչյուր 1000 լիտր ծավալին՝ 8—10 կիլոգրամ կիր և 40—50 լիտր տաք ջուր:

Ինչ ձևով էլ տակառները մաքրելու լինենք, դրանք լվանալու տեղից դուրս բերելուց և ցամաքացնելուց հետո պետք է ծծումբ ծխել, որից հետո տակառը տեղափոխել ծածկի տակ

և շաքաթը մեկ անգամ մինչև բերքահավաքը ստուգում կատարել: Եթե ստուգումից պարզվեց, որ ծծմբի գազը տակառից ցնդել է, ապա տակառը նորից ծծումբ պետք է ծխել: Գործածելուց առաջ տակառը վերջին անգամ ստուգում են և առողջ մաքուր տակառները սառը ջրով լավ ողողում, ծծմբի ծուխ տալիս, որից հետո քաղցուն լցնում: Վատ մաքրած և այս կամ այն դեֆեկտ ունեցող տակառները նկարագրած ձևով նորից պետք է մշակել:

3. ՓԱՌԱԿԱԼԱԾ ԵՎ ՔԱՅԱԽԱԾ ՏԱԿԱՌՆԵՐԻ ՄԱՔՐԵԼԸ

Ստուգելու համար թե տակառը փառակալած է թե ոչ, վարվում են հետևյալ կերպ. վերցնում են երկար երկաթյա մոմակալով ձող, վառում են մոմը և ապա զգուշությամբ վառած մոմը իջեցնում տակառի մեջ ու նայում տակառի ներսը: Եթե տակառի մեջ փառ կա, այդ տակառն առանձնացնում են հատուկ ձևով մաքրելու համար: Դժբախտ դեպքերից խուսափելու համար նախքան այս ստուգում կատարելը պետք է տակառից հոտ քաշել պարզելու, կա արդյոք սպիրտի, կոնյակի ֆնացորդ և սպիրտ չլինելու դեպքում միայն վառած մոմ իջեցնել նրա մեջ, հակառակ դեպքում տակառի մեջ եղած սպիրտի, կամ կոնյակի ֆնացորդը մոմի բոցից կարող է պայթում առաջացնել: Բոլոր ամանները, սկսած ամենափոքր տակառից մինչև ամենամեծ չանը, մեկ սու մեկ պետք է լավ ստուգել և հայտնաբերել փառակալած (բորբոսնած) ու քացախած ամանները, առանձնացնել հատուկ ձևով մաքրելու և խնամելու համար: Այդ տակառները պետք է մաքրել այն հաշվով, որ մաքրելուց հետո այդ երկու զգվելի հիվանդություններից և ոչ մի հետք տակառի մեջ չմնա, հակառակ դեպքում, գինիները կհիվանդանան և կվարակեն մառանի մյուս գինիները: Եթե տակառը ներսի մակերեսի վրա բորբոս (փառ) ունի, անհրաժեշտ է զգուշությամբ հանել տակառի հատակը և խողանակի օգնությամբ ու սառը ջրով, սողայի լուծույթով լավ լվանալ, որից հետո տակառը բաց կողմով դնել արևի տակ: Դրանից հետո հատակը գցել իր տեղը, հավաքել տակառի մասերը, ապա լվանալ մի երկու անգամ սառը ջրով, հետո՝ եռացրած սողայի լուծույթով, ապա՝ եռացրած ջրով և վերջում երկու անգամ սառը ջրով լավ ողողել: Ոչ մի անգամ չի

Թույլատրվում փառակալած տակառը սկզբից և եթ տաք ջրով մաքրել, քանի որ փառի լուծվող նյութերը հեշտությամբ լուծվում են տաք ջրի մեջ, ներծծվում տակառի տախտակների մեջ և վատ համ ու հոտ հաղորդում գինուին: Փառակալած չաները և բուտերը մաքրելու համար պետք է մտնել չանի կամ բուտի մեջ, ձեռքի խոզանակով հեռացնել փառը, 2—3 անգամ սառը ջրով ողողել, հետո լվանալ տաք ջրով, ապա 2—3 անգամ սողայի լուծույթով, որից հետո 1—2 անգամ տաք ջրով, վերջում, սառը ջրով 2—3 անգամ լավ ողողել:

Կարմիր գինու տակառը, որպես կանոն, սպիտակ գինու համար չպետք է գործածել: Անհրաժեշտության դեպքում, կարմիր գինու համար գործածված տակառը սպիտակ գինի լցնելու համար 10—15 օր անընդհատ տակառը պետք է ջրով լի պահել, երկու օրը մեկ անգամ փոխելով ջուրը, մինչև որ տակառի ջուրը անգույն կստացվի: Դրանից հետո տակառը լվանում են 2 անգամ եռացրած ջրով, 2—3 անգամ ուժեղ սողայի լուծույթով, նորից տաք ջրով, ապա վերջում՝ երկու անգամ սառը ջրով: Դրանից հետո տակառը պետք է ցամաքացնել, ծուխ տալ և օգտագործել: Ամենից նպատակահարմար է, որ կարմիր գինու տակառները օգտագործվեն կարմիր գինու համար և ընդհակառակը: Նույնը կիրառել քաղցր գինիների տակառների նկատմամբ:

4. ԵՐԿԱՍԹ-ԲԵՏՈՆԵ ՑԻՍՏԵՐՆԵՐԻ ԽՆԱՄՔՆ ՈՒ ՄԱՔՐԵԼԸ

Վերջին ժամանակներս գինեգործական խոշոր անտեսություններում գինու համար լայն չափով գործադրում են ցեմենտե և երկաթ-բետոնե ցիստերնաներ: Այդ ցիստերնաների ամենախոշոր առավելությունն այն է, որ նրանք մատանում ավելի փոքր տարածություն են զբաղում, ավելի մեծ տարողություն ունեն և միևնույն ժամանակ նրանք ավելի երկար են դիմանում: Մեկ հեկտոլիար տարողություն ավելի էժան է նստում, քան կաղնու փայտից պատրաստված մեծ կամ փոքր տակառները: Երկաթ-բետոնե ցիստերնաների բացասական կողմն այն է, որ նրանք կրի և երկաթի աղեր են պարունակում, որոնք հեշտությամբ լուծվում են գինու մեջ, սևացնում գինին, իջեցնում նրա թթվությունը: Բացի այդ, օդը ցիստերնի մեջ դժվար

է թափանցում, որի հետևանքով գինին կանոնավոր չի հասու-
նանում և կորցնում է իր թարմությունը: Յիստերնի մեջ պահ-
ված գինին անդուրեկան համ ու հոտ ունի: Յիստերնը, ճիշտ է,
գինու որակի տեսակետից վատ է, քան կաղնու տակառը, սակայն
որպես մեծ տարողություն ունեցող և քիչ կորուստ տվող աման
այժմ մեծ գործածություն ունի, մանավանդ Արևմտյան Եվ-
րոպայում:

Յիստերնները լինում են երկու տեսակ՝ 1. ներսի կողմից
ուռեն ասպակյա շերտ, որի շնորհիվ գինու կամ քաղցուի թթու-
ները չեն կարողանում ազդել ցեմենտի վրա և ոչ էլ վերջինս
գինու կամ քաղցուի վրա, 2. սովորական ցեմենտե հորեր, ա-
ռանց ներսի կողմից ասպակապակու: Գերազանցի են առաջին
տեսակի ցիստերնները, քանի որ դրանք չեն իջեցնում թթվու-
թյունը և գինու որակը, մինչդեռ երկրորդ տեսակի հորերը,
ազդելով գինու բաղադրության վրա, գցում են նրա որակը:
Ընդհանրապես, թե արտասահմանում և թե մեզ մոտ ՍՍՌՄ-ում
ցեմենտ-բետոնի ցիստերններն օգտագործում են հասարակ և
շուտ շուկա հանվող գինիների համար: Այդ ցիստերններն օգտա-
գործում են նաև գինիների կուպաժի համար:

Յիստերնները ռացիոնալ օգտագործելու համար, պետք է
նրանց մաքրության վրա լուրջ ուշադրություն դարձնել: Այ-
դեքազից 1—1½ ամիս առաջ ցիստերնները լավ ստուգում են և
նրանցից ղեֆեկտավորները առանձնացնում, հատուկ ձևով մը-
շակելու նպատակով: Յիստերններն ստուգելու համար, այն ջրով
լիքը լցնում են և թողնում 5—10 օր: Եթե ջուրը պակասեց, ասպ-
պա նշան է, որ ցիստերնը մաղում է, հետևապես անհրաժեշտ է
հորի ներսի մակերեսը ցեմենտի բարակ շերտով պատել, որից հե-
տո վերջնական ստուգման համար ցիստերնը նորից ջուր լցնել և
պահել 5—10 օր: Եթե այս անգամ ևս ջուրը պակասեց, ասպ-
պա է փնտռել ղեֆեկտավոր տեղը և այն նորոգել, որից
հետո ցիստերնը մաքրել ու գործադրել:

Եթե ցիստերնի կամ հորի պատերի վրա կա գինեքարի
հաստ շերտ, չպետք է այն կոպիտ հարվածներով հեռացնել, քա-
նի որ ուժեղ հարվածներից կարող են ճեղքվածքներ առաջանալ
և ամանն անպետքանա: Գինեքարի շերտը մաքրելու համար,
պետք է վերցնել պողպատյա սուր հատիչ (գուբիլ) և ամանի
պատերի մակերեսից այդ հատիչով շատ զգույշ կերպով տաշել
գինեքարի շերտը: Այդ աշխատանքը պետք է հանձնել փորձ-

ված բանվորի: Եթե գինեքարի շերտը շատ բարակ է, այդ գեպ-
քում գգուշությամբ հատուկ քերիչով այն պետք է քերել և ա-
պա ցիստերնը 1—2 անգամ սառը ջրով ողողել. հետո տաք ջրով
լվանալ, ապա 1—2 անգամ սոգայի լուծույթով, նորից 1—2 ան-
գամ եռացած ջրով և վերջում 1 անգամ ցիստերնը սառը ջրով
ողողել: Եթե ցիստերնի մեջ գինեքար չկա, ապա ցիստերնը մաք-
րելու համար չանի հատուկ երկար կոթ ունեցող խողանակով մաք-
րում և չորացնում նրա պատերն ու հատակը: Ցիստերնը մաք-
րելուց հետո, ծծմբի ծուխ են տալիս և փախում ցիստերնի անցքը
մինչև օգտագործելը: Այդ ձևով մաքրած ցիստերնները 10—15
օրը մեկ անգամ պետք է ստուգել և եթե նրանցից կույմնակի
հոտ է գալիս, ապա պետք է ծծմբով նորից ծխել: Սեզոնը սկսվե-
լուց, ցիստերնը պետք է նորից ողողել 1—2 անգամ տաք ջրով,
ապա մեկ անգամ սառը ջրով, հետո ծծումբ ծխել և ապա զործա-
ծել: Ցիստերնը մաքրելու ժամանակ պետք է գգուշ լինել, որ
սպիրտի գոլորշիներ և ածխածինի գազ չլինի նրա մեջ, այլապես
ցիստերնի մեջ մտնող բանվորը կարող է խեղդվել: Եթե պարզվեց,
որ ցիստերնի մեջ սպիրտի և ածխածինի գոլորշիներ կան, ապա
պետք է այն հեռացնել հատուկ վենտիլացիայի միջոցով, որից
հետո նոր աշխատանքները կատարել:

Նոր ցիստերնները, եթե լավ չնախապատրաստեն, ապա
նրանք ցեմենտի համ են հաղորդում գինու. բացի այդ, պակա-
սեցնում են գինու թթվությունը, որով գինին անորակ է
դառնում: Որպեսզի նոր ցիստերններում գինին վատ համ ու հոտ
չստանա և գինու թթվությունը շատ չպակասի, ցիստերնը պետք
է լցնել սովորական ջրով և ջուրը շուտ-շուտ փոխել մինչև
ցիստերնի օգտագործելը: Քաղցուն կամ գինին ցիստերնի մեջ
լցնելուց առաջ անհրաժեշտ է ցիստերնը չորացնել և նրա պա-
տերը ծածկել կայծքարածածկային նատրիումի (հեղուկ ապակի)
25⁰/₀-անի լուծույթով, որից հետո ցիստերնը ջրով լվանալ
ավելորդ հեղուկ ապակին հեռացնելու համար: Իրանից հետո
ցիստերնը թողնում են որ չօրանա, և ապա մի քանի օրից հե-
տո այն գործողությունը նորից կրկնում են, սակայն հիշյալ
լուծույթը վերցնում են ավելի խիտ (50⁰/₀): Ընդհանրապես
ցիստերնի պատերը վերը նշված լուծույթով պատում են երեք
անգամ: Յուրաքանչյուր անգամ պատերը լուծույթով ծածկե-
լուց հետո ցիստերնը ջրով լավ և խնամքով լվանում են:

Գինու ամանները, ընդհանրապես, պատրաստում են կաղնու փայտից. սակայն Անդրկովկասում (Վրաստան, Հայաստան) դեռ շատ հին ժամանակներից, որպես գինու աման, գործադրում են նաև կարասներ: Չնայած, որ կարասները աստիճանաբար գործածութունից դուրս են գալիս և փոխարինվում են կաղնու տակառներով, բայց այնուամենայնիվ դեռ մինչև օրս էլ մեր կոլտողներում մեծ թվով կարասներ կան, ուստի անհրաժեշտ է բացիոնալ ձևով օգտագործել նաև այդ կարասները: Կարասներն օգտագործում են թե կարմիր և թե սպիտակ գինիներէ խմորման համար, ինչպես և երիտասարդ գինիները պահելու համար: Գինին լավ պահելու համար կարասները սովորաբար ժամանակ առ ժամանակ պատում են ճարպով (ճրագուղով): Ճարպի փոխարեն ավելի լավ է գործածել սպիտակ պարաֆին:

Կարասների պարաֆինելը կարելի է կատարել հետևյալ կերպ:

Պատրաստել մոտ 25 սմ. խորությամբ կլոր փոս (թոնիք) ձխանցքով, այդ անցքը պետք է դուրս գա հողի երեսը: Այդ փոսի վրա հագցնել² կտորած կարասի վիզ (բերան) այնպես, որ նա հողի երեսից բարձր չլինի և հարմար լինի կարասը փոսի վրա կանգնեցնելու: Այդ թոնրի մեջ ավելի լավ է ածուխ վառել, քանի որ փայտը ծուխ շատ է առաջացնում, որը կարող է անցնել կարասի մեջ: Երբ թոնրի կրակը թեժանա, կարասը բերանի վրա դնել թոնրի վրա տաքանալու համար: Միաժամանակ կաթոսյի կամ թիթեղյա ամանի մեջ կրակի վրա հալել պարաֆինը: Պարաֆինը լավ է հալել ոչ թե ուղղակի կրակի վրա, այլ ջրային բաղնիքի մեջ, քանի որ այս դեպքում պարաֆինը կանոնավոր է հալչում: Երբ թոնրի վրա դրված կարասը այնքան տաքանա, որ ձեռքը հաղիվ դիմանա՝ կարասը շուռ տալ կողքի վրա, նրա մեջ ¹/₂—³/₄ լիտր հալած պարաֆին լցնել և կարասն արագ պտտացնել, այնպես, որ պարաֆինը հավասար ծածկի կարասի ներսը: Կարասն արագ պտտացնել, որպեսզի պարաֆինը ժամանակից շուռ չսառչի. դրանից հետո կարասը իբր հատակի վրա կանգնեցնել փոքր փոսի մեջ, որ կարասի մեջ եղած ավելորդ պարաֆինը հավաքվի նրա հատակին. վրա շը-

նորհիվ կարասի հատակին կուտակվում է մոտ 5 սանտիմ. հաստու-
 թիյամբ պարաֆինի շերտ: Մի քանի ըոպեից հետո պարաֆինը
 առնչում է և կարասի ներսի մակերեսը ծածկվում է պարաֆի-
 նի ալիտակ բարակ շերտով: Գոյ կամ սառը ջրով ողողելուց հե-
 տո կարասը պատրաստ է գործածության համար. եռացող կամ
 սառը ջրով ողողելիս պարաֆինը կհալչի և աշխատանքն իզուր
 կանցնի: Կարտոնները պարաֆինեղ արագացնելու համար կարելի
 է պատրաստել մի քանի նման թոնիրներ: Պարաֆինած կա-
 բանն առանց նորոգելու կարելի է օգտագործել երկար ժամա-
 նակ (պարաֆինը ձարպի նման չի ծծվում կարասի ներսը և չի
 դառնանում): Սակայն, երբ կարիք է լինում կարասի պատերի վրա
 նստած գինեքարը հեռացնել, գործ են անում եռացրած սողայի
 ջրային լուծույթ, որը հեռացնում է նաև եղած պարաֆինը:
 Նման դեպքում կարասը նորից պիտի պարաֆինել:

VI. ԾԾՄԲԱՅԻՆ ԳԱԶԻ (SO_2) ԿԻՐԱՌՈՒՄԸ ԳԻՆԵԳՈՐԾՈՒՅՅԱՆ ՍԵՋ

Ծծմբային գազը (SO_2) գործադրում են գինեգործության
 մեջ շատ վաղուց: Ծծմբային գազի ամենատարածված և հասա-
 բակ ձևը դա ծծմբի ալրելն է, որից առաջանում է ծծմբային
 գազ: Ծծումբով ծուխ տալը կայանում է նրանում, որ ծծմբից
 դատրաստվում են պատրույգներ, այրում դատարկ կամ կիսա-
 դատարկ տակառի մեջ, որից առաջանում է գազ, որը կոչվում
 է ծծմբային անհիդրիդ, կամ ծծմբային գազ SO_2 : Ծծմբային
 գազն ուժեղ անտիսեպտիկ նյութ է, օդից նա ծանր է: Նա հնա-
 բավորություն է տալիս պայքարելու գինու համար վնասակար
 բոլոր միկրոօրգանիզմների դեմ:

Սեզոնի համար պատրաստված տակառները երկար մա-
 քուր վիճակում չեն կարող մնալ, եթե նրանց մեջ հենց լվա-
 նալուց հետո ծծումբի ծուխ չտանք: Մաքրած տակառի մեջ
 հեշտությամբ և առատ կերպով զարգանում են վնասակար
 գանազան միկրոօրգանիզմները, որոնք հետագայում կարող են
 փչացնել վարակել գինին:

Ծծումբ ձխելով մենք փրկում ենք մաքրած տակառները
 վնասակար միկրոօրգանիզմներից և այդպիսով տակառը մնում
 է մաքուր, մինչև նրա գործածելը: Ծծումբով ծուխ տալու հա-

մար, ինչպես ասված է, սովորաբար գործածում են այսպես կոչ-
 ված ծծմբի պատրույգներ: Պատրույգները պատրաստելու հա-
 մար գործածում են թղթի, ազրեստի և այլ նյութերից պատ-
 րաստված ժապավեններ: Ամենալավ ժապավենը համարվում է
 ազրեստից պատրաստվածը, քոնի որ այդ ժապավենը գինուհի
 կողմնակի համ ու հոտ չի հաղորդում, մինչդեռ թղթից պատ-
 րաստվածը այրվելուց ծուխ է առաջացնում, որը գինուհի կողմ-
 նակի հոտ է հաղորդում: Ներկայումս, ընդհանրապես, գործ են
 անում թղթի պատրույգներ: Պատրույգներ պատրաստելու համար
 ծծումբը մաքուր և լավ դեղին գույնի պետք է լինի: Պատրույգները
 պատրաստում են հետևյալ կերպ. սովորական 8—10 լիտր տարողու-
 թյամբ չուգունն կաթսայի մեջ լցնում են կիսով չափ ծծումբ,
 ապա օջախի վրա այն աստիճանաբար տաքացնում են, մինչև
 որ ծծումբը հեղուկ է դառնում: Անուշադրության դեպքում կը-
 րակը կարող է շատ ուժեղանալ և ծծումբը կսկսի այրվել և ան-
 պետքանալ: Իրանից հետո վերցնում ենք թղթից նախապես պատ-
 րաստած երկար ժապավեններ, որոնք ունենում են 70—80 սան-
 տիմետր երկարություն, 2—3 սանտիմ. լայնություն և թաթախում
 հեղուկացած ծծմբի մեջ: Ծծումբը հավասարաչափ բարակ շեր-
 տով պատում է թղթի ժապավենը, որից հետո հանում են և վը-
 ում տախտակների վրա չորանալու համար: Պատրաստի ծծում-
 բի պատրույգները կտրատում են այնպես, որ յուրաքանչյուր
 ժապավեն ունենա 15—20 սանտիմ. երկարություն: Մեկ այդպի-
 օի ժապավենը կընում է միջին թվով 5—6 գրամ: Պատրույգներ
 պատրաստելիս պետք է աշխատել, որ վերցված թղթի ժապա-
 վենը, որքան հնարավոր է, լինի մաքուր, բարակ և ծածկվի ծծում-
 բի հավասար շերտով: Եթե ժապավենը ծածկվում է ծծումբի
 հաստ շերտով, ապա նա կանոնավոր չի վառվում, ծծումբի
 զգալի մասը կաթում է ծխամանի բաժակի կամ տակառի մեջ
 և առաջացնում գինու մեջ անդուրեկան ծծմբաջրածնի հոտ:
 Ծծմբի պատրույգներով ծուխ տալու ժամանակ, որպեսզի այր-
 վող ծծմբի կաթիլներն ու թղթի ֆագորդները տակառի
 մեջ չթափվեն և վատ հոտ չառաջացնեն, անհրաժեշտ է գործա-
 ծել հատուկ ծխամաններ:

Ծխամանները լինում են տարբեր տեսակի, սակայն ամե-
 նից տարածվածը նկար 5-ում ցույց տված ծխամանն է: Այս
 ծխամանը երկաթյա մի ձող է, որը ներքեվի մասում ունի մի



երկաթյա բաժակ. այդ բաժակից մոտ 20—25 ասն-
տիմ. բարձր ամրացված է մի կեռ: Ծխամանի վերելի
մասն ունի փայտյա մի խցան: Ծուխ տալու համար
պատրույզը կախում են ծխամանի կեռի վրա այնպես,
որ նրա ցածի ծայրը լինի բաժակի մեջ, որպեսզի
ծծմբի կաթիլները և թղթի մնացորդները թափվեն
բաժակի մեջ և հնարավոր լինի տակառից դուրս հա-
նել: Ծուխ տալուց հետո ծխամանը զգուշությամբ
պետք է հանել տակառից, որպեսզի ծխամանի բա-
ժակից ծծումբը տակառի մեջ չթափվի: Բացի ծծմ-
բից, գինեգործության մեջ բավական մեծ կիրառում
ունի նաև հեղուկ ծծմբային գազը: Հեղուկ ծծմբային
գազը դա՛նույն ծծմբի գազն է, որը ցածր ջերմաս-
տիճանի և որոշ ճնշման տակ դարձել է հեղուկ: Այդ
հեղուկ գազը լցնում են բալոնների մեջ հարկ եղած

Նկ. 5. Ծխա-
ման:

դեպքում օգտագործելու համար: Հեղուկ ծծմբային գազը գոր-
ծածելու համար բալոնը դնում ենք կշեռքի վրա կշռում և կշեռքի
մյուս թափից վերցնում այնքան կշռաքար, որքան գազ են ցան-
կանում գործածել, բալոնը բաց են անում և գազը հատուկ խո-
զովակի միջոցով անցնում է ցանկացած ամանի մեջ. երբ կշեռքի
թափերը հավասարակշռվում են, բալոնի անցքը փակում են:
Բացի այդ, դոյուլյուն ունեն հատուկ սուլֆիտոմետրեր, որոնց
միջոցով հնարավոր է ցանկացած քանակությամբ ծծմբային
գազ մտցնել հեղուկի մեջ: Այդ սուլֆիտոմետրերից հայտնի են
Պակտեի, Ջեյտցի, Փուլլոուրի սուլֆիտոմետրերը:

Հեղուկ ծծմբային գազի կիրառման առավելությունները
համեմատած ծծմբի հետ, հետևյալն են. 1. ծծմբային գազը ամե-
նայն ճշտությամբ հաշվառման կարելի է ենթարկել և ցանկա-
ցած դողան մտցնել քաղցուրի կամ գինու մեջ. 2. գինուն կամ
քաղցուրին կողմնակի համու հոտ չի հաղորդում: Բացի ծծումբի
պատրույզներից և հեղուկ ծծմբային գազից գինեգործության մեջ
կիրառվում են նաև ծծումբով ծուխ տալը վառարանի օդնությամբ:
Ծծմբային գազի դողան տարբեր է, նայած թե ինչ նպատակի համար

է այն գործածվում: Մեկ լիտր հեղուկին սովորաբար ապլիս են հետևյալ քանակությամբ ծծմբային անհիդրիդ—1. շաքարասընկերի գործունեությունը որոշ ժամանակով կասեցնելու համար—250—300 միլիգրամ, 2. գինու գլուխ լցնելու և տեղափոխելու ժամանակ—40—50 մգ, 3. քաղցր գինիներ պատրաստելու համար—50—200 մգ., 4. խաղողի հյութը և գոշաբլի պատրաստման ժամանակ—250 մգ., 5. սև խաղողից սպիտակ գինի պատրաստելու համար—100—200 մգ., 6. գինիների ֆիլտրացիայի ժամանակ—50—60 մգ., 7. քաղցուն պարզեցնելու և հետոն խմորելու համար—100—200 մգ., 8. շենքի զեզինֆեկցիայի համար—1 խոր մեարին 30 գրամ ծծումբ, 9. հիվանդ գինիները բուժելու համար—100—200 մգ., 10. խմորումը 6 և ավելի ամսով դադարեցնելու համար—600—1200 միլիգրամ: Ծծմբային անհիդրիդի նըշած դոզաները օրինետիր են և առանձին զեպքերում ենթակա են փոփոխության:


Բացի հեղուկ ծծմբային անհիդրիդից և ծծմբից գինեգործության մեջ գործադրում են նաև կալիում պիրոսուլֆիդ ($K_2S_2O_5$): Գինու կամ քաղցուի մեջ կալիում պիրոսուլֆիդը քայքայվում և ծծմբային գազ է արտադրում: Պիրոսուլֆիդի կիրառման թերությունն այն է, որ նա գինու մեջ ավելացնում է կալիումի աղերի քանակը: Պիրոսուլֆիդը կիրառում են գլխավորապես Ֆրանսիայում:

VII. ՍՊԻՐՏԱՅԻՆ ԽՄՈՐՈՒՄԸ

1. ՍՊԻՐՏԱՅԻՆ ԽՄՈՐՄԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ

Այն պրոցեսը, որի միջոցով խաղողի քաղցուն վեր է ածվում գինու, կոչվում է սպիրտային խմորում: Սպիրտային խմորումը մեզ ծանոթ է խորն անցյալից: Օգտվելով խմորումից, մարդիկ պատրաստել են գինի և սպիրտային այլ խմելքներ դեռ շատ հին ժամանակներից: Սակայն գինի պատրաստելը դեռ ևս չէր նշանակում, թե հայտնի է արդեն խմորման պրոցեսի էությունը: Խմորման ընթացքում տեղի ունեցող երեւոյթների էությունը շատ երկար ժամանակ մարդկանց համար անհասկանալի էր: Խմորման էությունը բացատրելու համար անհրաժեշտ եղան գիտնականների մի քանի սերունդների լուրջ


հետազոտական աշխատանքներ: Սպիրտային խմորման իսկական պատճառը հայտնի դարձավ միայն 19-րդ դարի 2-րդ կեսին: 18-րդ դարի վերջում գիտնական Լաուզեին առաջին անգամ հանդիպեց պարզել, որ սպիրտային խմորման ժամանակ քաղցուղի մեջ եղած շաքարը քայքայվում է և վեր է ածվում սպիրտի ու ածխաթթվի: Շաքարի քայքայման այդ պրոցեսը Լաուզեն արտահայտեց հետևյալ հավասարությամբ՝



Բայց և այնպես, Լաուզեն չկարողացավ բացատրել սպիրտային խմորման էությունը, սահմանափակվելով միայն քիմիական փոփոխությունների պարզարանումով: Չորս գիտնականներ՝ Կանյար-Լատուր, Շվան, Կյուտցինգ և Տյուրպենը համարյա միաժամանակ (1837 - 1838) հաստատեցին, որ սպիրտային խմորումը սերտորեն կապված է անսահման մասնը էակների կենսագործունեության հետ, որոնց ներկայումս մենք շաքարանկեր ենք անվանում: Սակայն, Լիբիխի խիստ քննադատության հետևանքով խմորման այդ բիրքիմիական թեորիան շուտով մոռացության տրվեց: Միայն 1858 թ. ֆրանսիացի գիտնական Լուի Պաստյորը զարմանալի ճիշտ և նուրբ գիտահետազոտական փորձերի միջոցով կարողացավ նորից վերջնականապես ապացուցել, որ շաքարասուենկերը կենդանի էակներ են և որ Լիբիխի առաջադրած խմորման գոլտ քիմիական թեորիան միանգամայն սխալ է: Շաքարասուենկերի մասին իր փայլուն հետազոտությունը Պաստյորը եզրափակեց հետևյալ կարճ ֆորմուլայով՝ «Սպիրտային խմորումը շաքարասուենկերի կյանքի հետ կապված միակտ է»: Այսպիսով, ճշտորեն պարզվեց, որ սպիրտային խմորումը կայանում է նրանում, որ քաղցուղի շաքարը շաքարասուենկերի գործունեության շնորհիվ քայքայվում է, ըստ որում որպես վերջնական պրոդուկտներ առաջանում են՝ ածխաթթու, որը ցնդում է, և սպիրտ, որը կուտակվում է խմորվող հեղուկի մեջ: Բացի սպիրտից և ածխաթթվից, խմորման ընթացքում առաջանում են քիչ քանակությամբ նաև գլիցերին, սաթաթթու, քացախաթթու, կաթնաթթու, էթերներ, ալդեհիդներ, բարձր կարգի սպիրտներ և այլ նյութեր:

2. ՇԱՔԱՐԱՍՈՒՆԿԵՐԸ

Շաքարասունիկերը շատ մանր միաբջիջ օրգանիզմներ են՝ դրանց կարելի է տեսնել խմորվող հեղուկի կաթիլը միկրոսկոպի տակ զիտելու միջոցով: Նրանք լինում են ձվաձև, գնդաձև, եր- շիկաձև, անգամ տանձաձև: Շաքարասունիկը կազմված է շատ բարակ թաղանթից, պրոտոպլազմայից և կորիզից: Պրոտոպլազ- ման հատիկավոր կիսահեղուկ նյութ է: Բարձր ջերմության և սնդարար միջավայրի ազդեցության տակ շաքարասունիկերի արտաքին տեսքը փոփոխության է ենթարկվում: Շաքարասուն- կերը բազմանում են բողբոջմամբ, կամ սպորների միջոցով: Առաջին դեպքում շաքարասունիկի վրա փոքր ուռուցք (բողբոջ) է առաջանում, որը աստիճանաբար մեծանալով հասնում է մայր բջիջի մեծության, անջատվում է և գործում որպես մի նոր ա- ռանձին բջիջ:



Նկ 6. Շաքարասունիկերի բողբոջումը:
a - բողբոջի զարգացման սկիզբը:

սունիկը բողբոջման ճանապարհով կարող է տալ մի քանի մի- լիոն նոր բջիջներ: Ջերմության բարենպաստ պայմաններում (20—30° C) խմորվող հեղուկի մեջ շաքարասունիկերը, որպես կանոն, բողբոջմամբ են բազմանում: Անբարենպաստ պայման- ներում, երբ շաքարասունիկերն անհրաժեշտ սնունդ չեն ստանում, նրանց բազմացումը տեղի է ունենում սպորառաջացման մի- ջոցով: Այս դեպքում բջիջի ներսում պրոտոպլազման բաժանվում է երկու կամ չորս մասի, որոնցից յուրաքանչյուրը ծածկվում է թաղանթով և սպոր կազմակերպում: Այս սպորները, ընկնելով

Այդ նոր բջիջն ի՞նչ հերթին ընդունակ է բող- բոջելու և նոր բջիջ տալու: Բարենպաստ պայման- ներում նոր բջիջների ա- ռաջանալը շատ արագ է ընթանում: Բողբոջման պրոցեսը՝ բողբոջը գոյա- նալուց մինչև նոր բջիջի անջատվելը, տևում է 10- 15՝ րոպե: Մի օրվա ըն- թացքում մեկ շաքարա-

ջերմութեան և սննդառութեան բարենպաստ պայմանների մեջ, շաքարասուենկերի սովորական բջիջներ են տալիս:

Բերքահավաքի ժամանակ շաքարասուենկերը մեծ քանակութեամբ գտնվում են խաղողի պտուղների վրա: Խաղողը ջարդելիս նրանք ընկնում են քաղցուի մեջ, բազմանում են և սպիրտային խմորում առաջացնում: Աշնանն այգում մնացած շաքարասուենկերը, ընկնելով հողի վրա, սպորակալում են: Սպորները ձմեռում են հողի մեջ և հաջորդ տարին, տաք եղանակներն սկսելուն պես միջատների կամ քամու միջոցով նորից տարածվում են այգում և ընկնում պտուղների վրա: Հետագայում այդ շաքարասուենկերը խաղողի հետ միասին փոխադրվում են գինեգործարան և այսպես շարունակ: Շաքարասուենկերի տարածման և պահպանման գործում որոշ միջատներ խոշոր դեր են կատարում: Հատկապես նրանց տարածման համար քայախի ճանճը (դրոզոֆիլը) մեծ նշանակություն ունի: Կան միջատներ, որոնք սնվում են շաքարասուենկերով, սակայն միջատների աղիքներում շաքարասուենկերը չեն վնասվում և կարող են անգամ միջատների աղիքներում ձմեռել, չկորցնելով իրենց կենսունակությունը:

Շաքարասուենկերը, ինչպես մյուս բոլոր կենդանի օրգանիզմները սնվում և շնչում են: Սնվելու համար նրանք պահանջում են գլխավորապես ազոտային նյութեր, ածխաջրատներ (շաքարներ), հանքային նյութեր, որոնցից առաջին հերթին ֆոսֆորաթթվային կալիումի աղեր:


Ընդհանրապես, այդ բոլոր նյութերը բավարար քանակությամբ գտնվում են քաղցուի մեջ: Եթե թված նյութերից մեկն ու մեկը պակաս քանակով լինի քաղցուի մեջ, շաքարասուենկերի գործունեությունը զգալիորեն դանդաղում է և խմորման պրոցեսը խանգարվում է: Շաքարասուենկերի նորմալ աշխատանքը կարելի է վերականգնել քաղցուին ավելացնելով պակասող նյութը:

Շաքարասուենկերը շնչառութեան համար պահանջում են թթվածին: Թթվածինը նպաստում է շաքարասուենկերի ուժեղ բազմացմանը, սակայն առատ թթվածնի առկայությամբ շաքարասուենկերի սպիրտ առաջացնելու ունակությունը թուլանում է: Այդ տեղի է ունենում այն դեպքում, երբ շաքարասուենկերը գտնվում են խմորվող քաղցուի մակերեսի վրա: Ընդհակառակը, երբ շաքարասուենկերը գտնվում են քաղ-

ցուել խորը շերտերում՝ որտեղ թթվածինը համեմատած քիչ է լինում, նրանց բազմացումը թեև դանդաղ է ընթանում, բայց սպիրտ առաջանալու պրոցեսն արագ է կատարվում և համեմատաբար թունդ գինի է ստացվում:

3. ՇԱԲԱՐԱՍՈՒՆԿԵՐԻ ԱՅԼԱՏԵՍԱԿՆԵՐԸ

Քաղցուի մեջ եղած շաքարասուենկերը միանման չեն: Գոյություն ունեն շաքարասուենկերի բազմաթիվ այլատեսակներ, որոնք իրարից տարբերվում են ոչ միայն իրենց ձևով, այլ և խմորումը կատարելու և սպիրտ առաջացնելու էներգիայով, գինու որակի վրա թողած ազդեցությամբ և մի շարք այլ հատկութուններով: Կան շաքարասուենկերի այլատեսակներ, որոնք խմորման ընթացքում շատ քիչ սպիրտ են առաջացնում, և ընդհակառակը, կան և այնպիսիները, որոնք ոչ միայն մեծ քանակությամբ սպիրտ են տալիս, այլ և խմորումը կարճ ժամանակամիջոցում ավարտում են: Հետազոտությունները ցույց են տվել, որ գինու որակը զգալի չափով կախված է շաքարասուենկերի այլատեսակներից, որոնք կատարել են քաղցուի խմորումը: Որոշ շաքարասուենկեր հազորդում են գինուն անդուրեկան համ ու հոտ, խմորումից հետո գինուց դժվարությամբ են անջատվում, դժվար են նստում, որի հետևանքով գինին լավ չի պարզվում և պղտոր է մնում: Նման շաքարասուենկերին երբեմն «խմորման մորասուենկեր» են անվանում:



Նկ. 7. էլիպսոսակ շաքարասուենկեր:

Քաղցուի խմորման ընթացքում ամենագլխավոր դերը կատարում են գինու իսկական շաքարասուենկերը, որոնք կոչվում են էլիպսոսակ շաքարասուենկեր (Saccharomyces ellipsoideus):

էլիպսոսակ շաքարասուենկեր.— Այս շաքարասուենկերն ունեն էլիպսոսի ձև, այդ պատճառով «էլիպսոսակ» անունն են ստացել (Նկ. 7):

էլիպսոսակ շաքարասուենկերը սպիրտային խմորումը

կատարում են լրիվ, այն էլ կարճ ժամանակում: Նրանք խմորման ընթացքում ավելի շատ սպիրտ են առաջացնում, քան մյուս բույրը շաքարասունկերը. սպիրտի ազդեցութեանը լավ են դիմանում և սպիրտային խմորումը կարող են շարունակել նույնիսկ այն դեպքում, երբ գինու թնդությունը հասնում է 16—18⁰: Սակայն, գործնականում սպիրտային խմորումն ավարտված է համարվում, երբ գինու թնդությունը կազմում է 15—16⁰, քանի որ այդ թնդության դեպքում շաքարասունկերի աշխատանքը խիստ թուլանում է և մեծ մասամբ կանգ է առնում: Այդ հանգամանքը լայն չափով ոգտագործում են արտադրութեան մեջ թունդ քաղցր գինիներ պատրաստելիս: Խմորվող քաղցուի թրնդությունը բնական խմորման կամ արհեստական թնդացման միջոցով 15⁰—16⁰ հասցնելուց հետո, քաղցուի մնացած շաքարն այլևս չի խմորվում և մնում է գինու մեջ:

Պաստյարի շաքարասունկերը (*Saccharomyes Pasterianus*): Այս շաքարասունկերը երշիկաձև են, սպիրտային խմորումը դանգաղ են կատարում, սպիրտի ազդեցութեանը լավ են դիմանում: Գինու որակի վրա լավ են ազդում:

Սրածայր շաքարասունկեր. — (*Saccharomyces apiculatus* — սպիկուլատուսներ): Այս շաքարասունկերը ընդհանուր առմամբ ձվաձև են, սակայն երկու ծայրերը սրացած: Սրանք լայն չափով տարածված են բնության մեջ՝ գտնվում են մեծ քանակությամբ քաղցր մրգերի և խաղողի պտուղների վրա: Սրածայր շաքարասունկերը հանդես են գալիս խմորման սկզբում և սրանց աշխատանքը դադարում է, երբ խմորվող քաղցուի մեջ սպիրտը հասնում է 4⁰—5⁰-ի: Գրանից հետո սկսում են ինտենսիվ կերպով աշխատել էլիպսոձև շաքարասունկերը: Պարզված է, որ սրածայր շաքարասունկերի աշխատանքի հետևանքով առաջացած պրոդուկտները բացասաբար են ազդում թե՛ էլիպսոձեղ շաքարասունկերի գործունեության և թե՛ գինու որակի վրա, գինուն հաղորդում են անդուր դառնություն: Այդ պատճառով, դեռ խմորումը չսկսած, համապատասխան միջոցներ են ձեռք առնում՝ սրածայր շաքարասունկերի աշխատանքը սահմանափակելու համար:

Բացի նշված շաքարասունկերից, քաղցուի մեջ գտնվում են նաև ուրիշ սունկեր, ինչպես, օրինակ, միկոգերմա, տորուլա,

պիխիա, վիլիա և այլն: Սրանք խմորման ժամանակ առաջա-
ցնում են գինու որակի վրա վատ ազդող պրոդուկտներ, հենց
դրա համար էլ դրանց անվանում են խմորման մոլասունիկեր:
Անհրաժեշտ է նշել, որ շաքարասունիկերի և շաքարաքն-
կանման օրգանիզմների հետ միասին քաղցուի մեջ պատահում
են նաև զանազան բորբոսասունիկեր և բակտերիաներ: Գինու
հիվանդություններից շատերն առաջանում են բակտերիաների
գործունեության հետեվանքով, ինչպես օրինակ, գինու քացա-
խելը, որ տեղի է ունենում քացախային բակտերիաների միջո-
ցով: Տեխնոլոգիական համապատասխան աշխատանքներ և հա-
տուկ մեթոդներ (սուլֆիտացիա, շաքարասունիկերի մաքուր կուլ-
տուրա, Սեմիշոնի մեթոդը և այլն) կիրառելու միջոցով միան-
գամայն հնարավոր է կասեցնել վնասակար միկրոօրգանիզմնե-
րի գործունեությունը և ստանալ առողջ և բարձր որակի գինի:
Այդ մեթոդներից առանձին ուշադրության արժանի է շաքարա-
սունիկերի մաքուր կուլտուրայի կիրառումը քաղցուի խմորման
համար:

4. ՇԱՔԱՐԱՍՈՒՆԿԵՐԻ ՄԱՔՈՒՐ ԿՈՒՆՏՈՒՐԱՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԿԻՐԱՌՈՒՄԸ

Ինչպես տեսանք, քաղցուի մեջ եղած շաքարասունիկերը
միանման չեն: Կան շաքարասունիկերի տարբեր տեսակներ, այլա-
տեսակներ, որոնք իրենց հերթին ունեն բազմաթիվ ռասաներ:
Շաքարասունիկերի ամեն մի տեսակը, այլատեսակը, անգամ ու-
սան իր հատկությունն ունի և որոշակի ազդեցություն
է գործում խմորման արդյունքի, հետեվապես և գինու որակի
վրա: Այսպիսով, գինու որակը մեծ չափով կախված է նրանից,
թե շաքարասունիկերի ինչպիսի ռասայի միջոցով է տարվել
քաղցուի խմորումը: Այն դեպքում, երբ խմորումը կատարվում
է ինքնարերարար, այսինքն խաղողի պտղից քաղցուի մեջ ան-
ցած շաքարասունիկերի միջոցով, ստացված գինին լինում է
տարբեր որակի, նայած խմորման ընթացքում շաքարասունիկ-
եր այլատեսակը և ռասան է գերիշխել: Ռացիոնալ հիմ-
քերի վրա դրված գինեգործարաններում ներկայումս խմո-

բումը տարվում է ոչ թե ինքնաբերաբար, այլ շաքարասունկե-
րի մաքուր կուլտուրայի միջոցով: Շաքարասունկի մեկ բջիջից
առաջացած սերունդը կոչվում է մաֆուր կուլտուրա: Արտադրու-
թյունը շաքարասունկերի մաքուր կուլտուրան ստանում է գի-
տահետազոտական լաբորատորիաներից, որտեղ պատրաստում են
այդ կուլտուրաները: Ստացված մաքուր կուլտուրան բազմաց-
նում են: Դրա համար գինեգործական սեղոնից մոտ 5 օր առաջ
հավաքում են լավ հասունացած և առողջ խաղող, որից ստա-
ցած քաղցուն լցնում են պղնձյա լավ կլայեկած կաթնայի մեջ և հ-
աացնում 20—30 րոպե, որպեսզի քաղցուի մեջ եղած շաքարասուն-
կերը և այլ միկրոօրգանիզմները ոչնչանան, ապա տաք դրու-
թյամբ լցնում են լավ մաքրած և նոր շոգեհարած տակաոի
մեջ: Այնուհետև, երբ տակաոի մեջ քաղցուի ջերմությունը
կիջնի մինչև 30°C ավելացնում են զգուշությամբ շաքարա-
սունկերի մաքուր կուլտուրա: Երկու-երեք օրից հետո, երբ
քաղցուն կսկսի ուժեղ խմորվել, այն օգտագործում են որպես
խմորման մերան: 100 դեկալիտր քաղցուին տալիս են միջին
թվով երկու—երկու ու կես դեկալիտր մերան: Շաքարասունկերի
մաքուր կուլտուրայի կիրառումն ինքնաբերաբար կատարվող
խմորման համեմատությամբ հետևյալ առավելություններն
ունի.

1. Խմորումն արագ է սկսվում և համեմատաբար կարճ
ժամանակամիջոցում ավարտվում:
 2. Գինին առողջ է ստացվում, շուտ է պարզում, հիվան-
դություններին լավ է դիմանում:
 3. Գինու հետազա հնացման և հասունացման պրոցեսնե-
րը նորմալ և հաջող են ընթանում:
 4. Գինին մաքուր և դուրեկան համ է ունենում:
 5. Գինին համեմատաբար մաքուր և լավ բուլկետ է ունե-
նում:
 6. Գինին միջին թվով 0,5—1⁰ ավելի սպիրտ է պարունա-
կում, քան ինքնաբերաբար խմորման դեպքում:
- «Արարատ» արեստը խերես գինի պատրաստելիս, կիրա-
ռում է տեղական շաքարասունկերից ստացված № 53
ուսան:

5. ՇԱՔԱՐԱՍՈՒՆԿԵՐԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՌԻԹՅԱՆ
ՎՐԱ ԱԶԳՈՂ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Շաքարասունկերը կարող են զարգանալ և գործել որոշակի պայմաններում: Նրանց վրա ազդում են մի շարք պայմաններ: Այդ պայմաններից են՝ ջերմությունը, թթվածինը, քաղցուի առանձին բաղադրիչ նյութերը (շաքարը, թթուները, ազոտանյութերը, հանքային նյութերը), խմորման ընթացքում առաջացած պրոդուկտները (սպիրտ, ցնդող թթուներ), ծծմբային անհիդրիդը (ծծմբային գազը) և այլն:

Ջերմությամբ ազդեցությունը.— Փորձերը ցույց են տվել, որ շաքարասունկերն առանձնապես լավ են զարգանում և գործում 22—30° ջերմության պայմաններում: 30°-ից բարձր ջերմության դեպքում շաքարասունկերը, ճիշտ է, շարունակում են գործել, սակայն համեմատաբար թույլ տեմպով: 35°-ից բարձր ջերմության տակ շաքարասունկերը շատ վատ են զգում իրենց և նրանց գործունեությունը խիստ թուլանում է, իսկ 40—42°-ի դեպքում նրանց աշխատանքը բոլորովին կանգ է առնում, և քաղցուն այլևս չի խմորվում: Եթե քաղցուն 42—45° մեկից—մեկ ու կես ժամ տեմպությամբ տաքացնենք, նրա մեջ եղած շաքարասունկերը ոչնչանում են, նույնը տեղի է ունենում, երբ քաղցուն 60—65° տաքացնում են 10—15 րոպե տեմպությամբ: Չոր վիճակում շաքարասունկերը դիմանում են մինչև 100°-ի, իսկ 115°-ի դեպքում՝ նրանք մահանում են: Նրանց սպորները ոչնչանում են 125° ջերմության տակ:

Շաքարասունկերը շատ դանդաղ են զարգանում և գործնականում խմորումը չեն սկսում՝ քաղցուի ջերմությունը 15°-ից ցածր լինելու դեպքում: Սակայն, եթե խմորումն արդեն սկսվել է, խմորվող հեղուկի ջերմաստիճանի իջեցումը այնքան ուժեղ չի ներգործում շաքարասունկերի վրա, ինչպես խմորման սկզբում: Շաքարասունկերը չեն կորցնում իրենց կենսունակությունը շատ ցածր ջերմաստիճանում, նրանք դիմանում են մինչև—200° C ջերմությունը, բարենպաստ ջերմության պայմաններում նորից վերսկսում են իրենց գործունեությունը:

Քաղցուի խմորումը նորմալ տանելու համար աշխատում են խմորվող հեղուկի ջերմությունը խմորման ընթացքում պահպանել 22—30°-ի սահմաններում:

Թրվածնի ազդեցութիւնը.—Շաքարաստուենկերը բազմանում են և գործում աերոր և անաերոր պայմաններում: առաջին դեպքում նրանք թթվածինն օդից են ստանում, երկրորդ դեպքում՝ այն միջավայրից, որտեղ ընթանում է նրանց կյանքը: Աերոր պայմաններում խմորվող քաղցուի շաքարից առաջանում է անհշան քանակութամբ սպիրտ, շաքարի մեծ մասը քայքայվում է լրիվ, տալով ածխաթթու և ջուր: Անաերոր պայմաններում շաքարաստուենկերը քայքայելով շաքարը, առաջացնում են սպիրտ, ածխաթթու գազ և ուրիշ այլ նյութեր, որոնց մասին արդեն մատնանշված է: Փորձերը ցույց են տվել, որ թթվածինն ուժեղ չափով նպաստում է շաքարաստուենկերի բազմացմանը: Այն դեպքում, երբ քաղցուի խմորումն անտրմալ է կատարվում, շաքարաստուենկերի թույլ բազմացման պատճառով, քաղցուն անձրևացման են ենթարկում թթվածնով հարստացնելու նպատակով: Այդ միջոցառումը զգալիորեն ուժեղացնում է շաքարաստուենկերի բազմացումը: Սակայն, այդ միջոցին պետք է դիմել միայն անհրաժեշտութեան դեպքում, քանի որ խմորվող քաղցուն օդով հագեցնելն (քաղցուի անձրևացումը) ունի և բացասական ազդեցութեան պատրաստովելիք գինու որակի համար: Քաղցուի օդով հագեցնելու բացասական ազդեցութեանն արտահայտվում է հետեվյալ ձևով.

1. Քաղցուի ներկանյութերն օքսիդանում են:
2. Սպիրտակ գինիները որոշ չափով գորշանում են:
3. Արոմատիկ նյութերի և սպիրտի մի մասը ցնդում է:
4. Շաքարի մի մասը քայքայվում է լրիվ, առաջացնելով ածխաթթու և ջուր:
5. Կարմիր գինիների որակը խիստ ընկնում է:

Շաքարի ազդեցութիւնը.—Քաղցուի լրիվ խմորումը կախված է նրա մեջ գտնված շաքարի քանակից: Պարզված է, որ խմորումը լավ և նորմալ է ընթանում, երբ քաղցուն պարունակում է 15—20% շաքար, սակայն որոշ շաքարաստուենկեր բարենպաստ պայմաններում կարող են քաղցուն լրիվ խմորել, անգամ երբ շաքարի քանակը քաղցուի մեջ կազմում է 25% և ավելին: Այս տեսակետից աչքի են ընկնում հասակապես Հայաստանի տեղական շաքարաստուենկերը, որոնք անգամ 30% շաքար պարու-

նակող քաղցուն խմորում են լրիվ, տալով բնական խմորման միջոցով 18⁰ Թնդությամբ գինի (էջիմածնի շրջան՝ Աղավնատուն): Ընդհանրապես, պետք է ասել, որ շաքարի մեծ քանակությունը թուլացնում է շաքարասունկերի գործունեությունը և այնքան ուժեղ է թուլացնում, որքան շաքարի տոկոսը բարձր է լինում. դրա հետեվանքով սպիրտային խմորումը շատ թույլ է ընթանում և շարունակվում է ամիսներ, անգամ տարիներ: Հաստատված է, որ 35⁰/₀ և ավելի շաքար պարունակելու դեպքում քաղցուի խմորումը ծայր աստիճան դանդաղ է կատարվում և որոշ քանակությամբ սպիրտ առաջանալուց հետո խմորումը դադարում է և գինու մեջ մնում է զգալի քանակությամբ չխմորված շաքար, որը և գինուն քաղցրություն է տալիս: Հենց դրա վրա է հենված թունդ քաղցր և լիկյորային գինիների պատրաստման տեխնոլոգիան:

Թթուների ազդեցությունը.— Շաքարասունկերը լավ են գործում թթու միջավայրում, չնայած որ նրանք կարող են ապրել և չեղոք միջավայրում: Խմորումն ամենից լավ է ընթանում 8—10⁰/₀₀ թթվության դեպքում: Թթուների այդ քանակը բարենպաստ ազդեցություն է գործում շաքարասունկերի աշխատանքի վրա և խիստ ճնշում է գինու համար վնասակար միկրոօրգանիզմների զարգացումը: Քաղցուն բավականաչափ թթվություն պարունակելու դեպքում շաքարասունկերը միանգամայն նորմալ են աշխատում, մինչդեռ վնասակար միկրոօրգանիզմներն իրենց լավ չեն զգում և նրանց սաղմերը համարյա չեն զարգանում: Ընդհակառակը, պակաս թթվություն պարունակող քաղցուի մեջ հիվանդաբեր միկրոօրգանիզմներն ուժեղ են զարգանում, իսկ շաքարասունկերի բազմացումը և գործունեությունը զգալի չափով թուլանում է:

Տարբեր թթուներ շաքարասունկերի կենսունակության և գործունեության վրա տարբեր ներգործություն ունեն: Խնձորաթթուն պակաս չափով է արգելակում խմորումը, քան գինեթթուն: Շաքարասունկերի վրա ամթաթթուն աննշան ազդեցություն ունի նրանց անբոբ զարգացման պայմաններում: Ինչ վերաբերում է խմորման հետեվանքով առաջացած թթուներին, պետք է ասել, որ սաթաթթուն և կաթնաթթուն իրենց աննշան քանակության շնորհիվ խմորասունկերի և հետևապես

խմորման ընթացքի վրա համարյա ազդեցութիւն չունեն: Ընդհակառակը, քացախաթթուն, պրոպյունաթթուն և յուղաթթուն, որոնք գոյանում են նույնպես խմորման ընթացքում, չափազանց վնասակար են շաքարասունկերի համար և շաքարասունկերն այդ թթուների նկատմամբ խիստ զգայուն են: Փորձերը ցույց են տվել, որ խմորվող քաղցուի մեջ $2^{0}/_{00}$ (1000 սմ³ հեղուկի մեջ 2 գրամ) քացախաթթու պարունակելու դեպքում, սպիրտային խմորումը դեռևս ընթանում է, թեև դանդաղ տեմպով: Ըստ Վորտմանի և Վինգիշի, խմորումն աննորմալ է ընթանում, երբ քաղցուի մեջ քացախաթթվի քանակը հասնում է $2^{0}/_{00}$ -ի:

Ազոտանյութերի ազդեցութիւնը.— Խմորման արագութիւնն ու ինտենսիվութիւնը կախված է նաև քաղցուի մեջ պարունակվող ազոտանյութերի քանակից: Փորձերը ցույց են տվել, որ քաղցուն շաքարի մաքուր լուծույթով հինգ անգամ նոսրացնելու դեպքում շաքարասունկերի բազմացումը շատ թույլ է ընթանում ազոտանյութերի պակասութեան պատճառով: Հաստատված է, որ խաղողի քաղցուն ընդհանրապես պարունակում է շաքարասունկերի նորմալ զարգացման համար բավարար քանակութեամբ ազոտանյութեր, այդ պատճառով էլ քաղցուին սովորաբար ազոտային միացութիւններ չեն ավելացնում: Որպես կանոն, կարելի է ասել, որ խաղողի որակավոր սորտերն ավելի շատ ազոտ են պարունակում, քան քանակական սորտերը: Սակայն, ազոտի մեծ պարունակութիւնը քաղցուի մեջ այնքան էլ ցանկալի չէ, քանի որ ազոտով հարուստ գինին հիվանդութիւններին հեշտ է ենթարկվում:

Եթե պարզվում է, որ քաղցուն շատ քիչ ազոտ է պարունակում, ապա այդ քաղցուին կարելի է ավելացնել ազոտանյութերով համեմատաբար հարուստ քաղցու: Շաքարասունկերը քաղցուի մեջ պարունակվող ազոտի 7—55 $0}/_{0}$ -ը ծախսում են իրենց սննդի համար:

Հանքային նյութերի ազդեցութիւնը.— Առանց հանքային նյութերի շաքարասունկերն ապրել և գործել չեն կարող: Սովորաբար քաղցուն պարունակում է շաքարասունկերի նորմալ զարգացման համար բավարար քանակութեամբ հանքային նյութեր: Սակայն, եթե խմորումը թույլ է կատարվում և ձգձգվում

է, քաղցուին ֆոսֆորային միացութիւններ ավելացնելը իրստ ցանկալի է: Այդ նպատակով կիրառում են ֆոսֆորաթթվային ամոնիում, տալով մեկ գեկալիտը քաղցուին 1—3 գրամ: Ֆոսֆորը խմորման պրոցեսում լսոշոր դեր է կատարում: Օրինակ, ֆոսֆորն զգալի չափով արագացնում է խմորման պրոցեսը, մանաւանդ խմորման առաջին ֆազայում, և այնքան ուժեղ, որքան ֆոսֆորի քանակը շատ է:

Սպիրտի ազդեցութեանը.—Սպիրտն, ինչպես տեսանք, խմորման ամենագլխավոր պրոդուկտն է հանդիսանում և առաջանում է շաքարի քայքայումից: Մի գրամ շաքարից խմորման միջոցով ստացվում է 0,6⁰ կամ 0,6ամ³ ամ սպիրտ: 20⁰ շաքար պարունակող քաղցուից ստացվում է 12⁰ թնդությամբ գինի (0,6 × 20 = 12⁰): Շաքարասուենկերի բոլոր տեսակների և այլատեսակների վրա սպիրտը ճնշող ազդեցութիւն է գործում, սակայն, մյուս կողմից շաքարասուենկերը սպիրտի քանակի ավելացմանը հեշտությամբ են դիմանում և լավ են հարմարվում, քան մյուս միկրոօրգանիզմները: Բոլոր տեսակի շաքարասուենկերը սպիրտին միանման չեն դիմանում, որածայլ խմորասուենկերը (սպիկուլյատուսները) խմորվող հեղուկի մեջ 4—5⁰ սպիրտ գոյանալու դեպքում արդեն դադարում են խմորում կատարել: Սպիրտի ազդեցութեանը վատ են դիմանում գինու վնասակար միկրոօրգանիզմները (միկոգերման, բորբոսասուենկերը, բակտերիաները և այլն): Այս հանգամանքը շատ բարենպաստ ազդեցութիւն է գործում գինու որակի վրա, քանի որ սպիրտի բարձր քանակութիւնը խմորվող հեղուկի մեջ վնասակար միկրոօրգանիզմներին զարգանալու և գործելու հնարավորութիւն չի տալիս: Սպիրտի ազդեցութեանը էլիպսաձև շաքարասուենկերն ու նրանց ռասաները ամենից լավ են դիմանում: Ստացված են շաքարասուենկերի մաքուր կուլտուրաներ, որոնք դիմանում են 17—18⁰ սպիրտի: Հայաստանի շաքարասուենկերը սպիրտի նկատմամբ մեծ դիմացկանութիւն ունեն: Նրանք խմորումը հասցնում են մինչև 18⁰ և ավելի: Այսպիսով, բնական խմորման միջոցով ստացվում է խիտ թունդ գինի՝ 18—19⁰ թնդությամբ: Այդպիսի գինիները որոշ հաջող տարիներում ստացվում են հատկապես էջմիածնի շրջանում՝ Աղավնատան ևնթաշրջանում: Սովորաբար շաքարասուենկերի գործունեութիւնը դադարում է:

երբ խմորվող հեղուկի մեջ սպիրտի քանակը հասնում է միջին
 թվով 14—15⁰-ի: Այս դեպքում մնացած շաքարն այլևս չի
 խմորվում և մնում է գինու մեջ: Թունդ և քաղցր գինիներ
 պատրաստելու ժամանակ, հաճախ խմորումը դադարեցնում են
 խմորվող հեղուկին օեկտիֆիկացիոն մաքուր սպիրտ ավելացնե-
 լու միջոցով: Հաստատված է, որ սպիրտը շաքարասուենկերի վրա
 անհամեմատ ավելի ուժեղ է ազդում, քան շաքարը. մեկ գրամ
 սպիրտի կոնսերվացնող ազդեցությունը հավասար է 6 գրամ
 շաքարի ազդեցությանը: մեկ ⁰/₁₀ շաքար ընդունում են, որպես
 մեկ կոնսերվացնող միավոր, հետևապես, մեկ գրամ սպիրտը
 հավասար է 6 կոնսերվացնող միավորի: Գիտնական Դելլեն սահ-
 մանել է մի կանոն, ըստ որի, 80 այսպիսի կոնսերվացնող միա-
 վորները դադարեցնում են խմորումը: Եթե դեսերտ գինին ունի
 80 և ավելի կոնսերվացնող միավոր, ապա նա ընդհանրապես
 խմորվել չի կարող և կայուն գինի է հանդիսանում, իսկ, եթե
 այդ միավորները 80-ից պակաս են, գինին ենթակա է խմոր-
 ման: Ենթադրենք, որ դեսերտ գինին պարունակում է 8⁰/₁₀
 (100 սմ³-ում 8 գրամ) սպիրտ և 20⁰/₁₀ շաքար, այդ գինու
 կոնսերվացնող միավորները կազմում են 8 · 6 = 48 կոնսերվա-
 ցնող միավոր սպիրտ և 20 · 1 = 20 կոնսերվացնող միավոր շա-
 քար՝ ընդամենը (48 + 20) 68 կոնսերվացնող միավոր: Այդ ցույց
 է տալիս, որ գինին կայուն չէ և կարող է որոշ հավելված
 բերենք մի ուրիշ օրինակ. գինին ունի 12⁰/₁₀ սպիրտ և 20⁰/₁₀
 շաքար. այդ գինու կոնսերվացման միավորները կազմում են
 12 · 6 + 20 = 92, դա նշանակում է, որ գինին կայուն է և չի խմոր-
 վում: Մի աստիճան սպիրտը (1⁰/₁₀) տոկոսի (կշռային տոկոս)
 վերածելու համար պետք է աստիճանների թիվը բազմապատ-
 կել ⁴/₅ կամ է 0,8-ով: Այսպես՝ 15⁰ հավասար է $\frac{15 \cdot 4}{5} = 12⁰/₁₀$

սպիրտի, այսինքն՝ 100 խոր, սանտիմետր գինու մեջ կա 12 գրամ
 սպիրտ:

Բարձր կարգի սպիրտները կամ այսպես կոչված սիվո-
 էային յուղերը, շաքարասուենկերի բազմացման վրա ավելի
 ճնշող ազդեցություն ունեն, քան գինու սպիրտը (էտիլ սպիր-
 տը): Բարձր ջերմության պայմաններում շաքարասուենկերը
 սպիրտի ազդեցությանը պակաս դիմացկուն են, քան ցածր ջեր-
 մության դեպքում:

Ծծմբային անհիդրիդի (SO₂) ազդեցությունը. — Ծծմբային ան-
 հիդրիդը շաքարասուենկերի և մանավանդ բոլոր մյուս միկրոօր-

զանիզմների վրա ճնշող ազդեցութիւն է գործում, սակայն, միևնույն ժամանակ, շաքարասունկերը համեմատաբար հեշտ են ընտելանում ծծմբային անհիդրիդի բարձր զոզաներին: Ծծմբային անհիդրիդը շաքարասունկերի տարբեր տեսակների և այլատեսակների վրա միանման չի ազդում: Ծծմբային անհիդրիդին ամենից լավ դիմանում են նույնպես էլիպսոսն շաքարասունկերը: Այդ շաքարասունկերը կարող են ընտելանալ դիմանալու ծծմբային անհիդրիդի այնպիսի զոզաների, որոնք մահացու են ոչ միայն վնասակար միկրոօրգանիզմների, այլ և մյուս ոչ ցանկալի շաքարասունկերի համար: Այդ է պատճառը, որ ծծմբային անհիդրիդը գինեգործութեան մեջ լայն կիրառում ունի, մանավանդ, երբ խմորումը տարվում է շաքարասունկերի մաքուր կուլտուրայի միջոցով: Շաքարասունկերի դիմացկանութիւնը ծծմբային անհիդրիդի նկատմամբ կախված է որոշ չափով քաղցուի ջերմութիւնից: Յաճախ ջերմութեան դեպքում նրանց դիմացկանութիւնը ցածր է լինում, բարձր ջերմութեան դեպքում՝ այդ դիմացկանութիւնը զգալիորեն բարձրանում է: Խոշոր նշանակութիւն ունի նաև այն զրութիւնը, որի մեջ գտնվում են շաքարասունկերը (հանգիստ վիճակում, թե խմորման ֆազայում): Հանգիստ վիճակում շաքարասունկերը SO_2 -ին ավելի լավ են դիմանում, քան երբ նրանք խմորման ֆազայում են գտնվում:

Այդ դիմացկանութեան համար պակաս նշանակութիւնն է ունի նաև ծծմբային անհիդրիդի ներգործութեան տեւողութիւնը: Թե ինչպիսի ազդեցութիւն են գործում շաքարասունկերի գործունեութեան վրա ծծմբային անհիդրիդի տարբեր զոզաները, երևում է հետևյալ աղյուսակից.

Աղյուսակ VI

SO_2 -ի զոզան մգ/լիտր	Ցույց տված ազդեցութիւնը			
	Ոչ մի ազդեցութիւն չի հետաձգում	է խմորման	գործում պրոցեսը	6—10 ժամով
10	»	»	»	»
20-30	»	»	»	18—24
50	»	»	»	»
75	»	»	»	2—3 օրով
100	»	»	»	4
180	»	»	»	6
250	»	»	»	8
350	»	»	»	10
450	»	»	»	40
750	»	»	»	262

Ըստ Պաստյորի ինստիտուտի տվյալների շաքարասունկե-
րը մահանում են ձմեռային անհիդրիդի հետեվյալ դոզաներից,
հետեվյալ ժամանակամիջյում՝

SO ₂ -ի	1350 մգ լիտր	ներգործելիս	15 րոպեի	ընթացքում
»	270	»	»	60 րոպեի »
»	111	»	»	Մեկ օրվա »
»	50	»	»	Մի քանի օրվա »

Թարմ քաղցուի խմորումը շառերկար ժամանակով կանգ-
նեցնելու համար սովորաբար տալիս են մեկ լիտր քաղցուին
մեկ զրամ ձմեռային անհիդրիդ: Դիտողությունները և արտա-
դրական լաճն փորձերը ցույց են տվել, որ Հայաստանի շաքա-
րասունկերը շատ լավ են դիմանում ձմեռային անհիդրիդին:


VIII. ՍԵՂԱՆԻ ԿԱՐՄԻՐ ԳԻՆՈՒ ՊԱՏՐԱՍԵԼԸ

1, ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կարմիր գինիները պատրաստում են խաղողի՝ սև սորտե-
րից: Կարմիր գինիների պատրաստման գլխավոր առանձնա-
հատկությունը նրանումն է կայանում, որ քաղցուի խմորումը
կատարվում է խաղողի բոլոր կարծր նյութերի (մաշկ, կորիզ-
ներ, չանչ) կամ դրանց մի մասի հետ, այնինչ սպիտակ կամ
վարդագույն գինիներ պատրաստելիս խմորվում է միայն քաղ-
ցուն, առանց այդ կարծր նյութերի մասնակցության: Կարմիր
գինու խմորումը կատարում են փլուշի մասնակցությամբ, այն
նպատակով, որ գինու համար անհրաժեշտ ներկանյութերը, դա-
բաղանյութերը, արամատիկ նյութերը փլուշից խմորման ըն-
թացքում անցնեն քաղցուի մեջ: Այդ հնարավոր է միայն
խաղողի բջիջները մահացնելու միջոցով, որտեղ գտնվում են
այդ նյութերը, իսկ այդ իրականացվում է խմորումը փլուշի
վրա կատարելու միջոցով: Բանն այն է, որ խմորման ընթաց-
քում գոյացած ածխածինը զազի մթնոլորտում բջիջները մա-
հանում են, իսկ ներկանյութերը և դաբաղանյութերը հեղուկի
մեջ առաջացած սպիրտի ներգործությամբ բջիջներից անցնում
են քաղցուի մեջ: Թթուները, ինչպես և խմորման հետեվանքով
ջերմության բարձրացումը նպաստում են այդ նյութերի լուծ-

վերուն: Մաշկից քաղցուր մեջ են անցնում նաև արումատիկ նյութերը: Սկզբում թույլ գունավորված քաղցուն խմորման ընթացքում հեռոզհեռե ինտենսիվ գունավորում է ընդունում: Բացի այդ, նա աստիճանաբար ստիպ է դառնում: Կարմիր մուգ գինիները և այն գինիները, որոնք երկար ժամանակով չեն հնացվում, իրատ ցանկալի է, որ նրանք համեմատաբար քիչ դաբաղանյութեր պարունակեն: Դրա համար խաղողը վերամշակելու ժամանակ չանչերը սկզբից և եթ լրիվ կերպով անջատում են և նրանք խմորման պրոցեսին այլևս մասնակցություն չեն տենենում: Ընդհակառակը, կուպափի (խառնուրդի) կամ երկարատե պահելու (հնացնելու) համար նախատեսված կարմիր գինիները պատրաստում են քաղցուն ամբողջ չանչի կամ նրա մի մասի հետ խմորվելու միջոցով: Սակայն պետք է լավ հիշել, որ եթե չանչերը կանաչ են ու վատ հասունացած, նրանք վիճուեն, ինչպես արդեն ասված է, հաղորդում են անդուրեկան համ, որը կանաչ խտի համ է հիշեցնում: Դրա համար անհրաժեշտ է ուշադրություն դարձնել, որ կանաչ չանչերը քաղցուին չխառնվեն: Կանաչ չանչերը խմորման պրոցեսին մասնակցելու դեպքում, գինին համեմատաբար պակաս թեղություն է ստացվում (0,5—1°): Այդ բացատրվում է նրանով, որ չանչերի հյութը որոշ չափով նոսրացնում է քաղցուն: Կարմիր գինիների կուպությունը հնացման շնորհիվ աստիճանաբար վերանում է: Դաբաղանյութերը կարմիր գինիներին տալիս են գիմացկանություն և կայունություն: Կարմիր գինիները պետք է ունենան համապատասխան գույնի հետ միասին նաև դուրեկան համ և բուրբուր: Կարմիր գինիները կենսատեղիս, որակավորելիս, առաջին հերթին ուշադրություն են դարձնում նրանց տոնալության և մարմնեղության վրա, քանի որ այդ երկու հատկությունների ներդրանակ շաղկապումն այդ գինիների համար խիստ անհրաժեշտ է: Այն գինիները, որոնց մարմնեղությունը թույլ է արտահայտված, իսկ տոնալությունը ուժեղ, ոչ մարմնոտ և դատարկ են թվում: Դառնությունը, եթե երիտասարդ գինիների համար որոշ չափով թույլատրելի է, ապա հնացած գինիների համար այն պակասություն է հանդիսանում:

Գինի պատրաստելու համար խաղողը նախ և առաջ ջարդում են (մանրացնում): Հին ժամանակներում խաղողը ջարդում էին ոտքերով: Ջարդելու այդ ձևից ներկայումս շատ սահմանափակ կիրառում ունի դա գործադրվում է Արևմտյան Եվրոպայում՝ գինեգործական մի քանի շրջաններում և որոշ չափով Վրաստանում և Հայաստանում: Ռացիոնալ հիմքերի վրա դրված գինեգործականներում խաղողը ջարդում են հատուկ մեքենաների միջոցով, որոնց ֆուլուար կամ ջարդիչ են անվանում: Ֆուլուարները



Նկ. 8. Ֆուլուար:

լինում են տարբեր տեսակի և տարբեր մեծությամբ: Ֆուլուարը բաղկացած է երկու գլաններից, որոնց մակերեսն ալիքավոր է: Վերևի մասում ֆուլուարն արկղ ունի, որի մեջ խաղողն են լցնում: Հատուկ կանոնավորիչ պտուտակի միջոցով ֆուլուարի գլանները միմյանց կարելի է


մոտեցնել և հեռացնել: Պտուտակի գլանները կանոնավորիչի օգնությամբ դնում են այնպիսի հեռավորություն վրա, որ գլանները պտտացնելիս խաղողի պտուղները կանոնավոր ջարդվեն, սակայն կորիզները գլանների արանքից ազատ անցնեն և չջարդվեն: Կորիզները ջարդվելիս գինուն դառնություն են հաղորդում: Որոշ կարմիր գինիներ պատրաստելիս խաղողն անց են կացնում միայն ֆուլուարի միջով, որից հետո ջարդած խաղողը չանչի հետ միասին փոխադրում են չաների մեջ՝ խմորման համար: Այսպես օրինակ՝ Ֆրանսիայում, Բուրգունդիայում քաղցուն չանչերի հետ խմորելու միջոցով Պինո և Գամե սորտերից լավ գինիներ են ստանում: Երբեմն անջատում են չանչի միայն մի մասը: Մեզ մոտ ՍՍՍՌ-ում կարմիր գինիներ պատրաստելու համար ընդհանրապես ընդունված է չանչերն անջատել պտուղներից: Չանչերն անջատում են երկու ձևով՝ տրորիչներով և էլեկտրուարներով:

Տրորիչը 50—60 դեկալիտրանոց չան է, որի վերին մասում դրված է կաղնուց պատրաստած մի ցանց: Խաղողը լցնում են

այդ ցանցի վրա և ձեռքով տրորում: Ձարդված պտուղները ցանցի անցքերից անցնում են շանի մեջ, իսկ շանչերը մնում են ցանցի վրա, որտեղից և հավաքում ու ցանցի վրայից հեռացնում են: Տրորիչներով խաղողը տրորելը շատ աշխատանք է պահանջում, որի պատճառով էլ խոշոր տնտեսությունների համար նպատակահարմար է և ներկայումս համարյա չի կիրառվում:

Կարմիր գինիներ պատրաստելու համար, շանչերը սովորաբար անջատում են էզրոպուլարների (շանչազատիչների) միջոցով:

էզրոպուլարը բաղկացած է պղնձյա թիթեղից պատրաստված գլանից: Այդ գլանի կենտրոնական մասում կա մի լիսեռ, որի վրա սպիրալաձև դասավորված են մետաղյա թաթեր: Գլանն իր ցածի մասում ունի 1,5—2 սմ մեծության կլոր անցքեր: Գլանի տակ դրված է արկղ: Լիսեռը պտտվելիս խաղողի պտուղներն անջատվում են շանչից և գլանի անցքերով թափվում արկղի մեջ, իսկ շանչը թաթերի շարժման հետևանքով գլանից դուրս է թափվում: Կան էզրոպուլարներ, որոնք շանչը դատում են չջարդված խաղողից: Մեզ մոտ, Սովետական Միությունում, էզրոպուլարները սովորաբար միացած են ֆուլուարների հետ: Քաղողը ֆուլուարի մեջ շարդվում է, և ապա անցնում էզրո-




Նկ. 9. Մարմոնեի ֆուլուար-էզրոպուլարը:

պուլարի մեջ, որտեղ ջարդված խաղողից չանչն անջատվում է և դուրս թափվում: Նման մեքենաները ֆուլուար-էգրուպուար են կոչվում (նկ. 9):

Երբեմն էգրուպուարը դասավորված է լինում ֆուլուարի վրա, այդ դեպքում նա էգրուպուար-ֆուլուար է կոչվում: Այստեղ խաղողից նախանջատվում է չանչը և, ապա ֆուլուարի մեջ պտուղները ջարդվում են: Պակաս տախյ գինիներ ստանալու համար խաղողը վերամշակում են էգրուպուար-ֆուլուարներով, քանի որ չանչերն այս դեպքում անջատվում են դեռ չջարդված ողկույղներից և նրանք հյութի հետ համարյա չեն շփվում ու քաղցուի վրա աղոթեցութուն չեն գործում:

Սույոր գինեգործարաններում ներկայումս խաղողը վերամշակում են էգրապոմպերի միջոցով: Էգրապոմպը, դա ֆուլուար-էգրուպուարի և պոմպի միացումն է: Էգրուպոմպը խաղողը ջարդում է, չանչերն անջատում և ապա փուռը պոմպի միջոցով չանի մեջ տեղափոխում խմորման համար (նկ. 10):



Նկ. 10. Մարիլի էգրուպոմպը 10—15 տ/ժամ արտադրողությամբ:

Կարմիր գինիները խմորումը սովորաբար տարվում է 300—600 դեկալիտր տարողություն ունեցող կաղնե ջաներում: Խմորման համար այդ ջաները շատ հարմար են, խմորումը ջաների մեջ լավ է ընթանում, և ջանը գինուն ոչ մի կողմնակի համ չի հաղորդում: Արտասահմանում ներկայումս խմորման համար լայն չափով օգտագործում են երկաթ-բետոնե ցիստերններ: Սակայն երկաթ-բետոնե ցիստերնները, որպես խմորման ամանեղեն, կաղնե ջաների հետ համեմատած մի շարք թերություններ ունեն: Երկաթ-բետոնե ցիստերնների պատերը օդի համար համարյա անթափանց են, որի պատճառով անհրաժեշտ է լինում խմորվող փուլին արհեստական եղանակով օդ տալ: Հաստ պատերի շնորհիվ նրանք ջերմության շատ վատ հաղորդիչ են, իսկ վատ ջերմահաղորդման դեպքում խմորման ժամանակ առաջանում է մեծ ջերմություն, որը բացասաբար է ազդում շաքարասուենկերի գործունեության վրա: Ջերմությունը ցիստերններում կանոնավորելու համար պահանջվում է հատուկ սառեցնող սարքավորում: Երկաթ-բետոնե ցիստերնները գինուն, ինչպես արդեն ասված է, անզուրկան համ են հաղորդում, գինին հարստացնում են երկաթի և կալցիումի աղերով:

Այդ ցիստերնների առավելությունը նրանում է կայանում, որ դիմացկուն են և համեմատաբար քիչ տարածություն են զբաղում:

Վրաստանում և Հայաստանում կարմիր գինիների խմորման համար, բացի ջաներից, որոշ չափով օգտագործում են նաև կարասներ:

Կարմիր գինիների խմորումը տարվում է բաց կամ փակ գրությամբ:


Բաց խմորումը.— Խմորման համար օգտագործում են սովորաբար կաղնե ջաներ կամ երկաթ-բետոնե ցիստերններ: Բաց խմորումը, շնորհիվ ջաների տարբեր կառուցվածքի, հնարավոր է տանել տարբեր ձևով:

Խմորումը բաց ջաների մեջ լողացող գլխարկով.— Չարդած խաղողը լցնում են ջանի մեջ, ջանի բարձրության $\frac{1}{5}$ -ի չափով: Պետք է աշխատել ջանը լցնել մի օրվա ընթացքում: Չանի մեջ ավելացնում են շաքարասուենկերի մաքուր կուլտուրայի

Վերան մոտ 2 0/0-ի չափով: Ռացիոնալ հիմքերի վրա դրված գինեգործարաններում խմորումը կատարվում է շաքարառուսկերի մաքուր կուլտուրաների միջոցով: Մինչև խմորումը սկսվելն, անհրաժեշտ է չանը կափարիչով, կամ բրեզենտով ծածկել և չանի ազատ տարածությունը ծծումբով ծուխ տալ վնասակար միկրոօրգանիզմների զարգացումը արգելակելու նպատակով: Ջերմության բարենպաստ պայմաններում խմորումը հաջորդ օրը սկսվում է: Խմորման ընթացքում մեծ քանակությամբ ածխածին գազ է արտադրվում, որը մեղ համար վնասակար է. այդ պատճառով խմորատունը լավ վենտիլացիա պետք է ունենա՝ այդ գազը դուրս հանելու համար: Ածխածինթվի ճնշման շնորհիվ փլուզի կարծր մասերը (մաշկ, կորիզ, չանչ) աստիճանաբար բարձրանում են վեր, որտեղ կուտակվելով՝ առաջացնում են քաղցուղի մակերեսի վրա, այսպես կոչված, «գլխարկ» (տես նկար 11):

Առաջացած գլխարկը պետք է ընկզմել քաղցուղի մեջ, հակառակ դեպքում գլխարկի վրա սկսում են զարգանալ վնասակար միկրոօրգանիզմները և առաջին հերթին քացախային բակտերիաները, որոնք գինին քացախացնում են:

Օրվա ընթացքում չանի պարունակությունը 5—6 անգամ պետք է լավ խառնել: Սառնում են փայտյա հատուկ խառնիչների միջոցով (տես նկ. 12):



Նկ. 11. Բաց չան լողացող գլխարկով:




Նկ. 12. Պառնիչ:

Փլուզի խառնելը նպաստում է նաև մաշկի դաբադանյութերի, ներկանյութերի և արոմատիկ նյութերի լուծվելուն և

քաղցուի մեջ անցնելուն: Փլուշի խոռոչը դադարեցնում են, երբ խմորումը զգալիորեն թուլանում է և գլխարկը այլևս վերև չի բարձրանում:

Խմորումը բաց չաների մեջ՝ բնկդմած գլխարկով.— Այս դեպքում խմորումը կատարվում է նույնպես չաների մեջ, սակայն այն տարբերութեամբ, որ գլխարկն ընկղմված է լինում խմորվող հեղուկի մեջ և չանի պարունակությունը խոռոչի կարիք չի զգացվում: Չանի $\frac{2}{3}$ -ի բարձրությամբ ամրացնում են փայտյա ցանց: Խմորման հետևանքով առաջացած գլխարկը վերև բարձրանալով դեմ է առնում այդ ցանցին և մնում ցանցի տակ, մինչդեռ քաղցուն անցնելով ցանցի միջով ծածկում է գլխարկը (տես նկ. 13):



Նկ. 13. Բաց չան ընկղմած գլխարկով:


Փակ խմորում.— Փակ խմորման համար գործադրում են նույնպես չաներ: Նայած չանի կառուցվածքին, փակ խմորումը տարվում է կամ լողացող կամ ընկղմած գլխարկով:

Խմորումը փակ չաներում լողացող գլխարկով.— Խմորումը կատարվում է չաներում, սակայն չաները վերևից ծածկում են կափարիչով և բոլոր ճեղքերը գրպսով լավ ծեփում: Այդ կափարիչն ունի անցք, որի մեջ տեղավորում են խմորման ագուլցը (նկ. 14):

Այս ագուլցն այնպես է պատրաստված, որ չանից ամխաթթու գազը ագուլցի միջոցով կարող է դուրս գալ, իսկ դրսից ողբ չանի մեջ թափանցել չի կարող: Խմորման այս ձևի դեպքում լողացող գլխարկն օդի հետ չի շփվում և գտնվում է ամխաթթու գազի միջավայրում: Այս ձևը կիրառվում է Ֆրանսիայում:

Խմորումը փակ չաներում բնկդմած գլխարկով.— Գլխարկը

ընկղմելը խմորովոյ հեղուկի մեջ տեղի է ունենում չանի մեջ ամրացած փայտյա ցանցի միջոցով: Փութը չանի մեջ լցնելուց հետո, դնում են ցանցը և չանը կափարիչով ծածկում: Կափարիչի անցքի մեջ դնում են խմորման ապույց:




Նկ. 14. Հիդրավիկ ապույցները:

Չանը մինչև խմորման վերջը չեն բացում: Այս ձևը լայն չափով տարածված է Փրանսիայում, որտեղ նա գոյություն ունեցող խմորման ձեվերից ամենալավն է համարվում:

Չանի մեջ շերտաթյունը համահավասար է բաշխվում և խմորումը կանոնավոր է ընթանում:

Գլխարկն ամբողջովին ընկղմված է հեղուկի մեջ, որի շնորհիվ քաղցուն ապահովված է լինում քացախելուց: Խմորումն ընթանում է կանոնավոր հեղուկի մեջ խորասուղելու և խառնելու կարիք չի զգացվում:

Երբեմն խմորումը տարվում է մի քանի ցանց ունեցող չաների մեջ: Ցանցերը չանի մեջ տեղավորվում են մեկը մյուսի վերևը և փութը բաշխվում է ցանցերի վրա հավասար կերպով (տես նկ. 16)




Նկ. 15. Փակ չան ցանցով՝ գլխարկն ընկղմելու համար:

ձևով՝ գլխարկն այս դեպքում

Գիտափակ խմորում.— Խմորումը կատարվում է փակ չաների մեջ ընկղմված գլխարկով, սակայն խմորման ընթացքում քաղցուն մի քանի անգամ օդափոխում են՝ քաղցուին օդ են տալիս:

Նկարագրված խմորման ձևերից յուրաքանչյուրն ունի իր առավելությունները և պակասությունները, այդ պատճառով գինեգործը պետք է ընտրի խմորման այն ձևը, որն ամենից լավ կհամապատասխանի տվյալ շրջանի պայմաններին, պատրաստվելիք գինու տեսակին ու որակին:



Նկ 16. Պերրեի հարկանի չանը:

Խմորումը բաց չաներում՝ լողացող գլխարկով ունի հետևյալ առավելությունները, 1. փլուշն օրվա ընթացքում մի քանի անգամ խառնելու շնորհիվ մաշկի մեջ պարունակվող ներկաչուլթերը, դարազանյութերը, արոմատիկ նյութերը լավ լուծվում են և անցնում քաղցուի մեջ, 2. գինին լավ արտահայտված արոմատ և բուկետ է ունենում, 3. գինին նուրբ և դուրեկան է լինում, 4. գինին դուրեկան ուրինի գույն է ստանում, 5. խմորման պրոցեսը համեմատաբար կարճ է տևում: Այդ առավելությունների շնորհիվ խմորման այս եղանակը բավական լայն կիրառում ունի: Բուրգունդական կարմիր նուրբ գինիները պատրաստում են բաց չաներում՝ լողացող գլխարկով տարվող խմորման միջոցով: Խմորման այս ձևի թերությունը նրանում է կայանում, որ գլխարկը խառնելու և քաղցուի մեջ ընկղմելու համար շատ աշխատավոր ձևով է պահանջվում: Բացի այդ, անզգուշության դեպքում գինին հեշտությամբ քացախում է գինին պակաս թնդություն է ունենում:

Խմորումը բաց չաներում՝ ընկղմած գլխարկով ունի այն առավելությունը, որ համեմատած նշված խմորման ձևի հետ, քիչ բանվորական ձևով է պահանջում, գլխարկի ու խմորվող հեղու-

կի մեջ վնասակար միկրոօրգանիզմների զարգացումն զգալի
չափով դժվարանում է, գինին ինտեսիվ գույն է ունենում, բայց
արամատը թույլ է լինում:

Փակ խմորման ժամանակ խմորումը շատ դանդաղ է ըն-
թանում և համեմատաբար կոպիտ գինի է ստացվում:

Հայկական ՍՍՌ-ում ընդունված է կարմիր գինիները
խմորումը կատարել բաց չաներում՝ լողացող պլաստիկով:

Խմորումը նորմալ ընթանալու համար անհրաժեշտ է, որ խը-
մորվող հեղուկի ջերմությունը 20—30°-ի սահմաններում պը-
նըվի: Այդ պատճառով գինեգործն ամեն օր պետք է հետևի փը-
լուշի ջերմությանը և ժամանակին համապատասխան միջոց-
ներ ձեռք առնի այն կանոնավորելու համար:

Խմորման տեղությունը— կախված է ջերմությունից, խը-
մորման եղանակից, խաղողի քաղցրությունից, շաքարասունկե-
րի ռասայից և այլ պայմաններից: Բարենպաստ պայմանների
առկայությունը բաց չաներում բուն խմորումը սովորաբար
ավարտվում է 4—6 օրում, փակ չաներում խմորում, ինչպես
արդեն ասված է, դանդաղ է ընթանում և տևում է 10—20 օր,
անգամ մեկ ամիս:

4. ԾԾՄԲԱՅԻՆ ԱՆՀԻԴՐԻԴԻ (SO₂) ԿԻՐԱՌՈՒՄԸ ԿԱՐՄԻՐ ԳԻՆԻՆԵՐԻ ԽՄՈՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Փորձերը ցույց են տվել, որ ծծմբային անհիդրիդի գոր-
ծադրումը կարմիր գինիների խմորման ժամանակ ունի մի
շարք առավելություններ՝ 1. ծծմբային անհիդրիդի շնորհիվ
քաղցուն, ինչպես և գինիները լավ են պարզվում, 2. ողկույղի
կարծր մասերում գտնված նյութերը հեշտ են լուծվում և անց-
նում քաղցուի մեջ, 3. գինին ծծմբային անհիդրիդի ներկայու-
թյամբ խմորվելու դեպքում, կոնտրոլ գինիների հետ համե-
մատած, միջին թվով 0,2—0,3%-ով թունդ է ստացվում, 4. գի-
նին համեմատաբար շատ թթվություն է պարունակում, 5. ցըն-
դող թթուների քանակը պակաս է լինում, 6. գինու էկստ-
րակտն ավելանում է, 7. գինին հիվանդությունների նկատմամբ
կայուն է դառնում և հետագայում ավելի ինտեսիվ գույն է ունե-
նում, 8. գինին ատոջ է լինում և գուրեկան համ է ձեռք բերում:

Այդ առավելությունների շնորհիվ ներկայումս ծծմբային
անհիդրիդը լայն կիրառում է ստացել նաև կարմիր գինեգործու-
թյան մեջ:

Սուբֆիտացիան ընդհանրապես կատարում են փլուշը չանի մեջ լցնելու ժամանակ: Սակայն, ոչ մի դեպքում չի թույլատրվում սուբֆիտացիան կատարել մինչև խաղողի ջարդելը, կամ թե խաղողը ջարդելիս՝ ֆուլուարի վրա: Վերջին դեպքում ձմեռային անհիդրիդն ազդում է ֆուլուարի երկաթյա գլաններին վրա, որի հետևանքով գինու մեջ զգալի քանակությամբ երկաթի միացություններ են անցնում և անորակ գինի է ստացվում: Որոշ դեպքերում սուբֆիտացիան կատարում են չանջը լցնելուց հետո:

Նորմալ հասունացած և առողջ խաղողից ստացած փլուշի խմորման դեպքում մեկ հեկտոլիտր փլուշի համար վերցնում են 8—10 գրամ ձմեռային անհիդրիդ: Հիվանդ խաղողից ստացված փլուշը խմորելիս գործադրում են համեմատաբար բարձր դոզա՝ 15—20 գրամ հեկտոլիտր: Կարմիր խաղողից սպիտակ կամ վարդագույն գինիներ պատրաստելիս, քաղցուն սուբֆիտացիայի են ենթարկում 10—20 գրամ հեկտոլիտրի հաշվով: Որոշ դեպքերում կարելի է զգացվում գործադրել ձմեռային անհիդրիդի ափսոսելի բարձր դոզաներ:

5. ԳԻՆՈՒԻ ԽՄՈՐՈՒՄԸ ՍԵՄԻՇՈՆԻ ՄԵԹՈՂՈՎ (ՍՈՒՊԵՐԲՍՏՐ)

Գիտնական Սեմիշոնը պարզեց, որ չորս առտիճանից ոչ պակաս սպիրտ պարունակող հեղուկի մեջ զարգանում են և գործում միայն էլիպսաձև շաքարատուկերը, իսկ մնացած միկրոօրգանիզմները, ապիկոլատուկները, միկոդերման, բակտերիաները, բորբոսատուկները և այլն, այդ միջավայրում չեն զարգանում և չեն աշխատում: Հետևապես, խմորվող քաղցուի թնդությունը 4 աստիճան հասցնելու միջոցով կարելի է վնասակար միկրոօրգանիզմների զարգացումը և գործունեությունն արգելակել և նպաստել էլիպսաձև շաքարատուկերի բազմացմանը: Այսպիսով, Սեմիշոնն առջարկում է քաղցուն թնդացնել նախքան խմորումն սկսվելը, հասցնելով նրա թնդությունը մինչև 4—5 աստիճանի: Թնդացնել կարելի է հին կամ նոր գինիներով, իսկ թուեղ և դեսերտ գինիներ պատրաստելիս նաև սպիրտով: Սեմիշոնն իր այդ մեթոդն անվանեց «սուպերքասար», որը ֆրանսերեն նշանակում է «4-ից բարձր»:

խմորումը Սեմիշոնի մեթոդով կատարելու դեպքում ստացվում է լավ գույնով, գուրեկան համով և պողային արոմատով գինի: Բացի այդ գինին համեմատաբար պակաս քանակով ցնդող թթուներ է պարունակում, բայց թնդությունը 0,4—0,8⁰-ով բարձր է լինում:

Սեմիշոնի մեթոդի բացասական կողմն այն է, որ շատ աշխատավոր ձեռք է պահանջում:

Որպես ընդհանուր կանոն, չաները դատարկում են այն ժամանակ, երբ քաղցուել մեջ եղած ամբողջ շաքարը լրիվ խմորվել է: Այդ մոմենտը որոշում են շաքարաչափի միջոցով: Եթե շաքարաչափը հեղուկի մեջ ընկղմելիս ցույց տա 0, նշանակում է խմորումը արդեն ավարտված է: Խմորումը լրիվ և ժամանակին ավարտվելու դեպքում, գինին սասնում է լավ ինտենսիվ կարմիր գույն, լրիվ համ և չափավոր տախպություն: Չաները ժամանակից շուտ և ուշ դատարկելը գինու որակի վրա վատ ազդեցություն է թողնում: Եթե խմորվող քաղցուն փուլերից ժամանակից շուտ են անջատում, երբ նա դեռ խմորվում է, գինին բաց գույն է ունենում և քիչ էկստրակտիվ նյութեր է պարունակում: Չաները ժամանակից ուշ դատարկելու դեպքում, երբ տասարդ գինին փուլերի վրա երկար ժամանակ է մնում, դրա հետևանքով կորիզներից և մաշկից գինու մեջ մեծ քանակությամբ դարադանյութեր են անցնում. գինին շատ դառը և տոտիլ է ստացվում: Այս դեպքում գինու դառնությունը և տոտիպությունը չեն վերանում անգամ երկարատև հնացման ընթացքում: Այդ պատճառով չաները պետք է դատարկել, հենց որ քաղցուել խմորումը կավարտվի: Սակայն արտադրությունում այս կանոնը երբեմն խախտվում է: Պատահում են դեպքեր, երբ գինեգործը ստիպված է լինում չանը դատարկել ժամանակից շուտ՝ մինչ խմորման լրիվ ավարտվելը, երբ քաղցուն դեռ խմորվում է և ընդհակառակը, լրիվ խմորված գինին գինեգործը երկար ժամանակ թողնում է չանի մեջ՝ փուլերի վրա:

Սահմանված ժամկետից չանը շուտ են դատարկում գլխավորապես այն դեպքում, երբ քաղցուել ջերմությունը չանի մեջ շատ բարձր է լինում և հասնում է 36⁰-ի: Պարզված է, որ նըշված ջերմաստիճանում սպիրտային խմորումը համարյա կանգ է առնում և նրան փոխարինում է բակտերիալ խմորումը: Եթե խմորվող հեղուկի ջերմաստիճանը իջեցնելու հնարավորություն չկա, ապա պետք է խմորվող հեղուկը փուլերից անջատել, այսինքն չանը դատարկել: Չանը դատարկելիս, քաղցուել ջերմաստիճանն իջնում է, իսկ այդ հանգամանքը նպաստում է շաքարասուղիների նորմալ բազմացմանը, հետևապես և քաղցուել լրիվ խմորվելուն: Չանը ժամանակից շուտ են դատարկում նաև այն դեպքում, երբ գինին նախատեսվում է ոչ թե երկարատև հնացման, այլ արագ սպառման համար: Այս դեպքում գինին, ճիշտ է,

պակաս էքստրակտային նյութեր և դարբաղային նյութեր է պարունակում, սակայն համեմատաբար արագ է հատուցանում: Պակաս էքստրակտիվ և թույլ գունավորված գինի տվող սորտերի գեղարում, երբեմն կարիք է լինում երիտասարդ գինին լրիվ խմորումից հետո որոշ ժամանակով պահել փլուշի վրա դինուզոնը և սրակը լավացնելու նպատակով: Փրանսիայում՝ որոշ անասնաբույժներում չաները դատարկում են խմորումից 15—20 օր հետո:

Չանը դատարկելու ժամանակ պետք է աշխատել որքան հնարավոր է, փլուշից մաքրվել քանակով գինի ստանալ: Չանը դատարկելու համար նրա ցածի մասում եղած անցքի մեջ ծորակ են դնում. ծորակի տակ կաղնուց պատրաստած մի տաշտ են տեղավորում, ծորակը բացում են և գինին ծորակից հոսում է տաշտի մեջ, որտեղից գինին պոմպի միջոցով տեղափոխում են տակառների կամ բուստերի մեջ, որտեղ և խմորումը վերջնականապես ավարտվում է:

Երբ գինու հոսելը ծորակից սկսում է պակասել, չանի գոնակը բաց են անում, որպեսզի մնացած գինին չանից դատարկվի տաշտի մեջ. այդ տևում է միքանի ժամ: Չանի մեջ մնացած փլուշը տեղափոխում են մամուլի մեջ և մամլում:

Չանը դատարկելիս երբեմն անհրաժեշտ է լինում գինին ուժեղ կերպով օդահարել: Այդ անում են այն դեպքում, երբ գինին խմորվել է ծծմբային անհիդրիդի ներկայությամբ: Օդահարելու համար ծորակին միացնում են հատուկ ցանց, որի միջոցով գինին կաթիլներով թափվում է տաշտի մեջ, կամ ծորակի տակ թեք դրուժյամբ դնում են մի տախտակ, որի վրայով գինին հոսում է տաշտի մեջ: Երկու դեպքում էլ գինին ուժեղ կերպով շփվում է օդի հետ և լավ օքսիդանում: Օքսիդացման շնորհիվ վերականգնվում է գինու գույնը, ցնդում է ամլաթթու գազը, ուժեղանում է շաքարաստուկների բազմացումը, որոնք շաքարի մնացորդը պետք է խմորեն:

7. ՓԼՈՒՇԻ ՄԱՄԼԵԼԸ


Սև խազողի փլուշը սովորաբար մամլում են ձեռքի կամ ջրաբաշխական մամուլներով (նկ. 17):

Մմենահարմարը այն ջրաբաշխական մամուլն է, որի դամբյուղի արամագիծը 1,5 մետրից ավելի չէ (տես նկ. 18):

Համենայն դեպս անընդհատ գործող մամուլներով նպատակահարմար չէ սև խազողի փլուշը մամլել, քանի որ այդ


մամուլներն ուժեղ սեղմում են մաշկը և կորիզները, որի պատճառով խիստ ատիպ և դառը գինի է ստացվում:

Փլուշը լցնում են մամուլի մեջ, որոշ ժամանակ թողնում են առանց մամլելու, որպեսզի նրա մեջ եղած գինին ազատ հերպով քամվի: Գինու քամվելը վերջանալուց հետո սկսում են մամլել: Մամլում են աստիճանաբար: Մամլելը հաջորդաբար կրկնում են 3—4 անգամ: Մամլելու ընթացքում փլուշը մի քանի ան-



Նկ. 17. Չեռքի պտուտակավոր մամուլ

գամ խառնում են, որպեսզի փլուշից գինին հեշտությամբ քամվի: Փլուշն անգամ լավ մամլելուց հետո պարունակում է իր մեջ մոտ 20—25 տոկոս գինի, հաշված փլուշի ընդհանուր քաշից: Մամուլի գինին ցածր որակ ունի. այդ գինին պահում են առանձին և հետո ուրիշ



Նկ. 18. Զրաբաշխական մամուլը երկու կամբյուղով

գինու հետ խառնում (կուպոժ կատարում): Մամլելուց հետո փլուզը հատուկ ձևով պահում են՝ հետագայում նրանից սպիրտ, գինեթթու և այլ արժեքավոր նյութեր ստանալու համար: Մամլելու աշխատանքներն ավարտելուց հետո մամուլները պեաք է լավ մաքրել, չորացնել և նրանց մետաղյա մասերը լավ յուղել:

Ց. ԿԱՐՄԻՐ ԳԻՆՈՒ ՊԱՏՐԱՍՏԵԼԸ՝ ԽԱՂՈՂԸ ԿԱՄ ՓԼՈՒՇԸ
ՏԱՔԱՑՆԵԼՈՒ ՄԻՋՈՑՈՎ

Վերջերս կարմիր գինի պատրաստելու համար ջարդած կամ չջարդած խաղողը տաքացնում են ներկանյութերը պտղի կարծր մասերից հյութի մեջ հեշտ, արագ և լրիվ լուծելու նպատակով, և խմորման են ենթարկում արդեն ներկված քաղցուն առանց փուշի: Տաքացնելու շնորհիվ պտղի բջիջները մահանում են և ներկանյութերը հեշտությամբ լուծվում են և անցնում հյութի մեջ, որի շնորհիվ հյութն ընդունում է համապատասխան գունավորում: Խաղողը տաքացնելու մի քանի եղանակներ կան:

1. Ռոզենշտիլի եղանակը.—Ջարդած խաղողը լցնում են չանի մեջ, որ պարուրակ ունի: Պարուրակի մեջ բաց են թողնում շոգի և տաքացնում փուշը մինչև 60—65 աստիճան Յելսիուսի: Տաքացնելը դադարեցնում են, հենց որ քաղցուն ընդունում է մուգ կարմիր գույն: Փուշը քիչ սառելուց հետո սեղափոխում են մամուլի մեջ և մամլում: Քաղցուն լցնում են տակառների մեջ, որտեղ և նա խմորվում է առանց փուշի: Ռոզենշտիլն այս մեթոդն առաջին անգամ կիրառել է 1895 թվին՝ Ֆրանսիայում:

2. Ֆերբեի եղանակը.—Այս դեպքում տաքացնում են խաղողի ողկույղները: Տաքացնում են տաք ջրով, տաք քաղցունով կամ շոգիով: Տաքացնելուց հետո խաղողը ջարդում են, մամլում և քաղցուն լցնում տակառների մեջ խմորման համար:

3. Իյուբակեի եղանակը.—Ողկույղներն ամբողջությամբ լցնում են հատուկ կամերայի մեջ և չոր օդով տաքացնում մինչև 30—60°: Այդ աստիճանի տակ խաղողը մնում է 3—4 ժամ: Տաքացնում են վերամշակվող խաղողի միայն $\frac{1}{6}$ — $\frac{1}{10}$ մասը և ապա այդ մասը խառնում սովորական եղանակով խմորվող փուշին:

Փորձերը ցույց տվին, որ Ֆերբեի եղանակով ստացած սեղանի կարմիր գինին լավ ինտենսիվ կարմիր գույն ունի, և համեմատաբար արագ է հասունանում: Ռոզենշտիլի եղանակը սեղանի գինի պատրաստելու համար նպատակահարմար է, քանի որ գինին երկար է համ է ունենում, որը և գցում է նրա որակը:


IX. ՍԵՂԱՆԻ ՍՊԻՏԱԿ ԳԻՆՈՒ ՊԱՏՐԱՍՏԵԸ

Սպիտակ գինին, որպես կանոն պատրաստում են սպիտակ խաղողից: Որոշ գեղաքերում սպիտակ գինի են պատրաստում նաև սև սորտերից, սակայն այն սորտերից, որոնց հյուսվել գունավորված չէ: Ընդհանրապես սպիտակ գինիները պատրաստում են քաղցուն առանց փլուշի մասնակցությամբ խմորելու միջոցով, այդ պատճառով էլ նրանք տափալ չեն լինում:


1. ԽԱՂՈՂԻ ՎԵՐԱՄՇՆԱԿՈՒՄԸ ՍՊԻՏԱԿ ԳԻՆՈՒ ՀԱՄԱՐ

Գինեգործարան փոխադրված խաղողը պետք է անմիջապես վերամշակել, հակառակ դեպքում նրա վրա սկսում են զարգանալ վնասակար միկրոօրգանիզմներ, որոնք հետագայում անցնելով քաղցուի և գինու մեջ, առաջացնում են գինու այս կամ այն հիվանդությունը: Գինու պատրաստման մեթոդի, ապարատուրայի, մեքենաների ճիշտ ընտրությունը վճռական նըշանակություն ունի խաղողը կանոնավոր վերամշակելու և բարձրորակ սպիտակ գինի պատրաստելու համար: Սովորական սեզանի թույլ գինի պատրաստելու համար խաղողը վերամշակում են անընդհատ գործող մամուլներով (նկ. 19, 20):

Անընդհատ գործող մամուլն իր բարձր արտադրողականությունից շնորհիվ լայն կիրառում է ստացել մասնավոր գինեգործական այն շրջաններում, որտեղ արտադրվում են մասսայական սովորական գինիներ: Այս մամուլի հիմնական բացասական կողմն այն է, որ խաղողն արագ և ուժեղ մամուլում հետեվանքով քաղցուն հարստանում է դաբադանյութերով և գինին կոպիտ ու տափալ է ստացվում: Բացի այդ, քաղցուի մեջ են անցնում պտղի զանազան կարծր մասերը (մաշկի, թաղանթի, մսահյութի մասնիկներ), որոնք դժվարացնում են գինին պարզեցնելու հետագա աշխատանքները: Անընդհատ գործող մամուլն ունի երկու—չորս անցք՝ քաղցուն մամուլից դուրս հոսելու համար: Առաջին անցքից ստացվում է համեմատաբար բարձր որակի և պակաս տափալ քաղցու: Մյուս անցքերից հաջորդաբար ստացվում է ավելի ու ավելի դաբադանյութերով հարուստ քաղցու: Այդ անցքերից հոսող քաղցուները հավաքվում են առանձին: Որակավոր սեղանի սպիտակ գինիներ պատրաստելու համար



Նկ. 19. Մարեի անընդհատ գործող մամուլ:



Նկ. 20. Մարեի երկգլան անընդհատ գործող մամուլ՝ 10 հազար, կիրառում ժամ արտադրողականությամբ:

անընդհատ գործող մամուլի կիրառումը ցանկալի չպետք է համարել Այս դեպքում նպատակահարմար է գործադրել ջրաբաշ-

խական մամուլը: Խաղողի վերամշակումը բաղկացած է հետևյալ երեք գլխավոր գործողութիւնից:

1. Խաղողի ջարդելը, 2. Հանչի դատելը և 3. Չարդած ու հանչից անջատած խաղողի մամլելը: Խաղողի վերամշակման այս ձևը լայն չափով տարածված է թե՛ մեզ մոտ՝ Սովետական Միութիւնում և թե՛ արտասահմանում: Նշած սխեմայով խաղողը վերամշակելու համար սովորաբար գործադրում են՝ 1. Փուլուար-էգրոպուարը, կամ էգրոպուար (տես. նկ 9, 10), 2. ձևաքի պտուտակավոր կամ շրարաշխական մամուլը (տես. նկ. 17, 18): Մանր տնտեսութիւններում գործադրում են ֆուլուար-էգրոպուարը, խոշոր տնտեսութիւններում՝ էգրոպուարը: Խաղողը լըցնում են ֆուլուար-էգրոպուարի մեջ, որտեղ սկզբում այն ջարդվում է, ապա հանչերից զատվում: Այնուհետև, փլուշն առանց հանչի տեղափոխում են մամուլի մեջ: Սովորաբար ֆուլուար-էգրոպուարը դնում են մամուլից բարձր այն հաշվով, որ փլուշն ուղղակի թափվի մամուլի մեջ: Էգրոպուարը, ինչպես արդեն ասված է, խաղողը ջարդում է, հանչերը զատում և փլուշը տեղափոխում մամուլի մեջ: Էգրոպուարի ամենագլխավոր առավելութիւնն այն է, որ նա փլուշը բավականին բարձր տեղ կարող է տեղափոխել:

Նուրբ սեղանի դիւնի ստանալու համար պետք է աշխատել, որ քաղցուն պողի կարծր մասերի հետ շատ չչփվի: Դրա համար քաղցուն հնարավորին չափ փլուշից շուտ պետք է անջատել: Այդ նպատակով օգտագործում են տարբեր տեսակի քամիչներ: Չարդած խաղողը մինչ մամլելը լցնում են այդ քամիչների մեջ, որտեղ քաղցուի մի մասը փլուշից քամվում է (անջատվում է):

2. ՄԱՄԼԵԼԸ

Չարդած խաղողը ֆուլուար-էգրոպուարից կամ էգրոպուարից անմիջապես լցնում են մամուլը: Այսպես են անում այն դեպքում, երբ քամիչներ չեն գործադրում: Մամուլը լցնելու ընթացքում, քաղցուի մի մասը մինչ փլուշի մամլելը, մամուլի զամբյուղի արանքներից ինքնահոս ձևով դուրս է հոսում: Այդ քաղցուն «ինքնահոս» են անվանում: Մամուլի զամբյուղը լցնելուց հետո սկսում են փլուշը մամլել: Մամուլի անցքի մոտ դնում են պղնձյա լավ

կլայեկած մի ցանց կամ հասարակ մաղ՝ պտղի կարծր մասերը քաղ-
ցուից անջատելու նպատակով: Փլուշը մամուլում են աստիճանաբար:
Ճնշումն ուժեղացնում են, երբ քաղցուի հոսելը պակասում է:
Մամուլու ընթացքում փլուշը մի քանի անգամ հատուկ թիակ-
ներով լափ խառնում են և նորից մամուլում: Մամուլը զաղարե-
ցնում են, երբ քաղցուն մաքսիմալ չափով անջատված է փլու-
շից: Մամուլը դատարկում են, փլուշը փոխադրում են հատուկ
հորերի մեջ պահելու համար, որից հետո մամուլը մաքուր սա-
ռը ջրով խողանակների օգնութեամբ լվանում և նորից փլուշ
լցնում: Մամուլը պեռք է լցնել, որքան հնարավոր է արագ
և կարճ ժամանակում, ապա դանդաղ և աստիճանաբար մամուլի:
Պեռք է լավ հիշել, որ փլուշը մամուլի մեջ հարկ եղածից ա-
վելի երկար ժամանակ պահելու դեպքում, քաղցուն հարստանում
է դաբաղանյութերով և կոպիտ ու ցածրորակ գինի է ստաց-
վում: Մեզ մոտ, Հայկական ՍՍՌ-ում սպիտակ խաղողը մամ-
ուլում են ընդհանրապես անընդհատ գործող մամուլներով:

Քաղցուն ընդունված է անվանել «ինքնահոս», «առաջին մա-
մուլ», «երկրորդ մամուլ», «երրորդ մամուլ» և այլն: Առաջին ան-
գամ մամուլուց ստացված քաղցուն կոչվում է «առաջին մամուլ»,
երկրորդ անգամ մամուլուց ստացվածը «երկրորդ մամուլ», և
այլն:

Բարձր որակ քաղցու համարվում է «ինքնահոսը», ամենա-
վատը վերջին անգամ մամուլուց ստացված քաղցուն է, որը շատ
տախտ է և անդուրեկան գույն ու համ ունի: Ինքնահոս և առաջին
մամուլի քաղցուն օգտագործում են նուրբ և բարձրորակ գինի
պատրաստելու համար: Սովորական մասսայական գինիներ պատ-
րաստելիս վերև նշած քաղցուի տեսակները իրար են խառնում
և միասեղ խմորում:

2. ՔԱՂՑՈՒՆ ՊԱՐՁԵՅՆԵԼԸ

Ընդհանրապես մամուլից ստացված քաղցուն պատր և լի-
նում: Այդ պատճառով քաղցուն, նախքան խմորելը, այս կամ
այն եղանակով պարզեցնում են, որից հետո նոր խմորման են-
թարկում: Որպեսզի քաղցուն աչատվի իր մեջ գանվող պտտոթ
նյութերից և պարզվի, անհրաժեշտ է, որ դա ամանի մեջ
որոշ ժամանակ որի տեղադրվումը միջին թվով տատանվում
է 12-ից մինչև 24 ժամի սահմաններում, հանգիստ վիճակում

գտնվի և չխմորվի: Այս դեպքում քաղցուի մեջ եղած պատոր
նյութերն իրենց ծանրության շնորհիվ աստիճանաբար իջնում
են ամանի հատակը, որի շնորհիվ քաղցուն պարզվում է: Խը-
մորումը կասեցնելու և քաղցուն պարզեցնելու համար խոշոր
նշանակութուն ունի ցածր ջերմութունը: Այդ պատճառով
քաղցուն արհեստական եղանակով սառեցնում են: Սառեցման
միջոցով քաղցուի ջերմաստիճանը հասցնում են 2—4°-ի: Այդ
ջերմության պայմաններում քաղցուն արագ և լավ պարզում է:
Քաղցուն սառեցնում են շենքում՝ տակառների մեջ կամ եր-
կաթ-բետոնե ցիստերնների մեջ: Քաղցուն պարզեցնելու համար,
արհեստական ցրտի կիրառումը դրական խոշոր արդյունք է
տալիս, սակայն հատուկ սառեցման սարքավորում է պահան-
ջում: Պարզեցնելու այս ձևը մեզ մոտ առայժմ տարածված չէ:

Քաղցուն պարզեցնելու համար գործադրում են նաև ծծրմ-
բային անհիդրիդ: Ծաքարատունիների գործունեության վրա
ծծրային անհիդրիդը, ինչպես արդեն ասվեց, ճնշող ներգործու-
թյուն է թողնում: Ծծրային անհիդրիդ վերցնում են այնքան,
որ քաղցուի խմորումն արգելակվի ցանկացած ժամանակով
(12—24 ժամ): Դոզան սահմանելիս՝ հաշվի պետք է առնել մի-
ջավայրի ջերմութունը, քաղցուի բաղադրութունը, նրա պղղ-
տորութունը, վիճակը և այլ պայմաններ: Ընդհանրապես, ըս-
պիտակ գինի պատրաստելիս գործադրում են ծծրային անհիդ-
րիդի ավելի բարձր դոզա, քան կարմիր գինու համար: Եթե
քաղցուն 20—25° ջերմութուն ունի, նրա խմորումը 24 ժամով
արգելակալու համար, տալիս են միջին թվով 15 գր/հեկտոլիտր
ծծրային անհիդրիդ: Ամենահարմարը, ինչպես ասված է, հե-
ղուկ ծծրային անհիդրիդի կիրառումն է: Ծծրային պատ-
րույդներ գործադրելը քաղցուն պարզեցնելու համար այնքան
էլ հարմար չէ: Այդ ձևը կիրառում են միայն մանր տնտեսու-
թյուններում: Պետք է հիշել, որ ծծրային անհիդրիդը ոչ միայն
նպաստում է քաղցուի արագ պարզելուն, այլ և միաժամանակ
կասեցնում է վնասակար միկրոօրգանիզմների զարգացումը:


Պարզած քաղցուն որոշ զգուշությամբ անջատում են տա-
կանքից (նստվածքից) և պոմպերով տեղափոխում խմորատուն:
Քաղցուի պարզեցնելը խոշոր դրական ազդեցութուն է թող-

նում գինու որակի վրա՝ առողջ, գուրեկան համով ու արոմատով գինի է ստացվում:

Արևմտյան եվրոպայի գինեգործական որոշ երկրներում քաղցուն պարզեցնելու համար ներկայումս գործադրում են ցենտրոֆուգաներ:

4. ՍՊԻՏԱԿ ԳԻՆՈՒ ԽՄՈՐՈՒՄԸ

Սպիտակ գինու խմորումը ընդհանրապես տարվում է կաղնու տակառների մեջ, երբեմն բուտերի մեջ: Ամենալավ ամանը 40—50 դեկալիտրանոց տակառն է: Համեմայն դեպս, երկաթ-բետոնե ցիստերնները սպիտակ գինու խմորման համար միանգամայն անթույլատրելի են, քանի որ խմորման ընթացքում առաջացած բարձր ջերմությունը վատ է ազդում խմորման պրոցեսի, ինչպես և գինու որակի վրա: Տակառը նախօրոք լավ մաքրում են, ծծմբով ծխում և ապա քաղցուն լցնում: Տակառը լցնելիս, քաղցուին ավելացնում են շաքարատունիկերի մաքուր կուլտուրայի մերան՝ քաղցուի ծավալի $20/100$ -ի հաշվով: Տակառները լիք չեն լցնում, որպեսզի խմորման ընթացքում առաջացած փրփուրը տակառի անցքից չթափվի: 50-դեկալիտրանոց տակառը, միջին հաշվով, 3—4 դեկալիտր պակաս են լցնում: Խմորատունը ռացիոնալ ձևով օգտագործելու համար տակառները դասավորում են 2—4 հարկ: Տակառի վերին անցքի մեջ դրնում են խմորման հատուկ ազուլյց (նկ. 21):



Նկ. 21. Խմորման ազուլյց:

Ազուլյցը պատրաստում են սովորաբար կաղնուց, երբեմն նաև ապակուց: Ազուլյցի վրա ռետինե օղ են անցկացնում, որը փակում է ազուլյցի կողքի երկու անցքը: Ածխաթթու գազը ազուլյցի անցքից դուրս է գալիս, սակայն դրսից օդը տակառի մեջ թափանցել չի կարող: Խմորման ազուլյց չլինելու դեպքում՝ տակառի անցքը ծածկում են քաթանի մաքուր կտորով, կամ խաղողի տերևով, խմորման ժամանակ անհրաժեշտ է ամեն օր հետևել քաղցուի ջերմաստիճանին: Համեմատաբար ցածր ջերմության տակ խմորված քաղցուից ավելի լավ որակի գինի է ստացվում: Այդ պատճառով, եթե քաղցուի

Չերմաստիճանը բարձր է, սպա պետք է միջոցներ ձեռք առնել Չերմության աստիճանն իջեցնելու համար: Սպիտակ գինու խումորման ժամանակ, որպես կանոն, Չերմաստիճանի խիստ բարձրացումը հազվադեպ է պատահում: Ընդհակառակը, գործնականում շատ հաճախ կարիք է դառնում հոգ տանել խմորվող հեղուկի Չերմաստիճանը բարձրացնելու մասին: Այս դեպքում լավ արդյունք է տալիս քաղցուի անբացիան, որը նպաստում է շաքարասուենկերի արագ բազմացմանը, հետևապես և խմորման պրոցեսին: Այդ նույն նպատակի համար, վատ խմորվող քաղցուին ավելացնում են որոշ քանակությամբ բուռը խմորվող քաղցու:

Բուռը խմորումն ավարտվելուց հետո, տակառների գլուխը կցում են նույն տիպի առողջ գինիով: Տակառների գլուխը լցնում են շաքար 2—3 անգամ:

5. ՍՊԻՏԱԿ ԳԻՆՈՒ ՊԱՏՐԱՍՏԵԼԸ ՍԵՎ ԽԱՂՈՂԻՑ

Սև խաղողից սպիտակ գինի պատրաստելը լա՛յն չափով կիրառվում է արտասահմանում՝ Ֆրանսիայում, Իտալիայում, Իսպանիայում և Գերմանիայում: Սև խաղողից սպիտակ գինի պատրաստելու համար, հավաքած խաղողը փոքր զամբյուղներով (արկղներով) գինեգործարան են փոխադրում այնպես, որ պտուղները փոխադրելիս չջարգվեն:

Գինեգործարան բերած խաղողը վերամշակման են ենթարկում ամիջապես: Խաղողը վերամշակելիս պետք է աշխատել, որ հնարավորին չափ պտղի մաշկը շատ չվնասվի, հակառակ դեպքում՝ մաշկից քաղցուի մեջ կանցնեն ներկանյութերը և դաբազանյութերը: Դրա համար խաղողը ջարդելիս, ֆուլուարի գլաններն իրարից համեմատաբար հեռու են դասավորում, որպեսզի պտղի մաշկը, որքան հնարավոր է, քիչ պատուվի: Չարգած խաղողն արագ մամլում են: Մամուլից հոսող քաղցուի առաջին բաժինները համարյա անգույն են: Այդ քաղցուն առանձնացնում են և նրանից սպիտակ գինի պատրաստում: Քաղցուի հետագա բաժինները վարդագույն են լինում:

Սև խաղողից շամպայնի գինի (շամպայնի գինին սպիտակ գույն ունի) պատրաստելու համար, խաղողն առանց ջարդելու արագ մամլում են, քաղցուն վերցնում շամպայն գինու համար:

Իսկ փլուզից ստացվածն օգտագործում են սովորական կարմիր գինու համար: Սպիտակ գինու համար առանձնացված քաղցուն սովորաբար թույլ վարդագույն է լինում, որը սակայն խմորման ընթացքում աստիճանաբար դառնում է դեղին:

Սև խաղողից սպիտակ գինի են պատրաստում նաև քաղցուն ուժեղ անբացիայի ենթարկելու միջոցով:

6. ՍՊԻՏԱԿ ԳԻՆՈՒ ՊԱՏՐԱՍՏԵԼԸ՝ ՔԱՂՑՈՒՆ ՓԼՈՒՇԻ ՀԵՏ ԽՄՈՐԵԼՈՒ ՄԻՋՈՑՈՎ

Սպիտակ գինու պատրաստման այս ձևը լայն չափով կիրառվում է Վրաստանում (Կախեթ) և մասամբ Ադրբեջանում: Կախեթում ջարդած խաղողը չանչի հետ միասին լցնում են կարասները: Այստեղ քաղցուն խմորվում է փլուզի և չանչի հետ միասին, այնպես ինչպես, կարմիր գինիների դեպքում: Կարասի մեջ խմորման հետևանքով առաջացած գլխարկը օրական մի քանի անգամ ընկղմում են քաղցուի մեջ և լավ խառնում: Խմորումն ավարտվելուց հետո, գինին տեղափոխում են մի ուրիշ կարասի մեջ, փլուզը մամլում են և ստացված գինին խառնում առաջինի հետ: Այդ ձևով պատրաստած սպիտակ գինին խիստ տարբերվում է սովորական ձևով պատրաստվածից թե՛ իր համով, թե՛ գույնով և թե՛ բուկետով: Այդ գինիները ընդհանրապես մուգ թեյի գույնի են լինում և շատ տոխպ: Սպիտակ գինու պատրաստման այդ ձևին անվանում են Կախեթի ձեզ:

Արևմտյան Վրաստանում՝ Իմերեթիայում խմորման համար վերցնում են ոչ թե ամբողջ փլուզը, այլ նրա միայն կեսը:

Կախեթի ձևով պատրաստված սպիտակ գինիները համեմատաբար շուտ են պարզվում և բավական կայուն են լինում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	ԱՌԱՋԱԲԱՆ	3
I.	Գինեցեղի դասակարգումը	5
II.	Խաղողի բաղադրությունը և բաղադրիչ նյութերի ազդեցությունը գինու որակի վրա	7
III.	Խաղողի բերեման վախճանը	10
	1. Խաղողի հասունացումը	10
	2. Խաղողի շաքարի քանակը որոշելը	13
	3. Քաղցուրի թթվություն որոշելը	23
	4. Խաղողի բերքահավաքը	28
IV.	Գինեգործական շինությունները և նրանց կահավորումը	30
V.	Գինեգործական ամանները. նրանց խնամքն ու նախապատրաստելը	32
	1. Նոր տակառների խնամքն ու մաքրելը	33
	2. Հին տակառների խնամքն ու մաքրելը	34
	3. Փառակալած և քացախած տակառների մաքրելը	36
	4. Երկաթ-բետոնե ցիստերնաների խնամքն ու մաքրելը	37
	5. Կարամների խնամքն ու մաքրելը	40
VI.	Մծմբային գազի (SO ₂) կիրառումը գինեգործության մեջ	41
VII.	Սպիրտային խմորումը	44
	1. Սպիրտային խմորման էությունը	44
	2. Շաքարատենկերը	46
	3. Շաքարատենկերի ալլատեսակները	48
	4. Շաքարատենկերի մաքուր կուլտուրաները և նրանց կիրառումը	50
	5. Շաքարատենկերի դարձացման և գործունեություն վրա ազդող պայմանները	52
VIII.	Սեղանի կարմիր գինու պատրաստելը	59
	1. Ընդհանուր տեղեկություններ	59
	2. Խաղողի վերամշակումը կարմիր գինու համար	61
	3. Կարմիր գինիների խմորումը	64
	4. Մծմբային անհիդրիզի (SO ₂) կիրառումը կարմիր գինիների խմորման ժամանակ	69
	5. Գինու խմորումը Մեմիչոնի մեթոդով (սուպերբատր)	70
	6. Չաների դատարկելը	71
	7. Փուշի մամլելը	72

	8. Կարժիւր գինու պատրաստելը՝ խաղողը կամ փլուշը տաքացնելու միջոցով	74
IX.	Սեղանի սպիտակ գինու պատրաստելը	75
	1. Խաղողի վերամշակումը սպիտակ գինու համար	77
	2. Մամլելը	78
	3. Քաղցուն պարզեցնելը	80
	4. Սպիտակ գինու խմորումը	81
	5. Սպիտակ գինու պատրաստելը սև խաղողից	81
	6. Սպիտակ գինու պատրաստելը՝ քաղցուն փլուշի հետ խմորելու միջոցով	82

52
52
52
52

Պատ. խմբագիր Լ. Բիւարյան

ՎՖ 12256 Պատվեր 326. Տիրած 1000. տպ. 5,5 մամ. հեղ. 4,1 մամ
Ստորագրված է տպագրութեան
1946 թ. 10 IX

ՀՍՍՌ Մինիստրներին Սովետին կից Պոլիգրաֆ և հրատարակչութիւններ
Վարչութեան № 1 տպարան, Լենինի № 65, 1946 թ.

Վ Ր Ի Պ Ա Կ Ն Ե Ր

	Տպված է	Կարգալ
8	ս. 8 հ. 1 11,5	14,6
9	ս. 2 հ. 7 32,9	32,6
	ս. 6 հ. 10 39,5	39,9
	ս. 6 հ. 11 39,9	39,7
	ս. 6 հ. 12 39,9	39,4
	ս. 7 հ. 1 42,8	42,3
	ս. 7 հ. 10 397	399
	ս. 7 հ. 12 399	394
	ս. 7 հ. 13 399	391
7	հ. 12 (1 ⁰ / ₁₀)	(1 ⁰)
9	վ. 13 խմորվելու	խմորելու
	հ. 6 ՍՍՍԲ	ՍՍՌՄ
	վ. 8 չանջը	չանջը

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0007677

9110. 5 11.

ЦЕНА

11
19805